

ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԱՅՆ ԱՄՍԵԱԿՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Է. ՃԱՐԻ ՀՈԿՏԵՄԲ.ՆՈՅԵՄԲ. ԹԻՒ 10-11

ԲԱՐԷՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբագան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւրոպ կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցումիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞մէ հոգին « մարգմանի », չբուսաւորէր լինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՌԱԶՄԻԿ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լ Բ Ա Գ Բ Ի

ՌԱԶՄԻԿ լոյս կը տեսնէ յառաջիկայ Հոկտ 15/28ին Խմբագրական Սարնի մը կողմէն՝ խմբագրապետութեամբ Ռ. Զարգարեանի. հրատարակուելով իւրաքանչիւր եօթնեակի մէջ Երկու անգամ, Զորեքչարթի եւ Շարաթ օրերը: Անիկա ժամագրավայրը պիտի ըլլայ մտաւորական թարմ ուժերու:

ՌԱԶՄԻԿի նպատակն է.

Ա. Կորովի կամքով մը հետապնդել բոլոր այն Գաղափարները՝ որոնց ծաւալումն ու յաղթանակը միայն կրնան երաշխաւորել մեր ազգային բարեշրջութիւնն ու փրկութիւնը:

Բ. Բարոյական զօրաւոր կապ մ'ըլլալ՝ մէկ կողմէն բոլոր Հայ գաղթականութեանց, միւս կողմէն՝ նոյն գաղութներուն եւ Մայր Հայրենիքին միջեւ:

Գ. Զբաղիլ Պալքանեան հայ գաղութին կենսական խնդիրներովը. այս պատճառով խըմբագրութիւնը աշխատութեան լայն բաժին մը յատկացուցած է այս գաղութին թէ՛ բարոյական եւ թէ՛ սնտեսական պայմանները շօշափող գրութեանց:

Դ. Արձագանքն ըլլալ օտար քաղաքակրթութեանց վերանորոգական շարժումներուն, մասնաւորապէս Պուլկար ժողովուրդին՝ որուն անմիջական գրացնութեան մէջ կը գտնուի Պուլկարահայ գաղթականութիւնը:

ՌԱԶՄԻԿը օրը օրին խնամով պիտի արձանագրէ ազգային ու քաղաքական լուրերը, ինչպէս նաեւ պարբերաբար պիտի ունենայ ընդհանուր քաղաքական տեսութիւն մը եւ մեր առեւտրական ու գործի մարդիկը հետաքրքրող սնտեսական տեղեկութեանց բաժին մը:

Բաժանորդագրութեան պայմաններն են՝ Պուլկարիոյ համար տարեկան կանխիկ 10 ֆր. վեցամսեայ 5 ֆր. Արտասահմանի համար տարեկան կանխիկ 13 ֆր. վեցամսեայ 7 ֆրանք:

ՀԱՍՑԷ. Խմբագրութիւն «Ռազմիկ»ի Ֆիլիպպէ (Պուլկարիա)

Rédaction du journal RAZMIG Philippopolis (Bulgarie)

ԱՆԱԿԻՏ


Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Է. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ

Թիւ 10-11



Յեղային

Տօթը

Անահիտ վերջին յօդուածովս կոչ մը կ'ուզէի մեր բոլոր վանքերուն՝ որ իրենց ձեռագրերուն մէջ անտիպ մնացած հին աշուղական բանաստեղծութեան բոլոր կտորները հրատարակեն։

Պատուրեանի նամակը՝ Անահիտի թիւին լոյս տեսնելէն իսկ առաջ, ինձ իմացուց թէ Ս. Ղազարու միաբանութիւնը արդէն որոշած է՝ Երզրնկոցի գործին յարուցումէն խանդավառուած՝ հրատարակել վանքին ձեռագիրներուն բոլոր անտիպ աշուղական բանաստեղծութիւնները, ինչպէս եւ յիշատակարաններու այն բոլոր մասերը որոնց մէջ կենսագրական ծանօթութիւններ կը գտնուին այդ աշուղներուն վրայ։ Երանի՛ թէ մեր բոլոր միաբանութիւնները — ու մանաւանդ Էջմիածնայ միաբանութիւնը, որ իր արամադրութեան սակ ունի

հայերէն ձեռագիրներու ամենէն ճոխ հաւաքածուն որ կայ աշխարհիս վրայ, — այդ օրինակին հետեւէին։

Իսկ որ հին ձեռագիրները պիտի սկսին քրքուիլ, կ'ուզեմ այսօր ուշադրութիւն հրաւիրել քերթուածներու ուրիշ շարքի մը վրայ, որ նոյն իսկ աւելի քիչ ճանչցուած, հրապարակուած եւ գնահատուած է քան աշուղական բանաստեղծութիւնը։ Կ'ակնարկեմ մեր հին միասիրական բանաստեղծութեան այն խել մը կատրներուն, որոնք անանուն են յաճախ, կամ մերթ բոլորովին անծանօթ անուններ կրող, եւ որոնց մէջ սակայն գեղեցկագիտական գանձեր կան ամենաբարձր արժէքով։ Ատոնք ընդհանրապէս գրաբար են, առաւել կամ նուազ խառնակ եւ անմաքուր, բայց յաճախ նարեկացիական լեզուի յանդուգն ու ջղուտ նրբութիւններով, մերթ ալ՝ չափազանց ողողուած աշուղական լեզուի յատկանշական ձեւերով, առանց սակայն այդ լեզուին հետ նոյնանալու։ Շատերուն գրութեան թուականը անծանօթ է, եւ մասնագիտական ուսումնասիրութիւններ, վաւերագրական խուզարկութիւններ անհրաժեշտ են թուականները ճշդելու համար. ամէն պարագայի մէջ, ատոնք ամենամեծ մասամբ ազահովապէս ժ. դարէն յետոյ գրուած են։ Այդ շահեկան կատրները, որոնց մասին կը խօսիմ, անշուշտ հազիւ հարիւրին հինգը կը կազմեն անհամար կրօնական քերթուածներուն մէջ զոր կը պարունակեն նախնեաց ձեռագրերը. բայց

տրուած ըլլալով որ՝ հակառակ եղած անհուն կորուստին՝ բաւական բազմաթիւ ձեռագրեր հասած են մեզի մեր նախնիքներէն, եւ այդ ձեռագիրներուն ալ ամենամեծ մասը դեռ կոյս կը մնայ խուզարկող աչքերէ, այդ յարաբերական փոքրամասնութիւնը՝ երբ օր մը ամբողջապէս շոկուելով հաւաքուի եւ հրատարակուի, կարող է կազմել շատ գեղեցիկ, ինքնատիպ ու այլազան հայ միսիֆական բանաստեղծութիւն մը: Մեր հին գրաբար բանաստեղծութենէն ինչ որ հրատարակուած ու ծանօթ է, ամենափոքր մասն է մեր նախնեացմէ մեզի մնացած այդ կարգի արտադրութեանց. անոր մէջ իբր առաջին կարգի աստղեր կը շողան Նարեկացիի «Մատան որբերդութեանց»ը, որ արձակ բանաստեղծութեանց հրաշալիքներն է, ու Նարեկացիի վերագրուած «Գանձ»երը. Գրիգոր Մագիստրոսի քերթուածները հետաքրքրական են, նրբամտութեամբ ու յաճախ անուշեղի խրթութիւններով լիցուն, քիչ անգամ ճշմարիտ բանաստեղծութեան շնչովն հասնող: Ծնորհալի քերթուածները երևան կը հաննին զմայլելի արուեստագէտ մը, որ՝ բուն երաժշտութեան մէջ՝ մեծագոյն վարպետը հին Հայութեան, տաղաչափութեան մէջ ալ առաջնակարգ երաժիշտ մըն է. բանաստեղծ ալ է, ճշմարիտ ու քնքուշ բանաստեղծ՝ շատ սողերու մէջ. բայց աստուածաբանութիւնը, վարդապետականութիւնը չափազանց մեծ չափով կը տիրապետեն իր բանաստեղծութեան մէջ, զայն շատ յաճախ չոր ու տիրացուական կը դարձնեն: Միևենոյն բանը կարելի է ըսել գրեթէ բոլոր այն քերթուածներուն համար որ Շարականը կը կազմեն. մէկդի գնիւով ասոնց մէջ գտնուող բազմաթիւ թարգմանութիւնները յուսարէնէ, նկատի ունենալով ինքնազիր կտորները, ասոնց մէջ կը գտնենք հրաշալի սողեր, մերթ գեղեցկաշունչ հատուածներ, բայց ամբողջին մէջ — ինչպէս նոյն իսկ Ծնորհալի քերթուածներուն մէջ — շատ քիչ կտոր կայ որ ամբողջութեամբ՝ զուտ բանաստեղծութիւն ըլլայ (այս մասին աւելի մանրամասնօրէն պիտի գրեմ յառաջիկային՝ Ծնորհալի նուիրուած ուսումնասիրութեան մը մէջ): Արդ, ձեռագիրներուն մէջ կան քերթուածներ, որ, ինչպէս ըսի, հեղինակի անուն չեն կրեր, կամ անծանօթ անուն մը կը

կրեն, եւ որոնք շատ աւելի բանաստեղծութիւն կը պարունակեն քան Ծնորհալի եւ Շարականին քերթուածները: Այդ կարգի բանաստեղծութիւններէն մէկ քանի հատ՝ եւ շատ գեղեցիկներ՝ ատենով հրատարակուած են Բազմալիպի մէջ, բայց ասոնց որոշ գնահատման, եւ կրթիք հատուրի մէջ չամփոփուած, այսօր բացարձակապէս մոռցուած, ինչպէս Մեղեղի Յարութեան Տեսուն, Տաղ Համբարձման Տեսուն, Տաղ Յովհաննու Կարապետի: Ի՞նչ վեհօրէն պատկերաւոր է Յարութեան մեղեղիին սկիզբը.

Յարփահրաշ վեհագունից դասպահս սրովբէց
 Իչեալ փայլակնաբաշ ի գերեզմանն կենսատուն,
 Երգէր նոր զաւետիսն՝ աղապակր,
 Աւետէր առ սուրբ կանայքն, « Զի՞ » խնդրէր ըզկենդանին ընդ
 մեռեալս .

Յարեա՛ Տէր, յարեա՛, աւետի՛ս ձեզ, ո՛վ կանայք:
 Անուամնոցն վեհագոյն պիտն սրովբէց դասպահսն բրովբէլն
 Սրբփայլ զգեստաւորեալ եւ ի գոյն արփոյն պճնեալ,
 Ի պատիւ սուրբ յարուենանն պար առեալ ըզապանաւ:
 Երգէր նոր զաւետիսն՝ աղապակր .
 « Յարեա՛ Տէր, յարեա՛, աւետի՛ս ձեզ, խնդրեբք:

Ի՞նչ հոյակապ տեսիլք մըն է Համբարձման սաղին սկզբնաւորութիւնը՝ Գրիստոսի դէպ երկինք վերասլացումը պատկերացնող (եւ ի՞նչ սողեր),

Սոսկալի ահի պակեան հոյք բոցեղինաց խմբինց
 Տեսեալ մերունակ կերպի ըզՏէր համարձեալ յերկին,
 Երկնամուխ ամպօր լուսոյ հրակերպեան կառօր ճեմալ .
 Փայլին նշուրից ձորձոյն կարմրերփեան քոսօր վառեալ .
 Ա, համբ ծալկ ըանգ պճնեալ, վր մոհու յիբեան ցուցեալ:
 Նոր իմն ահաւոր տեթիլ, խոցուած ըլեռաց տղին . . .

Իսկ Յովհաննու Կարապետին Տաղը, որ հրատարակուած է Բազմալիպին մէջ իբր անծանօթ հեղինակի մը գործ եւ որ շատ հաւանականաբար Նարեկացույ վերագրուած «Գանձեր»ու շարքին(1) կը վերաբերի, հրաշակիբա մըն

(1) Այդ «Գանձ»երը, որ մեր հին բանաստեղծութեան մէջ այնքան ինքնատիպ ու առանձնայատուկ խմբակ մը կը կազմեն, պէտք ունին ըստ իս լրջօրէն ուսումնասիրուելու. և այդ մասին խորճօտն պիտի գրեմ ի մօտոյ. ինչի դռուար կը թուի այդ «Գանձ»երը «Մատան որբերդութեանց» ի հեղինակին գրչէն ելալ ընդունելի. նոյնքան գեղեցիկ են, խուզիչ գեղեցկութեամբ մը, բայց «տարբեր» ոճով:

է. սա հատուածը որ քերթողը կը նկարէ Սո-
ղոմէի պարը Հերովդի առջեւ, գերագոյն ար-
ուեստի էջ մըն է .

Գուտը Հերովդիայ եկեալ դէմ առեալ մողէր աղջիկն ,
Ի խնձոյս իջեալ աղջիկն առաջի մագաւորին .
Հերբըն ծալ ի ծալ առեալ նրմանանեւ արքայ օմին .
Աչօրն ծաւալ ծըփէր ծիրանի ծովու նրման ,
Ուլունքն ի վրայ լանջացն նրմանեալ լիրանց ծաղկանց .
Եւ վարդ վառելով այտուցն , նրմանեալ խայծեալ նրմանց .
Ոտնածայն մնդիւն տաղիցն նոյն եւ ի շարժիլ մատանցն .
Նա դարձդարձեալ մողէր առաջի մագաւորին .
Ճեմս առեալ ճեպուալ ճեմէր , վազս կաքաւիք վազէր :

Մեր հին հեթանոսական Գողթան երգերուն
արևուտ բանաստեղծութեան — զոր կորսնցու-
ցած ըլլալնուս յաւիտեան պիտի կսկծանք —
ասոնք վերապրունն են քրիստոնէական տարագի-
մէջ, անոնց հարագատ շարունակութիւնը: Ի՛նչ
կեանքի ուժեղ զգացում, ի՛նչ ճարպիկ ու նուրբ
վրձին, ի՛նչ վառ գոյներ, ու երանգներ ամե-
նափափուկ. արուեստ մը որ դաստիական է ու
« տեքստան » միանգամայն: Եւ սակայն ահա՛
էջեր, որ անշուք, աննշան, մոռցուած՝ միա-
ցած են հանդէսի մը հին էջերուն մէջ, մինչ
անհունապլս աւելի բարձր են քան հանրածա-
նօթ Շնորհալիին քերթուածները:

Ու հին միասնական բանաստեղծութեանց
այս շարքը շատ աւելի ստուար է քան ինչ որ
հրատարակուած է. անոնցմէ բաւական թուով
օրինակած եմ Ս. Ղազարու ձեռագրերէն, եւ
արդէն Անահիթի մէջ հրատարակած եմ մէկ
քանին, — ինչպէս Վասն սանջանաց դժոխոց
տիտղոսուած արատաովոր քերթուածը, որ՝ հա-
կառակ կրկնութեանց, երկարութեանց՝ կը պա-
րունակէ ամենէն հզօր, ինքնատիպ ու սարսու-
ցուցիչ տողերը որով դժոխքի յղացումը արտա-
յայտուած ըլլայ հայերէն լեզուով .

... Բայց վիրապն այն ահագին եւ գուր անխն սարսափելին,
... Մերձ ի տարեքս հրեղին ծովին, ի խորս ներքին յատակ
ստորին,
... Ի վերուստ բարկութիւն աստուածային որ բորբօքէ զամե-
նեան,
Եւ ի ներքուստ հուր գեհեմին որ յեւ ածէ զմարմին նոցին .
Որպէս ծթուք մարմինը նոցին վուժանակի հըրով լուծին .
... Ի կայծականց վիրայ նիրհն, այս է նոցա միշտ անկողին,
Եւ ի հըրոյ մէջ մաւալին, չար է հանգիստն անձանց նոցին .
Լինի ճայմմունք ի մէջ հնոցին, եւ որոտմունք ահագնագին .

Ամպն է խաւարն աղջամղջին, կայծակն անձրեւ ածէ նոցին .
Եւ պատառի մրմնագին, հոսէ ըզհուրն ի մէջ հնոցին .
Բախմունք հողմոց սաստիկ մնդին, եւ բորբօքէ զբոց հըրատին.
Մարմինըն անանց ի մէջ հնոցին եւ հուրն անշէջ ամենեւին :
... Խի՛ստ լալ աչաց լինի ի հըրոյն, Խի՛ստ ատամանցն կրծը-
տումն,
Խի՛ստ զագրութիւն դիւաց հոտոյն, Խի՛ստ դառնութիւն մեծ
եւ անհուն .
Աչքիւրն ետան ի մէջ բունին, ուղեղն եփէ ի մէջ գանկին,
Լեզուն չորնայ ի բերանին եւ պատառի սիրտն ի փորին :

Աստուցմէ հրատարակած եմ նաեւ վերջին
դատաստանի տեսիլք մը. « Տաղ աղնիւ » անորոշ
տիտղոսով պահպանուած, առանց հեղինակի
անունի, միամիտ ու խորունկ զգացումով մը
պատկերացուած, եւ որ կը սկսի սա տողերով.

Յորժամ Գարբիէլ գոչէ եւ յառնեն մեռեալքն ի հողոյն,
Կէսքն լուսափայլ յառնեն աստեղաց նրման գոյնզգոյն .
Կէսքն սեւերես յառնեն, գլխիկոր ի խիստ ամօթոյն .
Լալի եւ ողորմ ու խելց արտասուեն նրման թուխ ամպոյն :

Անահիթի մէջ հրատարակած եմ նաեւ Սրիկ
կոստանդի մէկ տաղը Գրիստոսի ծննդեան վրայ,
աւելի բառարուեստական քան բանաստեղծա-
կան, բայց որուն մէջ կան քանի մը նուրբ պատ-
կերներ, ինչպէս եւ անձանօթ քերթողի մը մէկ
զմայլիլի սիրերզը առ Աստուածածին՝

Մաքուր եւ սուրբ ըստկանց քոյին փափաքիմ, սեր իմ, փա-
փաքիմ . . .

սրտաշարժ ողբ մը Աստուածածնայ՝ իր խաչուե-
լու տարուած միածնին վրայ,

... Կանա՛յք երուսաղէմացիք, միմէ գորդեակն իմ դուք տեսի՛ք.
Ո՛հ, ըզմանապարհն ինձ ցոյց տայիք . . .
Իսկ նոքա ի ճանապարհին զկամիլքն արեան նշան տային .
Ո՛հ, հեռուստ տեսայ ըզզայլքն ի գառին . . .

ու վերջապէս՝ Պոլսոյ առման վրայ Առաքել
անուն քերթողի մը մարգարէաշունչ ողբը, որ՝
գրականապէս շատ անհաւասար ու մեծ տկա-
րութիւններով լեցուն, ա՛յնքան շահեկան տո-
քիւման մըն է պատմական հոգեբանութեան
սեւակէտով :

Այս թիւին մէջ կը հրատարակեմ նմանօրի-
նակ կտոր մը, Առաքել վարդապետի մը վերագ-
րուած, եւ որ՝ հիանալի էջ մըն է, գերձ չըլլա-

լով հանդերձ կրկնութիւններէ, անհաւասարութիւններէ (օտար ու մեծագոյն ազգերու այդ շր անի նոյնասեռ լաւագոյն էջերն իսկ զերծ չեն այդպիսի թերութիւններէ որոնք նշանակութիւն չունին ամբողջութեան գեղեցկութեանը քով) . ինչ շահեկան, ինքնատիպ ու գեղեցիկ է տաղաչափութիւնը (5+5, 5+3+5), երկրորդ տողի այդ եռալանկ հաստ՝ որ հընդավանկ հասածներուն մէջ մանկով աղ որ անակնկալ մը կը բերէ ականջին, եւ այնքան օրօրուն կը դալձրնէ քերթուածին երաժշտութիւնը . եւ ինչ խորութիւն զգացման, ինչ պատկերաւոր, սակզմած, ապրուած ոճ . քերթուածը ամբողջ կը զողայ, կը նւայ՝ մեղաւոր հոգեոյն Աստուծոյ ահաւոր զատաստանին ներկայանալու սարսափովը . հրաշակի՛րտ մը միջնադարեան մուշ, չորատանջ, նրբադալար, հիւանդոտ, ցնորաւես ու խորազգած արուեստի :

Պէտք է ուրեմն ա՛յս կարգի բանաստեղծութիւններն ալ հրատարակել : Անոնց զտուած հատարածուն օր մը թիւ որոշ տեղը պիտի բռնէ մեր նախնեաց գրականութեան մատենագրարանին մէջ, եւ արժանի պիտի լլլայ շատ պատուաւոր տեղ մը բռնելու համաշխարհային միատիքական բանաստեղծութեան մեջ : Դժուար է պահանջել մեր միաբաններէն, որոնք ընդհանրապէս բանասէրնիր են, այդ զտուած իրենք իսկ ընել . իսկ անոնց՝ որոնք աւելի գիտակցութեամբ պիտի ընեն այդ զուտ գեղեցկագիտական աշխատութիւնը՝ անհնար է պտըտիլ վանքէ վանք եւ այդ երկարատեւ ու բաղմածախս խուզարկումը կատարել : Լաւագոյնն այն է որ մեր միաբանութիւնները հրատարակեն մեր նախնեացմէ մնացած « բոլոր » ոտանաւորները . զրական ուսումնասիրութիւնը, լաւագոյն կատարներուն ընարութիւնը՝ այդ ամբողջական հրատարակումէն յետոյ զիւրին պիտի ըլլայ քննադատի գերը կատարողներուն համար :

Ու հիմա թող ինծի թոյլ տրուի բացատրել այն հիմնական պատճառները որոնք զիս կը մղեն այսքան մեծ կարեւորութիւն տալու հին քերթուածներու հրատարակման գործին : Նախ,

բաղձա՛նքը ամբողջապէս ճանչնալու ինչ որ եղած եւ բրած են մեր նախնիք, — մեր ժողովուրդը, աւա՛ղ, դեռ ա՛յնքան աղէտ է այդ մասին : Ես տառապած եմ, — « տառապած » բուն բառն է, — պատանութեանս շրջանին, անանկով ա՛յնքան նիհար ու աղքատ՝ ինչ որ մեզի ծանօթացուցած էին իբրեւ « հայ » գրականութիւն, ինքզինքս ստիպուած գտնելով մատուցապէս, հոգեպէս, գեղեցկագիտապէս կազմուելու համար հարկ եղած զրեթէ բոլոր տարրերը օտար գրականութեանց մէջ վնասուելու կեղծանական վարժարանին մէջ, հայ գրականութեան պատմութեան գտարնվաղք մը դոյութիւն իսկ չէ ունեցած . վերջին տարուան վերջին մէկ ամսուան միջոցին, մեր բարի Գարագաշեանը շատացու անու՛ններու եւ թուականներու ցուցակ մը մեզի տալով : Տէ՛միրճիպաշեան, որ գրագիտութեան գտան ստանձնած էր, եւ ոչ իսկ օ՛ր մը հայ հին կամ նոր գրականութեան գեղեցիկ էջ մը մեզի կարգալու, վերլուծելու, բացատրելու գազափարը ունեցաւ : Պահ մը — շատ յիշ ժամանակ, — Պերպէրեանը ունեցած ենք իւր գրագիտութեան ուսուցիչ . ան կատարել կարգալու սովորութիւն ունէր, բայց գծազգաբար իր գրածները կը կարգար ընդհանրապէս . . . Մեր նոր գրականութենէն Ալիշանը, Պէշիկթաշեանը, Դուրեանը եւ Պարոնեանը կը ճանչնայի ու կը սիրէի . Բագրատունին հայկաբան մը կը նկատուէր, ճարտար թարգմանիչ մը . ոչ ոք մեզի ըսած էր թէ Հայկի հեղինակը մեծ բանաստեղծ մըն է . հայկաբանութեան գլուխ գործոց մը կը նկատուին Հայլը, զոր ոչ ոք չէր կարգար : Ռուսահայ գրականութենէն քիչ բան գիտէինք . Աբովեանին անունը միայն լսած էինք . իսկ մեր հին գրականութիւնը կը ներկայանար մեզի իբրեւ ճանճրոյթի շեղձակոյտ մը՝ գրական սեսակէտով եւրոպական հրաշակերաններու հետ ոչ մէկ բաղդատութիւն վերցնող էջ մ՛ իսկ չպարունակող : Այս տղիտութեան մէջ մեզ պահպանելու մեծապէս կը նպաստէր նաեւ այդ շրջանին մամուլը, որուն գերակշիռ զէմքն էր Արփիարեանը . Արփիարեան Ռուսահայոց գրականութեան նորագոյն զէմքերէն մէկ քանին արեւմտեան Հայոց ճանչցնելու գովելի ճիգեր ըրած է, բայց այդ ճիգերն ալ ազգային գործիչի

արարքներ կին աւելի քան գեղեցկագէտի աշխատութիւններ. ամէն ինչ որ սուսահայկական էր՝ անխտիր սքանչելի էր ըստ Արփիարեանին՝ լաւն ու յոռին խառնիխառն մեզի կը քչէր միևնոյն մտրեանդ սքանչացումով. իսկ նախնեաց գրականութեան մասին՝ ոչինչ, եթէ ոչ երբեմն՝ ծաղրանքը. Արփիարեան կը կարծէր թէ նորասէր եւ յոռաջրմական ըլլալու համար պէտք է ատել ամէն ինչ որ հին է, եւ Աթէնքի վրայ գրած իր մէկ ու զեւորական նկարագրութեան մէջ՝ Ակրոսդին իսկ իր թեթեւութիւն հեզնութեանը ենթարկած է. Սօսքը չեմ ընել պատուելիական գրիչներու կողմէ « մեր երանելի նախնեաց հոգեշունչ գրականութիւնը » ի պէս արմար գովարանութիւններուն, կամ « Պարոնեանը Արիստոփանի եւ Մոլիերի հաւասար է եւ ժ.Պ. դարու բոլոր եւրոպական երգիծաբաններէն աւելի գերազանց է » ի պէս Գուրգենական ցնորաբանութիւններուն, որոնք սրբանեղութիւն միայն կը պատճառէին ինծի : Այսօր, համոզուած եմ, որ մենք ունինք գեղեցիկ ու ինքնուրոյն գրականութիւն մը, որ առանց անշուշտ բազդատուելու յունականին կամ պարսկականին պէս մեծ գրականութիւններու, ունի սոսանձնայատուկ ու սիրուն գրոշմ, մասնաւոր ոճ մը, բաւական այլազանութիւն, եւ կը պարունակէ կարգ մը կշիւր՝ որոնք իրենց տեսակին մէջ՝ կրնան շատ պատուաբեր կերպով բազդատուել նմանօրինակ օտար բարձրագոյն արտագրութեանց հետ : Այդ համոզումին հասած եմ՝ անձնական երկայն խուզարկումով մը, որուն՝ մասնաւոր առաջին ճիգերուս մէջ՝ զիս շրջապատող գրական միջավայրէն ոչ միայն օգնութիւն կամ խրախուսանք չեմ գտած, այլ ճիշդ հակառակը յաճախ. երբ ապացուցի որ Նարեկացին գրաբարի մեծագոյն բանաստեղծն է, Արփիարեան ելաւ իմաստակ յօղուածով մը ծաղրել զիս եւ նոյն իսկ մեասակար գտնել նոր սերունդներուն այդ վանական մըլած աղօթաբանութիւնները սիրցնել ուզելը(1). եւ սակայն

Նարեկացիի գործը իր գաղափարներուն առողջութեան համար չէ որ գրուած էի, այլ այն գեղեցկագիտական մեծ — եւ հայագրոշմ — գեղեցկութիւններուն համար զոր հոն տեսած էի : Մարդ միշտ սքանչայմամբ պիտի կարգայ Սաղմունները, ոչ անշուշտ անոնց մէջ յայտնուած գաղափարներէն օգտուելու, այլ վայելելու համար անոնց հոյակապ քնարերգութեան հմայքը. այսպէս ալ Նարեկացին, որ մեզի համար՝ ցեղական զգայնութիւն մը, բնիկ ոճ մը զոյց տալու մասնաւոր շահեկանութիւնն ալ ունի : Նարեկացիի դիւսիս յաջորդեցին ուրիշները. եւ իւրաքանչիւր անգամ որ մեր հին կամ նոր գրականութեան մէջ կը յայտնուէր ինծի իմ եւրոպական գեղեցկագիտութեամբ մնած մտքիս սքանչացում պատճառել կրցող տարր մը, հաճոյքս անհուն կ'ըլլար, շատ աւելի մեծ տարբեր կերպով սուր՝ քան այն հաճոյքը զոր օտար հրաշակերտի մը առաջին ընթերցումը կուտայ, որովհետեւ այդ յայտնութիւնները « հայ » գեղեցկութեանց՝ զիս կը միտիմարէին ազգային ուժեղ եւ ինքնատիպ գրականութիւն մը չունենալու գաղափարէն զգացած երբևէ իսոր ցաւէս : Այն բոլոր աշխատութիւնները զոր նուիրած եմ այդպիսի խուզարկումներու ու պիտի նուիրեմ որքան առնն որ կարենամ՝ իրենց նպատակ ունեցած են խնայել ինձմէ կտքը եկողներուն այդ ցաւը, տալ անոնց որոշապէս եւ գիտակցորէն ապացուցուած հաստատումը « հայ » ինքնուրոյն գեղեցկագիտութեան մը գոյութեան, որովհետեւ ոչինչ այնքան կը զօրացնէ ու կը մշտնջենաւորէ ազգի մը սէրն ու համարումը՝ ինք իր մասին, հետեւաբար եւ իր ինքնապահպանութիւնը, որքան իր, ո՛չ-չովինական, այլ առողջ, լուսաւոր ու համոզուած հիացումն ու սէրը իր քաղաքակրթական, գեղեցկագիտական ճիւղերուն նկատմամբ : Խուզարկումի այդ գործը զեռ հետու է ամբողջացած ըլլալէ. զայն կատարողները՝ այնպէս ինչպէս կ'ըմբռնեմ՝ շատ քիչ են. այդ ուղղութեամբ՝ հոյակապ են եւ անհունապէս ուրախատիմ՝ ճիգերը զոր, ինչպէս զիտել տուի արդէն վերջին յօղուածովս, կը նուիրին ՊՊ. Մառ եւ Թորամանեան՝ լիակատարօրէն ապացուցանելու համար ճայ ճարտարակետութեան ու քանդակագործութեան ամբողջ ինքնուրոյն ու չքեղ գեղեցկութիւնը :

(1) Այս յօղուածը գրած պահուս, կը տեսնեմ Շիրակի վերջին Թիւրք մէջ միեւնոյն Արփիարեանին մէկ տխուր ու ցածոգի դատաբեռումը իմ Քուչակի հրատարակութեան. Անահիթի յառաջիկայ Թիւրք հարկ եղածը պիտի ըսեմ այդ քննադատութեան(?) ամբողջ շոշորութիւնը ապացուցանելու համար :

Այդ կարգի աշխատութիւն մըն էր նաեւ՝ ըստ իս՝ Հ. Անդրիկեանի Մամիկոնեանց եւ Փաւստոսի մկախն վերջերս հրատարակած շատ գեղեցիկ եւ ճշմարիտ գրագէտի ձեռքով մը գրուած գրքոյկը, որուն մեծ արժանիքը դեռ ոչ ոք ի վեր հանեց. Հ. Անդրիկեան առաջին անգամ ըլլալով ցոյց տուաւ թէ Փաւստոսը շահեկան ժամանակագրութիւնէ մը շատ աւելի կարեւոր գործ մըն է, տեսակ մը պիւցարհան վէպ է, գրական մեծ նշանակութիւնով. Հ. Անդրիկեան ուրուագծած էր միայն այդ գաղափարը, որ պէտք է օր մը մանրամասնօրէն արտայայտուի՝ յատուկ ուսումնասիրութեամբ. բայց զիւտին հրապարակումը իրն է, եւ ո՛վ ալ այսուհետեւ գրականօրէն ուսումնասիրէ Փաւստոսը, պարտաւոր է յիշել Հ. Անդրիկեանին կարծիքը: Արդէն սպուած գործերու մէջ՝ դեռ քանի մը յայտնութիւններ ալ կան ընկիւր. բայց անտիպ ձեռագիրներուն մէջ է որ ամենէն աւելի պէտք է փնտռել նոր յայտնութիւններ: Պէտք է վաղուան սերունդներուն տալ հայ գրականութեան լիակատար պատմութիւն մը, զօր զեռ չունինք, եւ տալ անոնց « հայ հեղինակներու » խնամոտ ու մեթոտաւոր եւ ուսումնասիրութիւններով լուսաւորուած հրատարակութեանց ամբողջական եւ աժանագին շարք մը, ինչպէս ունին բոլոր եւրոպական ժողովուրդները: Մէկ մարդու գործ չէ այդ: Ատոր պէտք է աջակցին Էջմիածնի, Վենետիկի, Վիեննայի, Երուսաղէմի Միաբանութիւնները, ինչպէս եւ նորայր Բիւզանդացիի պէս բազմահմուտ անձնաւորութիւններ, ու ճշմարիտ քննադատական զգացում ու հմտութիւն ունեցող գրագէտներ: Ատիկա անհրաժեշտ է ոչ միայն այն « ազգասիրական » տեսակէտովը զոր վերեւ պարզեցի, այլ եւ, — ու հոս ահա կը պարզեմ հին ձեռագիրներու հրատարակման տուած տարապայման կարեւորութեանս երկրորդ պատճառը, — որովհետեւ մեր վաղուան գրականութիւնը « ցեղային գոյնով » շատ աւելի « ազգային ինքնատպութիւն » պիտի ունենայ քան այսօրուան մեր գրականութիւնը, երբ մեր յաջորդները իրենց մտքին ու ճաշակին կազմութեան առաջին շրջանէն իսկ՝ համաշխարհային գրականութեան ծանօթանալէ առաջ՝ « հայ » գրականութիւնն ու արուեստ-

տը կատարելապէս ճանչնան եւ սողորուին անոր ինքնայատուկ գոյնովը ու համովը: Անշուշտ, մարդ շատ լաւ կարող է — ինչպէս զիտել կուտայի վերջին յօդուածիս մէջ, — մեծ գրագէտ ըլլալ՝ առանց ցեղային գրոջ՝ իր մէջ որոշապէս եւ հզօրապէս շիշտուած ըլլալու. ստոր համար՝ պէտք է « հանճար » ունենալ, անձնական ուժեղ սակզմագործ կարողութիւն մը: Գորնէյլ ու Ռասին Ժէ. դարու Փրանսային մեծագոյն գրագէտներէն են, բայց Փրանսական ցեղային բուն նօթը չէ որ կը հնչէ անոնց մէջ. առաջինը ունի լատին ու սպանիական տարրեր, երկրորդը յունական տարրեր. այդ նօթը գանձու համար՝ պէտք է կարգաւ զմայլելի Լաֆօնթիւնը:

Ամենէն ինքնատիպ եւ անկախ հանճարներն իսկ բնականաբար չեն կրնար բոլորովին զերծանիլ իրենց ցեղին ու միջավայրին ազդեցութիւնէն, եւ զայն որոշ չափով մը՝ բնազդաբար՝ կը ցոլացնեն. բայց անոնք ամէն բանէ առաջ իրենց անհատական հոգին կ'արտայայտեն. տուն մագրոջմ՝ գրագէտները կ'արտայայտեն թէ՛ իրենց հոգին եւ թէ իրենց ցեղին հաւաքական հոգին, եւ ատով կրկնապէս շահեկան են: Եթէ անգլիական ու գերմանական բանաստեղծութիւնները աւելի բարձր են՝ իրր ճշմարիտ բանաստեղծութիւն՝ քան Փրանսականը, զլիսաւոր պատճառը թերեւս այն է որ գերման ու անգլիացի բանաստեղծները, նոյն իսկ մեծագոյնները, միշտ սերտ կապ պահպանած են իրենց ցեղին աւանդական ներշնչմանց հետ, ժողովրդական քնարին հնչիւններուն երկիւղածօրէն մտիկ ըրած են՝ իրենց անձնական տուելը լաւելէ առաջ, մինչդեռ Փրանսական բանաստեղծները՝ որ ԺՆ. ԺՁ. դարուն, Վիյեոնի եւ Ռոնսարի սիրուն չրջանին, այդ կապն ունին ժողովրդական գանձարանին հետ, Ժէ. դարու Մալերպներուն ու Պուալօներուն ազդեցութեան տակ՝ զայն խզեցին, ու ԺԹ. դարու իրենց հոյակապ վերանորոգումը ունենալու համար՝ անգլո-գերման բանաստեղծութեան ազդեցութիւնը կրկու պէտքն ունեցան: Մեր նոր գրականութեան մէջ, Բաֆֆին խոշոր տեղ մը կը բռնէ, բայց զուտ « հայկական » գեղեցկապիտական նօթը ի զուր պիտի փնտռէք իր մէջ: Արովանային մէջ է ան, հնչելով հոն ամենէն հարուստ,

ամենին հօր, ամենին սուր ու պաշտելի ձե-
 ւովը որ շուսած ըլլայ արդի Հայութեան մէջ .
 Արովեանէն յետոյ, Պոսղեանին քով կարելի է
 գտնել զայն, եւ նորագոյններուն մէջ՝ Ահա-
 րոնեանին եւ Ա. Իսահակեանին : Արեւմտեան
 Հայոց մէջ, Բագրատունին գրական հսկայ դէմք
 X մըն է, բայց իր Հայրը լեզուովը միայն «հայ» է,
 եւ ո՛րքան ճոխապէս հայ. շարադրութիւնը, ոճը,
 գեղեցկագիտութիւնը մեծագոյն մասամբ եւրո-
 պական են, թէպէտ սքանչելի, որովհետեւ
 հանճարի ծնունդ : Պէջիկթաշեան, Թէրզեան
 սքանչելի քնարերգակներ են, շատ քնքուշ ու
 որոշ անհատականութեամբ, կատարեալ սը-
 ուեստով, բայց հայկական բուն հոթը չեն տար.
 Դուրեան՝ որ ոչ աշուղները կարգացած է, ոչ
 ժողովրդական երգերով զրազած, ոչ նախնեաց
 մատենագրութիւնը ուսումնասիրած, բնագո-
 րէն «Հայ» է. իր քնարերգութիւնը՝ որուն մէջ
 ժողովրդական զգայնութեան, լեզուի, ոճի այն-
 քան խոր շեշտ մը կայ՝ աշուղներու քնարի-
 րութեան հետ ներքին խորհրդաւոր առնչու-
 թիւն մը ունի . Դուրեան Պոլսահայոց աշուղն
 է, Վոսիորի Գուշակը, — ինչպէս Պարոնեան՝
 Պոլսահայոց բնիկ ժողովրդական սրամտութեան
 արտայայտիչը : Ալիշան ունի՝ խառնուածքով՝
 հայկական զրոշմ, զոր զիտակցարար զարգա-
 ցուցած ալ է՝ հին աշուղները կարգալով : Նո-
 րագոյններուն մէջ, Թլկապինցին ու Զարգար-
 եանը, հայ հողէ բուսած ծաղիկներ են, զուտ

հայկական հոյզով զեղուն :
 Յեղական բնիկ նկարագրով հարուստ գրա-
 գէտներու բազմապատկումն է որ մեր գրակա-
 նութեան պիտի տայ ինքնաղուխ, անկախ,
 անհատադրոշմ գրականութեան մը զօրութիւնը.
 օտարներուն՝ մեր գրականութիւնը գլխաւորա-
 պէս ստո՛վ է որ յարգելի ու հետաքրքրական
 պիտի դառնայ, որովհետեւ իրենց գրականու-
 թեանց առաւել կամ նուազ յաջող ցոյքն եղող
 հայ էջեր — ինչպէս են այս վերջին շրջանին
 մէջ երեւան եկող գրագէտներէ շատերու գրու-
 թիւնները — ոչինչ ունին շահեկան Եւրոպաց-
 ւոց համար, քանի որ անոնք այդ ցոյքերուն
 հոյակապ բնատիպարներն ունին : Մեր հին գրա-
 կանութիւնը՝ — ինչպէս է ժողովրդական բա-
 նաստեղծութիւնը — իր ամբողջութեամբ ճանչ-
 նալ, անոր մէջ որոշել ամէն ինչ որ ինք-
 նուրոյն է եւ ուժեղ, ուսումնասիրել զայն եւ
 տողորուել այդ «մերը» եղող տարրով, ջանալ
 որ մեր վաղուան գրականութիւնը՝ մտածմամբ
 հետզհետէ աւելի եւրոպական ըլլալով հանդերձ՝
 իր ձեւին մէջ հետզհետէ աւելի ազգային կնիք,
 ցեղական համ ու հոտ ունենայ, աշխատի է
 ոչ միայն մեր գրականութեան զօրացման ու
 ճոխացման, այլ եւ, հաստատելով մեր մտաւոր
 ու գեղեցկագիտական ինքնօրինութիւնը, նպաս-
 տել է յաջողմանը մեր ազգային դատին :
 Ա. ԶՊԱՆԵԱՆ



Կոթողներու կարօտը

Ա.

Փարիզի կոթողը

Ապաղուզուած կոթող, ես այս
 Հրապարակին վրայ կ'ձանձրանամ .
 Զիւնը, եղևամը եւ անձրիւն
 Փանգոտ կողերս կը գառեցնեն :

Եւ հին ասեղրս, կարմրած՝
 Հրուտ երկրնքի մը հնոցներէն,
 Կ'առնէ գալուկ մը կարօտի՝
 Այս անկապոյտ երկնքին մէջ :

Առջեւը վէս հսկաներուն
 Լուքսորի եւ պիւլոններուն,
 Քոնի իմ եղբօրս վարդերանգ,
 Ինչո՞ւ կ'անգնած չեմ տակաւին :

Այն անիտիոխ կապոյտին մէջ
 Կարմիր բրդիկըս սուղելով,
 Եւ աւազին վրայ՝ արեւուն

Գրելով քայլերն իմ ըստուերովս :

Ռամսէ՛ս , օր մ'իմ զանգուածըս սէգ
Ուր յաւիտեանը կը սղոցուէր ,
Խոտի մը պէս կտրած՝ ինկաւ ,
'Ի ըրաւ Փարիզ զայն խաղալիք :

Պարեկապսնը կրանիտէ ,
Հսկայութեանց պահապանը ,
Կեղծ հին տաճար մ'ունի հիմայ
Մէկ կողմն ու « Շամպր »ը մէկալ զին :

Լուի Սէզի կառափնատին
Վրայ՝ մենաքար իմաստազուրկ ,
Դրին իմ գաղտնիքս , որ մոռացման
Կը կշռէ հինգ հազար տարի :

Ճնճղուկներ գլուխըս կը ծրտեն ,
Ուր՝ թռած ատեն՝ կանգ կ'առնէին
Անզգարծիւն ու իրիսը վարդ ,
Ճերմակփետուր , ոսկեմազիլ :

Սկնն , ալան սե՛ւ փողոցներու ,
Աղտուղիներով շինուած պիղծ գետ ,
Կը լղրրճէ ոտքըս զոր ջրահայր
Նեղոսն՝ յորդած՝ կը համբուրէր ,

Նեղոսն հսկայ , ճերմակօրուք ,
Գլուխը լողոս եւ կրնիւններ ,
Հոսելով ծռած իր սափորէն
Կոկորդիլներ ձկներու տեղ :

Սատափազարդ կառքերն ոսկի
Երբեմնի մեծ փարձոններուն
Կ'անցնէին շուրջս . հի՛մայ՝ վերջին
Արքան տանող կառքն հասարակ :

Ատենով , հին քարիս առջեւ ,
« Փչենթ »ը զլուխին՝ քուրմերը սուրբ ,
Միտիկ « պարի »ն կ'թափօրէին ,
Ոսկի նկարէն նշանակներով :

Մինչդեռ հիմայ , մոյթ մ'եմ անսուրբ ,
Կանգնած երկու աղբուրի մէջ .
Բոզին անցնիլը կը տեսնեմ
Իր կառքին մէջ թիկնատարած :

Կը տեսնեմ անդըր՝ յունուարէն
Մինչ ղեկտեմբեր՝ պուրժուաներուն ,
Սողոններն որ « Շամպր »ը կ'երթան ,
Եւ Արթիւրներն որ կ'երթան « պուա » :

Օ՛հ , ի՛նչ արդեղ կմախքներ հարիւր
Տարիէն ցոյց պիտ' տայ այս խնդ
Ազգն ամբարիշտ , որ աներիգ
Կ'պառկի դամուած ճաղերու մէջ ,

Եւ որ փրտումը արգիլող
Գեանադամբան անգամ չունի ,
Ննջարաններ ուր սերունդներն
Իջնեն թաղուին դար դար շարուած :

Նըչանագրոց հո՛ղ սրբազան
Ու քրմական գաղտնիքներու ,
Ուր ըսփինքաներն մագիլներին
Պատուանդանին ծայրը կը սրեն ,

Ուր կը հնչէ նկուզն ոտքիդ տակ ,
Ուր ճուռակն իր բոյնը կ'իխտէ ,
Կ'ողբամ քեզ , հի՛ն իմ Եզրպոսս ,
Կըրանիտէ արցունքներով :

Բ.

Լուստրի կոթողը

Դէմն անհունին , յաւերժակսն
Միայնութեան մէջ կը հսկեմ ,
Ես՝ մէկ հատիկ պարեկապան
Այս աւերուած մեծ քաղաքին :

Հորիզոնին վրայ անսահման ,
Համր անապատն , ամուլ , անվերջ .
Արեգակին տակ անզրւարթ՝
Դեղնած պատանքն իր կ'տարածէ :

Երկինքը՝ մերկ հողին վերեւ ,
Անապատ մ'ան ալ կապոյտի ,
Ուր երբեք ամպ մը չի ծրփար ,
Անզրթօրէն ջրիջ՝ կը փոռի :

Նեղոսն որուն մորթը մեռած
Կապար փառով կը կլայեկուի ,

Ձիագիւնէն խորշոմտած ,
Կը շոշայ շեշտ լոյսի մ'տակ չոր :

Ու որկրածէս կոկորդիլներն
Կզղեակներու հրուտ աւազին
Վրայ՝ պատեաննուն մըջ կէս-եփած ,
Հեծկըլաալով կը նըւաղին :

Բարակ ոտքին վըրայ՝ անշարժ ,
Իբիսը , կտուցը կուրծքին մէջ ,
Ծայրը սիւնի մ' կը վերձանէ
Թոթի գրուածքը սրբազան :

Կը մըլաւէ շընագայլը ,
Կը ծիծաղի բորէն . քաղցած ,
Կը ճլայ ճակուռն օղապըտոյտ ,
Սեւ ստորակէտ վառ երկնքին :

Բայց շըշուկներն այդ մենութեան
Կը ծածկըլին յորանջուովն
Ըսփինքաներուն , յոգնած՝ դիրքէն
Ձոր կը պահեն միշտ անփոփոխ :

Արդիւնք ճերմակ աւազներուն
Շուրին ու միշտ փայլող արփույն ,
Արիւնքի սփլին լուսաւոր ,
Քեզ ո՞ր ձանձրոյթ կը բազդատուի :

Դուն տափերնուն վրայ խոնջ ինկող
Թագաւորները յափրացած
« Աման » պռուչ կը ստիպէիր ,
Ու կ'ճնշես զիս ծանրութեանդ տակ :

Երկնքին չոր աչքէն երբեք
Հոս հոմն արցունք մը չի սրբեր .
Ու ժամանակն , յոգնած , լըռին
Պալատներուն վրայ կը յենու :

Ոչ մէկ արկած չ'այլայլեր դէմքն
Յաւերթութեան . այս մշտափոխ
Աշխարհին մէջ , լոկ Եգիպտոսն
Անշարժութեան վրայ կը գահէ :

Իբր ընկեր ինձ ու բարեկամ ,
Երբ ձանձրոյթի նոսրաս կուզայ ,
Կան Ֆելլաններն ու մոմեաններն ,
Որ դարակից են Ռամսէսին :

Կը դիտեմ մոյթ մ'որ կը ծըռի ,
Մերուկ հսկայ մ'անդիմագիծ ,
Եւ նաւակներն ճերմառագաստ
Որ նեղոսին վրայ կ'ելէ շեն :

Ի՞նչ կ'ուզէի , եղբորս պէս ,
Մեծ Փարիզին մըջ փոխադրուած ,
Ձըւարճանալ , քովիկն անոր ,
Հրապարակի մը վրայ անկուած :

Ողջ փողովուրդ մ'ան կ'տեսնէ հոն
Կանգ առնել իր քանդակներուն
Առջեւ , գրուածք նըր իրական
Ձոր կ'հեգէ միտքն երազելով :

Եւ աղբիւրները , քով քովի ,
Փոշին վրայ իր կրանիտին
Կը նետեն մէզն իրենց երփնոտ .
Կարմիր է ան , կը ճահիլնայ :

Եւ սակայն ինձ պէս Սիէնի
Կ'ելլէ ան վարդ երակներէն .
Բայց ես հին տեղըս կը մընամ .
Անիկա ողջ է , ես մեռած :

Քարգ. Ա. 2. ԹէՆՅԻԼ ԿՈԹԻՆ



ՄԱՆՏՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ

Գտիչ այբուբենի , թարգմանիչ ,
աւեսարանող եւ մատենագիր



Գրքի առաջին ափսոսանք թարգ-
մանութիւնը — հաւանօրէն
առձեռն պատրաստ գտնուած ասո-
րական բնագիրներէ — կատարուե-
լուն պէս , Մաշտոց կը դառնայ բո-
վանդակ Հայաստանի աւետարանումին՝ իր

սկզբնականն նպատակին գործադրութեան, եւ կը սկսի իր քարոզչութեան երկրորդ շրջանին, զոր այս անգամ սխտեմաւոր կատարելութեամբ զլուխ հանելու համար կը կարգադրէ որ Տէր եպիսկոպոսն ի Կայնականն, եւ նա (Մաշտոց) ի սփիւռս հեթանոսաց զբանն կինաց սերմանիցն »: Այս « Կայնականք » խորհրդաւոր բառը շատ մտքեր շփոթեցուցած է, եւ կարծեմ դոհացուցիչ բացատրութիւն չէ ստացած ցարդ: Փորձուքալ փաշա իր « Եղիշէ »-ին մէջ այս բառին մէջ ցեղի մը անունը կը գտնէ, Պարոնեան հասարակ անունի տեղ աննելով՝ կայան (իբր հոգեւոր տեսչութեան տեղ) բառն անանցեալ կը համարէր: Իսկ Ֆրէսէրիք Մաքլէր՝ Սեբէոսի Գ. գլուխին մէջ ասոր հանդիպելով կայէն ձեւին տակ՝ կը շատանայ յատուկ անուն ձգել զայն իբր վերագիր Պարսկաց կոստով թագաւորի հօր, եւ կը թարգմանէ se nommait Kayen: Սակայն պարզ է թէ կայէն=կայեան, եւ կայեան է Սասանեան-Պահլաւի բառ, ու կը նշանակէ « թագաւորական » (farrahi kayanik= թագաւորական փառք): Մաշտոցի ծրագիրն էր ուրեմն Հայաստանի թագաւորական կամ թագաւորանիստ կողմերուն աւետարանելու հոգը յանձնել Տէր (զոր պէտք չէ շփոթել կործան գաւառն Տիրայրի հետ) եպիսկոպոսին, եւ ըստանձնել ինքը՝ հեթանոսաց կողմերու քարոզչութիւնը: Զարմանալին եւ նշանակելի կէտը սա է միայն թէ Մաշտոց հեքսաճոսաց քարոզչութեան սահմանին մէջ կը գնէ ու նախ կ'այցելէ իր « առաջին դաստակերտ » Գողթն գաւառը, ու Սիւնեաց գաւառը, եւ յետոյ կ'անցնի Վրաց կողմերը: Ասոնց ալ նշանագիրներ կը յօրինէ « ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ » եւ հաւաքել տալով պատանիներ՝ կրօնական ուսուցում կուտայ անոնց, եւ լուսաւորելով ամբողջ Վրաստանը, կը դառնայ Հայաստան:

Հոս պտոյտ մը ընելով աչքէ անցընելէ յետոյ զպրոցները եւ աւետարանչական գործը, եւ ամենուն իր պատուէրները ու խրատները տալէ յետոյ, կը դարձնէ ուշադրութիւնը ազգին միւս մասին որ Յունաց բաժինը եղող Հայաստանի մէջ կը գտնուէր: Շատ աշակերտներով կ'անցնի հոն, եւ շնորհիւ իր տարածուած համբաւին կը գտնէ վայելուչ ընդունելութիւն իշխանաւոր-

ներէ, եւ կը քաջալիրուի երթալ Կ. Պօլիս, ներկայանալ Թէոդոս (փոքր) կայսեր եւ Ատալիկոս կաթողիկոսին Յունաց բաժնին մէջ ալ ուսուցանելու համար հարկ եղած հրամանը ըստանալու: Արդարեւ Յունաց քաղաքականութեան նպատաւոր չէր կրնար ըլլալ որ իրենց բաժնին Հայաստանի մէջ գտնուող Հայերը նուազ քաղաւոր մնային քան Պարսկաց զերիշխանութեան տակ գտնուող Հայերը՝ իրենց տառերով, զպրութեամբ եւ զպրոցներով: Հրամանը կը տրուի իրեն սարգեններով եւ պատիւներով՝ Բիւզանդիոնի արքունիքէն եւ հայրապետէն, բայց խոստում անուսելով Մաշտոց որ « ժանտագործ բարբարոս » մաս մը ազգին մէջն կամ դարձուի ուղիղ հաւատքի, կամ անհետ խլուի հանուի: Մոլեանդ Բիւզանդիոնի այս գոնացումը տալ չդժարեղաւ Մաշտոց իր անձկալի նպատակին օգնութիւն աննելու համար կայսեր « անընդդիմակաց հրաման » որուն հետ միասին կայսերական նշաններով սակրները հետը բերած ազատօրէն կը գործածէ այնուհետեւ Մաշտոց յունական բաժնին մէջ, պատգամաւորներ կը զրկէ ամէն կողմ աշակերտներ հաւաքելու, զպրոցներ բանալու, պատեհ տեղեր հասոյթներ կապելու անոնց, եւ իր ուսուցումը տարածելու:

Յետոյ կը ձեռնարկէ Մաշտոց իր փառաւոր կեանքի անպատուարի միակ գործունէութեան, այն է Բարբարիանոս կոչուած աղանդի հետեւողները ուղղութեան բերելու, որ ինչպէս ամէն կրօնի կամ գաղափարի վրայ ճնշում բանեցնելու փորձի մէջ՝ կը յանգի զօրաւորին կողմէ բիրտ եւ անողորմ բռնագատութեան, տանջանքի, հալածանքի, նոյնը եղաւ այս պարագային մէջ: Աղանդաւորները — կամակոր ինչպէս կ'ամբաստանուին — պատրաստակաւ նութիւն ցոյց չտուին Մաշտոցի ըմբռնածին պէս ուղղութեան գալու, եւ Մաշտոց համոզիչ խրատները թողլով՝ ձեռք առաւ ուրիշ անպատասխանելի փաստեր, ինչպէս պատիժ, բանտ, տանջանք, գելարան, խորտակել, այրել, մուրով նշան դնել, եւ տեսակ տեսակ խայտառակիչ միջոցներ, եւ այսպէս երկրէն անհետ ըրին: Դժուար է Կորիւնի մութ նկարագրութենէն որոշել թէ ինչ աղանդ էր այս որ իր վրայ հրա-

ւերած էր Բիւզանդիոնի ատելութիւնը , եւ որ Մաշտոցը տխուր գործիքն ընել տուաւ իր զայրուցքին : Բրօֆ. Կոնիքեր Նեստորականներ կը համարի այդ աղանդաւորները , եւ նշանակելի պարագայ մը կը նկատէ Հայոց մոլեռանդ վերաբերումը այլակրօններու հետ նոյն այն դարուն որուն մէջ այնքան ծանր պատուհաս մը պիտի ըլլար իրենց զլխօն կրակապաշտ Պարսից մոլեռանդութիւնը : Բայց սպանովապէս սխալ է բրօֆ. Կոնիքերի ենթադրութիւնը : Կորիւն այդ տեղ չ'ակնարկեր Նեստորականներու , քանի որ յիշ մը ետքը կ'ակնարկէ այդ աղանդը աւելի բաղայայտ իբր « աւանդութիւնք առն ուրումն հռոմի , որում Թւողիտս (Թէողորոս ?) անուն » : Ընդհակառակն , միւս աղանդաւորներուն տուած բարբարոս յորջորջումը (բարբարիանոս=բարբարոս , ինչպէս մագիստրիանոս=մագիստրոս) եւ « ժանտագործ » մակդիրը զոր Բիւզանդ (Գ.Գ.) քուրմերու կուտայ , եւ որուն զրեթէ հոմանիշը « պղծագործ » Ագաթանգեղոս ալ կը գործածէ քուրմերու համար . հաւանական կ'ընեն թէ այդ աղանդը չէր հոռոմ կորովամիտ եւ ճարտարաբան աղանդապետներէն մէկուն վարդապետութիւնը , այլ հին հեթանոսութենէ մնացած եւ բարբարոսական բարքեր պահպանող աղանդ մը : որուն նման բարքերու հետեւողներ տեղ տեղ մնացած էին բաւական թուով ինչպէս կ'երեւի Բիւզանդէ (Գ. Գ.) : Բայց մաթը կը մնայ թէ ինչպէս մինչեւ մեծն Բիւզանդիոն հասած կը ասոնց համարը , եւ անոր ատելութիւնը հրաւիրած : նշանակելի է որ փոքր Կորիւնի մէջ Բարբարիանոս բառը եղած է Բորբորիանոս , որ իր կարգին սերտ առնչութիւն կը ցուցնէ Խորենացի « բորբորիա » ածականին հետ (իբր հեշտասէր կամ պղծագործ նշանակութեամբ) զորմածուած Շամիրամի համար (« բորբորիան Շամիրամ ») , որով հաստատութիւն կուտայ ենթադրութեան թէ կանանց հետ անխօփր խառնակութեան հեթանոսական հին բարքերու կ'ակնարկուի աղանդին տրուած այդ բարբարիանոս կամ Բորբորիանոս յորջորջումով :

(Շարունակելի) Գ. ՓԱՌՆԱԿ



Հայ Էջեր

Տ Ա Ղ

ՅԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍՍՅԵԱԼ

Վասն հոգեվարի

Այլք իմ ծովաղեալ , գետք յինն հոսեալ ,
Յանկ համբաւէն զըժոխոց որ ինձ կայ պահեալ :

Բերանս իմ կարկի , բանք լեզուիս սպառի ,
Ի յանէ մահուան զըժոխոց եւ դատաստանի :

Գոյնքս յինն քաղի , լոյսըս խաւարի ,
Մարմինս դառնալոց է ի հող ի յերկրի փոշի :

Գողալով սարսիմ յանէ հրեշտակին ,
Որ զհոգիս հանէ քակտելով յոր հոգեվարին :

Երկունք ցաւագին մահու զիս կալցին ,
Սարսափմամբ հալիմ կսկիմամբ յանէ կոչողին :

Զարմանք զիս ունին , յետ մահուան ժամին ,
Զօգնէ սիրելի ոչ եղբայր յոր հոգեվարին :

Եկեալ հրեշտակին՝ աւանդել զհոգին ,
Ահակերպ զիմօք զարհուրմամբ ինձ երեւեցին :

Ընդ նոյն հրեշտակին՝ այլ հրեշտակք յայտնին ,
Գիմօք զանազան 'ւ ահակերպ հոգոյն երեւին :

Թողեալ ըզմարմին տանին ըզհոգին ,
Ափշկալ հիանայ զարհուրեալ ի ճանապարհին :

Ժամ հասեալ նրմին երկամբք ցաւագին ,
Ժողովեալ զիւաջն ընդ հոգոյն յոյժ պատերազմին :

Ի յօղըս վերին խաւարեալ տեղին ,
Դասք դասք ժողովեալ բարկութեամբ ընդ հոգւոյն կռվին :

Լան եւ մորմոքին , բարկութեամբ ի լին ,
Մեծ կսկծանօք հառաչեն եւ փռչմանին :

Խաղալով նոցին ընդ գերեալ հոգին ,
Չար գաղանքն այսօր կատաղեալք ի վերայ նո-
րին :

Ծափ տալով նոցին ի վերայ նորին ,
Ասեն թէ՛ Տեսաք մենք զարկած գործոց մեր ի
դմին :

Կացեալ ի միջին , չըւարեալ հոգին ,
Ի վեց կողմանէ պաշարեալ վեց շարժմամբ չա-
րին :

Հոտքըն զազրագին ի դիւաց բուրին ,
Հոգին տաղտկացեալ ի հոտոց գարշութեան
նոցին :

Ձայնիւ սաստկազին որոտան նոքին
Որպէս ըզճայթմունք ի յամբոց գոչելով նոցին :

Ղօղանջն նոքին զաղաղակ չարին ,
Ձգործ չարեաց տեսաք մեք ի դմա , դա է մեր
բաժին :

Ճիչ ձայնից նոցին զխելք հոգւոյն տանին ,
Որպէս մոմ հալեալ նըւաղի այն գերեալ հոգին :

Մրմռեալ նոցին՝ ընդ հոգւոյն կռուին ,
Որպէս կայծակունք հրրո՛յ ընդ հոգւոյն հոսին :

Յետ 'ւ առաջ կովին , յաջ 'ւ անեակ մրցին ,
Ի վեր եւ ի վայր պաշարեն զայն խղճուկ հո-
գին :

Նոր չարքս որ յայտնին չէ եղեալ բնաւին ,
Կատաղեալ գաղանք այլակերպ եւ գէմքն անա-
գին :

Շող ցոլայ հրագին ըսնգաց նոցին ,
Որպէս բոց վառեալ բորբոքն զմոլորեալ հոգին :

Ողբալով հոգին կսկծմամբ յոյժգին ,
Մորմոքեալ զոչէ հառաչմամբ ձայն ողորմագին :

Չեմ տեսեալ բնաւին հանց չար անագին ,

Կատաղեալ գաղանքս որ այսօր զիս պաշարեցին :

Պէտպէս գէմք նոցին հալին ըզհոգին .
Դասք սատանայի եւ դիւաց քաջանց եւ ալին :

Ձահ վառեալ նոցին ի մէջ խաւարին
Պէտպէս երեւմունք ցուցանեն ի ճանապարհին :

Ռամիկ այն հոգին յետ պատերազմին
Որպէս մոմ հալեալ լինիցի ի յահէ նոցին :

Սաստեալ հրեշտակին չար դիւաց դասին ,
Հանէ զայն հոգին ի կայանս ուր հոգիք պահին :

Վերացեալ հոգին տեսանէ զնոսին
Դասք դասք ժողովեալ 'ստ արժանեաց զոր ինչ
գործեցին :

Տեսանեն նոքին զայն գնացեալ հոգին
Շուրջ պատեալ ողբան զմեղաւորն յայն հրա-
պարակին :

Բամք հոգւոց դասին անգրք ժողովին ,
Շուրջ եղեն կոծողքն՝ ասէ Գիրքն՝ յայն հրա-
պարակին :

Ցաւակցեալ նոքին՝ կոծեն ըզհոգին ,
Դու եկեր այսօր , ո՛վ գերի , պատմէ Եսային :

Իիւսեալ ընդ նոսին՝ ձայնակցի նոցին .
Հառաչմամբ ողբան մինչեւ յօ՛րըն դատաստանին :

Փակեալ է նոցին դուռն առագաստին ,
Մորմոքմամբ զոչեն կսկծմամբ եւ ոչինչ չահին :

Թուն մահու նոցին տանջէ ըզնոսին ,
Վա՛յ 'ւ եղո՛ւկ մարմնոցն է նոցին յորժամ զար-
թիցին :

Տառապեալ հոգին , եկեալ առ մարմին ,
Բամք գործոց չարեա՛ցըն յայնժամ յայտնեացին :

Անձամբ եղկելին , ոսմիկ եւ գերին
Առաջի կացեալ դողալով մեծ դատաւորին :

Գննէ զգործք նորին եւ բարբառ լեզուին .
Անձամբ հառաչեն լալագին յայն հրապարակին :

Ես, Տէր Առաքեալ, անձամբ տառապեալ,
Վասն իմ հայցեցէք, ընթերցողք, ի Տեառնէ
զթողութիւն:

Ձեզբայրն իմ զԲարսեղ, քահանայն անմեղ,
Եւ զհայրն իմ Դաւիթ յիշեցէ՛ք յազօթս ձեր
զօրեղ:

Եւ որ զմեզ յիշէ ի յուղիզ սրտէ
Ծաղկալից պըսակն ընկալցի նա ի Քրիստոսէ:

Թիւ Հայոց մեծի՝ ութ հարիւր տարի
Եւ յիսուն՝ Է երեք էր մտեալ, որ զայս բանս
գրեցի (1)

(Ս. Ղազարոս Ձեռագիր ք. 1339
եւ 1330, Տաղարան):



ՃԱՓՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Ռուսո-ճափոնական պատերազմին մէջ ճափոնը ինքզինքը յայտնեց իբր առաջնակարգ զինուորական ազգ մը, հաւասար Անգլիոյ եւ Գերմանիոյ: Անոնք սակայն որ այդ պատերազմին սպասեցին՝ ճափոնցիները քաղաքակիրթ մեծ ազգ մը նկատելու համար, քաղաքակրթութեան չափը զինուորական զօրութենէն դատողներն են. պատերազմէն առաջ, ճափոնցիք արդէն յայտնած էին իրենց քաղաքակրթական ամենաբարձր կարողութիւնները՝ իրենց հրաշալի դեղարուեստով որ՝ ժ.թ. դարու վերջին քառորդին՝ խորապէս ներգործեց եւրոպական արուեստին վրայ, իրենց կառավարական ընթացքին դէպ ի ազատականութիւն արագ բնաշըրջմամբ, իրենց ցոյց տուած զարմանաւոր զիւրութեամբը իրացնելու եւրոպական քաղաքակրթութեանն ինչ որ իրենց ընթիկ քաղաքակրթութեանը կը պակսէր: Ռուսիոյ հետ բաղդատուելով, միմիայն գրականութեան մէջ է

(1) Այս կտորը պէտք է գրուած ըլլայ երգուելու համար. ձեռագիրը կը պարունակէ հետեւեալ նշանակումները. 10րդ տունէն առաջ՝ « Դաւթն Հրէական » ին գոյնն ասա՛. 19րդ տունէն առաջ՝ « Անձառ միածին հօրն երկնաւոր » ին ձայն է. 28րդ տունէն առաջ՝ Յարեազալին ձայնն ասա՛:

որ ճափոն վար կը մնայ անկից. ճափոնցիք ունին քնքուշ բանաստեղծութիւն մը, բայց զեռչունին Տասթայեւթիներ, Թուրկինէֆներ, Թուլութոյներ, Կորքիներ. այսուհետեւ այդ այ պիտի ունենան անշուշտ: Վերջին պատերազմը ապացուցեց միայն թէ ինչքան հոյակապօրէն յաջողեր էին շատ քիչ ատենուան մէջ՝ եւրոպայի զինուորական արուեստը, սպառազինական յառաջգիւժումները իւրացնել: Այդ պատերազմը սկսած է ունենալ եւ դեռ պիտի ունենայ տիեզերական քաղաքակրթութեան համար ամենակարեւոր հետեւանքներ, որոնցմէ ինքն իսկ Ռուսիա պիտի օգտուի՝ վերանորոգուելով, եւ զառնալով իր պատմական ճշմարիտ ուղեգծին՝ այն է դէպ ի Արեւելք յառաջխաղացութեան՝ իբր արեւմտեան քաղաքակրթութեան պաշտպան ընդդէմ մահմետական տիրութեան ու վայրենութեան: — Շահեկան կը նկատենք Անահիթի մէջ հրատարակել թարգմանութիւնը շարք մը ուսումնասիրութեանց ճափոնի քաղաքակրթութեան, բարքերուն, արուեստներուն ու գրականութեան վրայ:



ՃԱՓՈՆԸ



ազող Արեւու պետութիւնը կամ Նիփոնը (մեր ճափոն բառը Նիփոն չինական արտասանութեան աղաւաղումն է) կը տարածուի՝ հիւսիսէն մինչեւ Գամչաթքա, հարաւէն՝ մինչեւ Հոնկ-Քոնկ. արեւելքէն Խաղաղական Ովկիանոսը կը թանայ զայն, արեւմուտքէն՝ Օխոթսքի ծովը, ճափոնի ծովը եւ

Չինաց ծովը : Իր ամբողջական տարածութիւնը 417,412 քառակուսի քիլոմետր է : Սյս պետութիւնը արշիպելագոս մըն է՝ կազմուած հազարաւոր կղզիներէ , որոնց հինգ հարիւր քսան եւ չորսը բնակուած են . այդ կղզիներուն մեծագոյններն են Նգօ , Հոնտօ , Քիուչիու , Շիքոքու եւ Ֆորմոզա . վերջինը Ճափոնին կը պատկանի 1895ի Շիմոնոգէքիի դաշնագրէն ի վեր , եւ Նգօի գաղթաւորութիւնը շատ դանդաղ կը յառաջանայ . բուն Ճափոնը կը բաղկանայ ուրեմն Հոնտօէն (226,510 ք. ք.) , Քիուչիուէն (40,995 ք. ք.) եւ Շիքոքուէն (18,210 ք. ք.) :

Շիմոնոգէքիի նեղուցը , Հոնտօի եւ Քիուչիուի միջեւ , ղեւէ մը աւելի լայն չէ . ամենէն նեղ անցքը Պունկօ-Նատային , որ կը զատէ Քիուչիուէն Շիքոքուէն , աշխարհագրական երեք միոնի չափ իսկ լայն չէ Շիքոքուի եւ Հոնտօի միջեւ կը գտնուի Աւլաթի կղզին . Նարութօն , Աւլաթիի եւ Շիքոքուի միջեւ , Իզուամին՝ Աւլաթիի եւ Հոնտօի միջեւ , աւելի նեղ են քան Պունկօ-Նատան : Ծովը որ կը տարածուի երեք կղզիներուն միջակզը եւ այդ չորս նեղուցներով Ուկիանոսին հետ կը հաղորդակցի , Ներքին Ծով (Ճափոնիկէն Սեքօ-Ուշի) անունն ստացած է . իր քիչ խորութիւնը եւ բազմաթիւ կղզիները , ցոյց կուտան թէ նոր ժամանակներու մէջ կազմուած է : Քիուչիուի եւ Քորէայի միջեւ կը գտնուին Չուչիմա եւ Իքիչիմա , որոնք միշտ Ճափոնին պատկանած են . Չու բաժնուած է ցամաքէն՝ Պրուկիմոնի նեղուցով , եւ արշիպելագոսէն՝ Կրուզէնսթերնի նեղուցով :

Արփակղազոսի կղզիները կը յենուն կրանիտէ հիմունքի մը վրայ եւ ուրիշ պլուտոնական քարերու , որոնք՝ արեւելքէն՝ կ'եղերեն ծովային ամենամեծ խորութիւնները որ ծանօթ են ցարդ : Հոնտօի եւ Քիուչիուի ողնագիծը կ'ուրուանչուի լեռնաշղթայով մը որուն ուղղութիւնը հիւսիսարեւելքէն հարաւ-արեւմուտք է : Բարձրագոյն կատարները հրաբուխներ են . շատերը կը բարձրանան կրկէսներու միջակզը , եւ իրենց մոխիրի ու լավայի կոներուն ներդաշնակ գծերը կը հակապատկերին զալարատանջ ձևերուն հետ ապառաժուտ ստրերուն որ շոճիի անտառներուն վերեւ կը ցցուին : Ամբողջ արշիպելագոսին մէջ , տասնեւութ հրաբուխ կայ՝ զործօն վիճակի մեջ . միայն երկուքը կը պատկանին Հոնտօի . մարած

հրաբուխներու թիւը ահագին է : Հողին հրաբուխոյին բնութիւնը երկիրը ենթակոյ կը դարձնէ յաճախադէպ ժաժերու . ամառը , ցնցումները դրեթէ ամենօրեայ են . եւ ցարդ՝ մէկ դարու մէջ երեք չորս աղէտք պատահած է : Տարակունքները եւ հանքերը առատ են . Ճափոնը հարուստ է մասնաւորապէս պղինձով , երկաթով եւ անուխով : Կեղրոնական չղթային ճիւղաւորումները երկրին շատ մը մասերուն մէջ կը տարածուին մինչեւ ծովը , ուր ափունքը մահկաձեւ կը փորուի խորունկ « ֆիորտ » ներ կազմելով . բոլոր միւս մասերուն մէջ , ափերը ցած են ու ճախճախուտ : Հոնտօի մէջ երկու մեծ դաշտ կայ միայն . արեւելեան կողմը , Քվանթօն , կեղրոնը՝ Նամաթօն եւ Իզը . այդ դաշտերուն մէջ է որ կը կանգնին ամենէն կարեւոր քաղաքները . Քվանթօի մէջ՝ Թոքիօ , Սոքոնամայի խորաջուր նաւահանգստով , Նամաթօի մէջ՝ Կիոթօ , լեռնային մասին սեմին վրայ , Օզաքայի մեծ արուեստագիտական քաղաքը եւ Կոպէի նաւահանգիստը : Արդէն , հողը այնքան անհարթ է , անտառները այնքան ընդարձակ , որ երկրին հազիւ տասըհինգ հարիւրերորդը կրնայ մշակուիլ : Քիտերը բազմաթիւ են . ոչ մէկը ընդարձակաւաւալ աւազան մը ունի . անոնց փոքր , յաճախ ցամքած , մրբիկէն յորդացած ջուրերը չի կրնար պարունակել . ողողումն բը յաճախադէպ են , դաշտերը , մանաւանդ Կվանթօն , ախօռուած են դետակներով եւ ջրանցքներով . կան շատ լճեր , որոնց մեծագոյնն է Պիվան :


Ճափոնի կլիման այն է որ կը տեսնուի ասիական ցամաքին վրայ . ձմեռը ցորտ եւ չոր , տաք ու անձրևոտ՝ երբ կը փչէ ամառնային հովը . բայց ամբողջ հարաւային ծովափը , արեւելեան ծովափը եւ արեւմտեան ծովափը մինչեւ Չուչիմա , կ'ոտողուին տաք հոսանքով մը , նման կռչիֆ-Սթրիւին , որուն բարեխառնութեանը կը համի գրեթէ . անոր ջուրերուն կապոյտ գոյնին համար , որ Ուկիանոսին կանանջ գոյնին հետ կը հակապատկերի , Ճափոնցիք զայն կ'անուանեն Կուրօչիվօ կամ Սեւ Կետ Այն բոլոր երկլումասերը որոնց կը զպչի Բուրօչիվօն՝ խոնաւ ու բարեխառն կլիմայ մը ունին , նուազ մեղմ սակայն ու մանաւանդ նուազ սեւական քան լայնութեան նոյն աստիճանի տակ գտնուող եւրոպական կամ ափրիկեան կղզիներունը :

Հողին հրաբխային բնութիւնը, կլիմաներու ալլազանութիւնը, Քուրօչիլօյին ազդեց լծիւնը Ճափոնի տուած են աշխարհիս ճոխագոյն ծաղկաբերութիւններէն մին, քանի որ բարեխառն երկիրներու, նոյն իսկ ցուրտ երկիրներու ծառերուն հետ հոն կը գտնուին նաեւ պամպուներ, շաքարեղէգ եւ արմաւենի. ճշմարիտ է որ ատոնք զրոնք բերուած տնկուած են, եւ շաքարեղէգը, գարնան մնուած, ձմեռուրնէ առաջ պէտք է քաղուի: Գլխաւոր երկրագործական արտադրութիւններն են բրինձ, գարի, բակլայ, ոստ, կանեփ, ծխախոտ, թէյ, լեզակ. այն բոլոր նահանգներուն մէջ որոնց կլիման բարեխառն է, կը մշակեն թիւնի, որ չերամները կը սնուցանէ:

Ճափոնի կենդանիներն ալ շատ այլազան են: Արչիպելագոսին մասնայատուկ եզոզ կասկեր, սարու, կը տեսնուի հոն մինչեւ լայնութեան 41րդ աստիճանի տակ: Այնտեղ կը գտնուին արջի, կատուի, շունի շատ մը տեսակներ, աղուէս, կզաքիս, իչլար, շատ մը թռչուններ, մանաւանդ ջրային թռչուններ: Ընտանի կենդանիները յարաբերաբար սակաւաթիւ են. 1901ին, 1,500,000 ձի կար, 1,300,000 եզ ու կով, 2,500,000 ոչխար, 54,000 այծ եւ 202,000 խոզ:

Կարծես աշխարհէս մեկուսացած այդ արչիպելագոսին՝ մէջ կազմուած է ժողովուրդ մը որ շատ տարբեր է ցամաքի ժողովուրդներէն: Երեք տարբեր զայն կազմաւորած են: Այնտաները, որոնց անխառն տիպարով վերջին խումբերը Եզօի եւ Սախալինի մէջ գետ կը մնան՝ բարբարոսութեան մօտիկ վիճակի մը մէջ. Մալայեաններ, որ ծովու ճամբով եկած են Գիուչիու եւ Շիքոքու, ու յետոյ՝ մեծ կղզին. Ուրալեաններ, անշուշտ քիչ տարբեր Քորէացիներէն եւ որոնք իջան Նակաթօ (Մոչիու), Հոնտօի հարաւարեւմտեան ծայրը: Ժամանակի ընթացքին մէջ, այդ տարբերը ձուլուեցան եւ բաւական համասեռ ցեղ մը կազմեցին. այդ ցեղին բնորոշիչ գծերն են՝ կարճ հասակ (1^ւ

50^ս միջին հաշուով՝ այրերու համար), սրունդները քիչ մը կոր, առողջ եւ ուժեղ մարմին, կարճ զլուխ: Սակայն, կարելի է զանազանել երկու տիպար. առաջնոյն պատկանող այրերը թուխ մորթ ունին, կարճ ու հաստ անդամներ, խոշոր ոսկորներ, կարճ դէմք, ցած ձակատ, աչքերը գրեթէ ուղղաչիծ, տափակ քիթ, լայն բերան, կզակին ոսկորները շեշտուած, երկրորդ տիպարին պատկանողները բաց գեղին գոյն



ԲՆԱՆԿԱՐ (Հոբուզաի)

(Քիչիէ Revue Universelle)

ունին, երկայն դէմք, աւելի մեծ աչքեր բայց չեղ, թիթեօրէն արծուունգն քիթ. այս տիպարին՝ ազնուականներու տիպարը նկատուած՝ չափազանցումն է որ կը գտնենք նկարչներու եւ փորագրիչներու գործին մէջ: Պատմութիւնը ունի 50,000,000 բնակիչ, որոնց 3,000,000ը Ֆորմոզայի մէջ են:

Ճափոնական լեզուն կցողական է. քորէե-

Բէնի պէս, ան ալ կը մերձակցի, մանաւանդ յօրինուածքի տեսակէտով, ուրալօ-ալթայեան լեզուներուն, թրքերէնի, հունգարերէնի, ֆինլանտերէնի. բայց ժողովրդական լեզուն կը սարբերի գրական լեզուէն, որուն երկու երբորքը չինական բառերէ կը բաղկանայ. չինական միավանկները գաղափարանիշներով կրնրկայացուին. իսկ ճափոներէն բազմավանկները գրելու համար, վանկական երկու այբուբեն կը գործածեն:

Ճափոնցիք կը կարծեն թէ Քրիստոսէ առջ 660ին է որ իրենց առաջին միքստօն կամ թեոնօն, ձիմուռ, գահ բարձրացած է. կարելի է ընդունիլ թէ այն ատեն արչաւանքներու շրջանը վերջացած էր. մօտ հազար տարի պէտք եղաւ որպէս զի Արիստոսերը, Ուրալեաններն ու Մալայեանները միանան միքստօնի իշխանութեան տակ. Ճափոնացիք այն ատեն յարաբերութեան մասն Գորէայի հետ, որմէ ընդունեցան պուտայականութիւնը եւ չինական քաղաքակրթութիւնը: Իրենց պատմութիւնը համառօտակի ամփոփելու համար, կարելի է անոր մեծ գծերը բազդատել ֆրանսական պատմութեան մեծ գծերուն հետ: Ինչպէս Մերովինգեանք եւ Քարլօվինգեանք ուղեցին Հոովմայեցեոց կեդրոնացեալ միապետութիւնն ընդունելու հարկադրել Գալլիոյ մէջ հաստատուած այլեւայլ ժողովուրդները, միքստօններն ալ ուղեցին արչիպղագօսին եկած տիրացած ցեղերը եւ նուաճուած Արիստոսերը հարկադրել չինական կեդրոնացեալ միապետութեան ըստիմն ընդունելու: Բայց Ֆրանսայի ու Ճափոնի մէջ, ընկերութիւնը, գեռ շատ բարբարոս, չէր կրնար ճկիլ այդ կերպարանափոխութեան. եւ այն անիշխանութեան շրջանին մէջ որ յաջորդեց կեդրոնական իշխանութեան անկումին, հազարաւոր աւատական իշխանապետութիւններ կազմուեցան: Երկու երկիրներուն մէջ ալ, աւատական արքայատոհմ մը դարերով ջանաց կեդրոնացեալ միապետութիւնը վերահաստատել՝ գործածելով այն միջոցները զոր ինքն իսկ աւատականութիւնը կ'ընծայէր, ամուսնական զաչնակցութիւններ, հպատակութեան պայմանագրեր, նուաճում փոքր, յետոյ մեծ աւատառունկերու. ինչպիսիք Ֆրանսա ունեցաւ Քարթիւսները, Ճափոն ու-

նեցաւ Մինամօթօները, բայց մինչդեռ առաջինները իրաւագուրկ բրին քարտկոնական հարստութիւնը, Մինամօթօները միշտ յարգեցին միքստօնի վեհապետական իրաւունքը, այդ իրաւունքը զուտ անուանական գարձընելով հանդերձ. եթէր դար երկիրը կառավարեցին՝ շոկուն կամ զինուորական արտակալ (regent) անունով:

(Շարունակելի)

ԼԱ ՄԱԶՇԼԻՆԻՍ

Ք Ր Ո Ն Ի Կ

Հանգանակութիւն ի նպատակ Կովկասի արկածեալներուն. — Փարիզի հայ եկեղեցոյնի Հոգաբարձութիւնը հանգանակութիւն մը բացած է ի նպատակ Թաթարական գաղանութիւններէն արկածուած Կովկասի մեր եղբայրներուն: Պէտք է որ Փարիզի բոլոր Հայերը մասնակցին այդ հանգանակութեան:

Արեւոյս. — Պ. Գէորգ Մելիք-Կարաբեօղեան, որ ծանօթ է Անահիտի ընթերցողներուն այն քանի մը ծանրախոհ եւ կրակոտ յողուածներով զոր հրատարակեց այս էջերուն մէջ, սկսած է Թիֆլիսի մէջ հրատարակել ամենօրեայ մեծ թերթ մը, Արշաղոյս անունով: Առաջին թիւերը զոր ստացանք, ցոյց կուտան որ Արշաղոյսը պիտի ըլլայ շատ այլազան ու ճոխ պարունակութեամբ, զիտակից խնամքով խմբագրուած օրկան մը:

Մեծ հաճոյքով իմացանք նաեւ որ Նոր Դարը վերսկսած է հրատարակուիլ:

Ռազմիկ. — Յայտարարութեանէ մը զոր կը ստանանք Ֆիլիպպէն, կ'իմանանք թէ Ռուբին Զարգարեանի խմբագրութեամբ թիչ օրէն պիտի սկսի հրատարակուիլ այդ քաղաքին մէջ՝ շարքեր երկու անգամ լոյս տեսնող լրագիր մը գրական եւ քաղաքական, «Ռազմիկ» անունով: Զարգարեան մեր նոր գրականութեան ամենէն ինքնատիպ, ամենէն հայադրոշմ գրողներէն մին է: Կուգայ Զարգարեանի երկրէն, ուր աչքովը տեսած է արհաւիրքները, եւ ուր ինքն իսկ անաւորապէս տառապեցաւ թուրք զնտաններուն մէջ. իր թերթը շատ տեսակէտներով շահեկան պիտի կրնայ ըլլալ:

Ճ Գ Ն Ա Փ Ա Մ Ը



« քթէօր Գաբրիէլեանի « Ճգնաժամ Հայոց ու ազգային վերածնութիւն » տխուրօտուած գիրքը, որ վերջերս լոյս տեսաւ Ամերիկայի մէջ, բուն վէ-

ձերու տեղի տուաւ եւ կը շարունակէ դեռ տալ արտասահմանի շատ մը թերթերուն մէջ : Գործը, հզօր ու վճիտ կերպով զգացուած, պարզ եւ ուժեղ արտայայտուած, անուրանալի անկեղծութիւնով մը, համոզումը սաք շեշտով մը տողորուած ծայրէ ծայր, բնական էր որ յուզէր հասարակութիւնը եւ հարկադրէր ընթերցողը թեր կամ դէմ կարծիք մը ունենալու, անով զբաղելու, անով մտաւորապէս ապրելու : Գիրք մը որ շարժում յառաջ կը բերէ, ատով իսկ կ'ապացուցանէ որ կենդանի է, եւ այդ արդէն էական արժանիքներէն մին է գործի մը : Տր. Գաբրիէլեան այս գրքով ուզած է ուսումնասիրել հայկական խնդրոյն ծագումը, բոլոր փուլերը որոցմէ ան անցած է մինչեւ այսօր, բացատրել պատճառներն այն աղէտքներուն որ խուժեցին հայ ժողովրդին վրայ, որոշել ատոնց մէջ օտար եւ հայ պատասխանատուութեանց բաժինը, ցոյց տալ սխալները Հայոց գործունէութեան՝ սկիզբէն մինչեւ այսօր, եւ մասնաւոր ընել այն ուղին որուն՝ ըստ իրեն՝ պէտք է ասկից ետքը հետեւի հայ ժողովուրդը՝ ինքզինքը փրկելու համար կորուստէ : Անահիճի ընթերցողները կը յիշին որ այս հարցերուն վրայ այս էջերուն մէջ շատ անգամ պարզուած են տեսութիւններ որոնց համաձայն են՝ մերթ՝ Տր. Գաբրիէլեանի տեսութիւնները : Բայց կան եւ կարգ մը կէտեր Տր. Գաբրիէլեանի գրքին մէջ, որոնց համախոհ չեմ : Մտադրութիւնս այստեղ գրքին մանրամասն վերլուծումը եւ ամբողջական ըննադատութիւնն ընել չէ. ատի պիտի համապատասխանէր հայկական հարցին քննական պատմութիւնը անգամ մը եւս ընելու. ասոր համար ժամանակը կը պակսի այս պահու ինձի, եւ արդէն վայրկեանը ուր կը գըտնուինք՝ յարմարագոյնը ըլլալէ հետո՛ւ է այդ քննութիւնը վերջնական կերպով կատարելու համար :

Այդպիսի քննութիւն մը, լիակատար, բացարձակապէս անաչառ ու յստակ, պիտի կատարուի՝ երբ այս տեղին, յուզման փուլը անցնի, երբ զայ հանգստեան շրջանը, որ անշուշտ պիտի գայ, եւ որ հնարաւոր պիտի ընէ մենք մէկուն, կամ՝ թերեւ՝ մենք ետքը եկող մէկուն՝ պաղ արիւնով, հանդարտ եւ խուզարկու ուսումնասիրութիւնով, անկողմնակալ ու

« գիտական » դատողութիւնով, հետազօտել բոլոր տղքեմանները, իրողութիւնները, գրաւոր ու բերանացի վկայութիւնները, եւ գրել՝ պատմագիրի պէս՝ հայկական խնդիրն պատմութիւնն ու անոր իմաստասիրութիւնը : Այս զգացումն է որ տարիներ առաջ զիս մղեց ընդհատելու վէճը զոր սկսած էի Պ. Չերազի հետ՝ Ներսէս պատրիարքի քաղաքականութեան մասին : Ասի այլ եւս աւելորդ է վէճի ձեւով շարունակել, նոյն իսկ անձան : Կը մնայ միայն պատմութիւնը գրել այդ անցեալին, ու վայրկեանը դեռ եկած չէ ատոր : Իսկ ինքը Պ. Չերազ շատ լաւ կ'ընէ՝ Տր. Գաբրիէլեանի գրքին առթիւ հրատարակելով շարք մը յօդուածներ, ուր՝ պատասխանելով անոր ինչ ինչ քննադատութեանց՝ Ներսէսեան շրջանին վերաբերող շատ մը անտիպ իրողութիւններ երեւան կը հանէ. տղքեմաններու նոր շարք մըն է որ կ'աւելցնէ, որոնք օր մը քննուելով, ստուգուելով, բաղդատուելով ուրիշ աղբիւրներու հետ, պիտի մեծապէս ծառայեն ապագայ պատմաբանին՝ ամբողջական ու ճշգրտագոյն պատկերը գծելու հայկական խնդրոյն :

Այստեղ եւս կուզեմ միայն հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել Տր. Գաբրիէլեանի գրքին այն կէտերուն վրայ որ մեր այժմու կացութեան եւ անմիջական հրատապ հարցերուն հետ ուղղակի կապ ունին, ու մասնաւորապէս իր առաջարկած հետեւելիք ուղղութեան վրայ : Մեր յեղափոխութիւնը քննադատած ատեն Տր. Գաբրիէլեան կը մեկնի սա հիմնական տեսակէտէն — եւ այդ տեսակէտը պէտք է միշտ ի նկատի ունենալ իր դատումներուն նոյն իսկ ծայրայեղութիւնները եւ մերթ անձշտութիւնները բացատրելու համար, — թէ Հայոց յեղափոխական շարժումը « ժամանակէն առաջ պայթած է », եւ թէ այդ տարածում եւ բռնազբօսիկ պայթումը որոշ չափով մը շարժառիթ եղած է այն աղէտքներուն որ մեր ժողովրդին վրայ խուժեցին : Այս տեսութիւնը, զոր եւ իսկ քանիցս յայտնած եմ, ճիշդ կը թուի ինձի. մեր յեղափոխական շարժումը սկսած է այնպիսի պահու մը երբ քաղաքական ընդհանուր պայմանները ամենաանպաստ էին մեզի համար եւ երբ մեր ժողովուրդը բացարձակապէս անպատրաստ եւ անկարող էր՝ թուրք կառավարութեան դէմ կռուելու : Որքան ալ թուրք բեֆիմը անհանդուրժելի ըլլար՝ մասնաւորապէս մեծ Հայաստանի մէջ, հայ ազգը պէտք էր շարունակէր իր վաղուց սկսած ծրագիրը՝ ազգային գիտակցութիւնը իր մէջ տարածելու եւ ամրացնելու, կրթական, տնտեսական զարգացումը յառաջ սանելու, վերջապէս ամէն ձեւով մեծ ճիգին « պատրաստուելու » . իսկ այդ վճռական ճիգը կատարելու համար՝ պէտք էր սպասէր պատենքիցի մը, — օրինակ՝ պատերազմ մը թուրքիցի եւ Ռուսիոյ միջեւ. այդ սպասումը երբեք զինքը չպիտի արգիլէր անշուշտ Բերտերուն եւ թուրք պաշտօնեաներուն դէմ ինքզինքը (մասնաւոր իր մասնաւորապէս կեղեքուող հատ-

ուածները) պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելու. ուրիշ բան է անհատական կամ հաս- ուածական ինքնապաշտպանութիւն՝ կրուած յարձակմանց դէմ, ուրիշ բան է՝ ազատման համար ոտքի կանգնել ազգովին. այդ երկուքը իրար խառնուեցան, եւ է՛ն անյարմար պարա- դաներուն մէջ: Հետեւանքը տեսանք: Այն էջերը ուր Տ. Գաբրիէլեան այս տեսութիւնը կը պար- զէ, ինչպէս եւ անոնք ուր կը պարզէ թէ՛ թուրք կառավարութեան եւ թէ՛ եւրոպական դիւանա- գիտութեան ոճրագործ ընթացքը, ու ժեղ ու յտակ վերլուծումի էջեր են, գերծ չըլլալով հանդերձ վիճելի կէտերէ: Բայց զբքին եզրա- կացութեանը մէջ է մանաւանդ որ այլ եւս հա- մաձայն չեմ Տր. Գաբրիէլեանին՝ մէկէ աւելի կէտերու վրայ: Տր. Գաբրիէլեան կը խորհի թէ 1895 եւ 96ի հայկական ջախջախումէն յետոյ՝ Հայք պէտք էր զաղբեցնէին իրենց յեղափոխա- կան գործունէութիւնը: Պէտք չէր՝ ըստ իս՝ «զաղբեցնէին», այլ փոխէին գործունէութեան ձեւը, խուսափէին ո՛ր եւ է ցոյց, արշաւանք օտարելէ, ջարդի պատրուակ տուող ո՛ր եւ է արարը կատարելէ, բայց ժողովրդին օգնէին՝ յարձակմանց դէմ ինքնապաշտպանութեան, եւ «պատրաստուէին»՝ ամէն միջոցներով, յար- մար բոլորէ մը ըլլուելիք ճիգին:

Տր. Գաբրիէլեան կը կարծէ թէ յեղափոխա- կան պետերը որ շարունակած են բուն միջոց- ներով գործունէութիւնը, կա՛մ շահամոլներ են կամ խելագարներ՝ մեծ մասամբ: Կրքոտ դատում մըն է այդ, անարդար եւ դատապար- տելի (իրաւ է թէ շատ նուազ անարդար ու վայրագ քան այն դատափետումները զոր իրենք իսկ յեղափոխականներ իրարու դէմ ուզող են տարիներէ ի վեր. բաւական է կարդալ ինչ որ իւրաքանչիւր կուսակցութիւն ըսած է միւս կուսակցութեանց գործիչներուն համար): «Արտասահմանեան յեղափոխական» ի փո- ղանգին մէջ անշուշտ եղած են եւ կան դեռ յեղափոխութիւնն իրենց ապրուստի միջոց դար- ձուցած տիպարներ. բայց յեղափոխական «վա- ըիչ աները՝ մեծ մասամբ՝ շատ անկեղծօրէն հա- մոզուած են իրենց կատարած գերին օգտակա- րութեանը. առասպելական անձեր չեն վերջա- պէս, կը ճանչնանք զիրենք. ուրիշ ո՛ր եւ է գործով կրնային շատ հանգիստ ապրել անոնք. եւ կան անոնց մէջ որ գործերնին ձգած են այդ գերին լծուելու համար: Ինչ որ իրենցմէ շատերուն կարելի է մեղադրել, ուսմանիկ իսանդավառու- թեամբ մը՝ իրականութեան տեսութիւնը կոր- սնցուցած ըլլալնին է: Ուրիշ — եւ աւելի կարե-ւոր — մեղադրանք մը զոր կարելի է իրենց ընել, այն է որ դեռ չեն ըմբռնած թէ յեղափոխու- թեան վարիչները պէտք է երկրին մէջ գտնուին. Մակեդոնացի յեղափոխական բոլոր վարիչները կուռի դաշտին վրայ են. եւրոպայի մէջ ունին երկու կամ երեք փրփակականութիւն: Երբ յեղա- փոխական գործին վարիչ մարմինը երկրին մէջ փոխադրուի, հայ յեղափոխութիւնը թէ՛ աւելի զգոյշ, գործնական կ'ըլլայ եւ թէ՛ աւելի ու-

ժեղ: Ոչ միայն՝ մեր յեղափոխական կազմակեր- պութեանց վարիչները գրեթէ բոլորն ալ ար- տասահման կը գտնուին, այլ — ինչ որ ար- տաուց է — այդ կուսակցութիւններէն միոյն՝ Դաշնակցութեան՝ վարիչները տարամերժօրէն Ռուսահայեր են, որ Տաճկաստան օտք անգամ եր- բէք չեն կոխած եւ բնաւ չեն ճանչնար երկիրն ու պայմանները: Ասի մին է այն կարեւոր հարցերէն, որու մասին Անանիսի մէջ արդէն այնքան անգամներ ուշադրութիւն հրաւիրած եմ եւ որ պէտք է լուծուի յեղափոխական Համաժողովին մէջ՝ եթէ գու՛մարուի:

Տր. Գաբրիէլեան կ'առաջարկէ իբր միակ դարման մեր ցաւերուն, եւ իբր միակ ուղին որմէ պէտք է ընթանայ ազգը այտուհետեւ, գաղբեցնել բոլորովին՝ եւ անկեղծօրէն՝ յեղա- փոխական գործունէութիւնը, հրաժարել մեր քաղաքական ծրագրէն, եւ կրթական ու ան- հատական զարգացման նուիրել մեր բոլոր ու- ժերը:

Այս գաղափարը՝ զոր ես իսկ յայտնած եմ տարիներ առաջ՝ Նոր Կեանքին մէջ, սխալ է: Մեր յեղափոխական շարժումը շատ կանուխ սկսած է, բայց անոր գահավէժ ընթացքը, եւ այն բոլոր պայմանները որ ստեղծուած են այս վերջին շրջանին զէպերուն հետեւանքով, այն- պիսի կացութեան մը ստեղծած են, որ այլ եւս մեզի համար ե՛՛ս դառնալ նիրքապէս անկարելի է: Տաճկաստանը այսօր կը ներկայացնէ կա- տարեալ քառս մը, զոր յաւիտենապէս նոյնու- թեամբ պահպանել անկարող է քաղաքակիրթ աշխարհը՝ նոյն իսկ իր նիւթական շահերուն համար. Տաճկաստանը կարգի պիտի դրուի վերջ ի վերջոյ. ատի պատմական բացարձակ անհրա- ժեշտութիւն մըն է,» մենք այժմէն՝ հաշտութեան ձեռք կարկառելով թուրք բռնապետութեան, եւրոպայի աջակցութեանը դիմելու իրաւունքէն մեզ զրկած կ'ըլլանք ու եւրոպական միջամը- տութեան պահուն մատնաւորապէս մեզի ի նը- տութեան կարգադրութեան մը յոյսը — որքան ալ սոճուում, բայց դեռ ոչ բոլորովին փնջուած — մեր ձեռքով չքացուցած կ'ըլլանք: Ասկից զատ, արդէն արդենքը որուն Տր. Գաբրիէլեան կը կարծէ թէ պիտի հասնինք՝ այդպէս վարուելով, երեւակայական է: Եթէ մեր յեղափոխական ցոյցերը զաղբին, ջարդերը կը զաղբին, ատոր համոզուած եմ, բայց ո՛չ սրտտեմական կեղե- քումն ու սեղմումը. իսկ կրթական ու վաճա- ռականական այդ լայն շարժումը զոր կ'երազէ Տր. Գաբրիէլեան, անհնար է որ անկաշկանդ տեղի ունենայ համիտական բեժիմին տակ. թուրք կառավարութիւնը այլ եւս թող պիտի չտայ որ Հայը զօրանայ՝ ո՛ր եւ է ձեւով, նոյն իսկ անտեսապէս, մատուորապէս. ու երբ մա- նաւանդ՝ ամէն զիմադրողական միջոց մէկզի դրած, իր գերկը նետուինք, ինք պիտի որոնէ միջոցներ՝ մեզ դանդաղ, խուլ բայց ապահով միջոցներով հետզհետէ սկաքացնելու, ձգմելու: 1896էն ի վեր, հայ յեղափոխական գործու- նէութիւնը պէտք էր ոչ թէ զաղբէր, այլ ինչ-

պէս որ ըսի, ամբողջապէս իր ձեռք փոխէր: Միայն Վերակազմակալ Հնչակեանները այդ փոփոխութեան պէտքը զգացին եւ իրագործեցին զայն. բայց չկրցան դժբաղդաբար համոզել Իաշնակցականներն ալ որ հետեւէին իրենց ուղղութեան: Այս վերջինները գործունէութիւննին՝ նոյն իսկ աւելի յախուռն՝ շարունակեցին: Տր. Գաբրիէլեան անարդար է երբ կը քննադատէ Վեր. Հնչակեանները, որ խոհեմ ու չրջանայեաց ընթացքի մը պէտքն զգալով հանդերձ՝ շարունակած են « պատրաստել » հայ ժողովուրդը պատեհ ըտպէին ուժեղ ու վճռական ճիգ մը ընելու. պատեհ ըտպէէ մը օգտուելու յոյսը եւ ատոր համար աշխատելու ձգտումը՝ ներքի չէ վերցնել: Հայոց սրտէն, որովհետեւ այն ատեն խաւարն ու յուսահատութիւնը կը տիրեն Հայութեան մէջ, ու ազգին բարոյական քայքայումը կը սկսի. այսքան ճիգերէ, զոհողութիւններէ, կորուստէ ու չարչարանքէ յետոյ կարելի չէ վերջնապէս հրաժարեցնել ժողովուրդ մը այն խեղճէն որուն համար այդ բոլոր մարտիրոսութիւնը կրեց եւ կը կրէ. այդ յոյսը եւ այդ հաւատքը պէտք է միշտ հայ հոլիզոնին վրայ նշուին: Կ'ընդունիմ որ պէտք էր կարելի եղածին չափ քիչ խօսիլ, նոյն իսկ երբեք հրապարակաւ, (ինչպէս Կամպիթթա կ'ըսէր), բայց միշտ մտածել ատոր մասին եւ պատրաստուիլ ատոր իրագործման: Բայց հայկական դատին ի նպաստ զիւանադիտական գործունէութիւնը եւրոպական պետութեանց եւ ժողովուրդներու մօտ՝ որուն շարունակումը եւ նոյն իսկ ընդարձակումը անհրաժեշտ կը նկատէ Տր. Գաբրիէլեան, գրեթէ նոյնքան գրգռիչ կըրնայ ըլլալ թուրք կառավարութեան համար որքան Վեր. Հնչակեաններուն « պատրաստութեան » հրաւէրները. զիւանադիտական այդ ջանքերը, նոյն իսկ գաղտնի, միշտ կ'իմացուին թուրք կառավարութեանէն՝ այդ անտարակուսելի է (եւ անկարելի է զանոնք միշտ գաղտնի կատարել): Ու արդէն, այս բոլոր « զբաղան » պատճառներէն զատ որ այդ թէգին կը հակառակին, պիտի ըսեմ որ՝ ինքնին, զգայնական, բնազդական սոսակէտով՝ անկարելի բան մըն է Հայոց մերձեցումը թուրք կառավարութեան ցորքան երկտրգի հրէշը իր գահին վրայ մնայ: Այդպիսի մերձեցման փորձ մը կրնայ փորձուիլ, երբ ուրիշ Սուլթան մը յաջողէ արգի ճիւղին: Երբեք ըսել չեմ ուզեր թէ անձի փոփոխութեանէն ըստիմի արմատական փոփոխութիւն կը յուսամ. բայց վերջապէս անկարելի չէ որ նոր Սուլթան մը պաշարէ ինքզինքը լուրջ եւ ազատամիտ տարրերով, մտածէ իր նախորդին գործած սխալը զարմանիլ եւ ջանալ համաձայնութեան մը յանգիլ (Պօէրներուն հետ), այն ատեն — եթէ այս վարկածն իրականանայ, — մենք ալ, ինչպէս Պօէրները քանի մը էական կէտերու վրայ որոշ երաշխաւորութիւն ստանալով՝ համաձայնեցան պայքարը վերջացնել, կրնանք օգտուիլ այդպիսի պարագայէ մը, եւ ընդունիլ

մեզի եղած մերձեցման առաջարկ մը՝ մեր դատին հիմնական պահանջներուն որոշ ու եւրոպական վերնակողութեամբ երաշխաւորուած գոհացումն ստանալէ յետոյ: Ատոր մէջ մեզի կըրնան մեծապէս օգնել եւրոպացի ազդեցիկ հայասէրները. բայց յաջողութեան համար ամենէն անհրաժեշտ պայմանը՝ մեր յեղափոխական կուսակցութեանց համերաշխ գործակցութիւնն է այդպիսի ըտպէի մը:

Այս բոլոր նկատողութիւններն ընելէ յետոյ, պէտք իսկ չունիմ ըսելու թէ որքան կը համակրիմ եւրոպական մեծ քաղաքի մը մէջ հայկական ինքնապահպան ուժեղ մարմինի մը կազմութեան գաղափարին, որու մասին այնքան անգամներ գրած եմ Անահիթի մէջ եւ զոր Տր. Գաբրիէլեան կ'առաջարկէ՝ անգամ մը եւս՝ կորովի ու խանդավառ կոչով մը: Ատի անհրաժեշտութիւն մըն է, որ պէտք էր իրագործուած ըլլար շատոնց, եւ որ չիրագործուեցաւ դեռ՝ միայն ու միայն մեր հարուստներուն ամենաստուար մեծամասնութեան անտարբերութեան պատճառով: Արդարեւ, կը բաւէր որ մէկ հարուստ մը կարեւոր գումար մը ինքնաբերաբար արամադրէր՝ այդ գաղափարն իսկոյն գործադրութեան դնելու համար, եւ « լրագրական » բոլոր ճիգերը որ կը պարզուին քանի մը տարիէ ի վեր այնքան ամուլ կերպով՝ այլ եւս աւելորդ պիտի ըլլային. գործը արդէն սկսած պիտի ըլլար ապրիլ: Մամուլի կոչերով, հանրային հանգանակութիւնով այդպիսի մեծ ծրագրի մը « լուրջ » յաջողութեանը մասին թերահաւատ եմ զժբազդաբար. մեր չէղոք ըսուած հասարակութիւնը մամուլի կոչերով զգածուելէ հետո է. Ձէյթունի որբերուն համար բացուած հանգանակութեան համար՝ մամուլը իր ամենէն պերճախօս շեշտերը հնչեցուց, (եւ Պ. Չերազ շատ գովելի կերպով դեռ կը շարունակէ իր ճիգերը այդ մասին). արդիւնքը շատ խեղճ եղաւ. ցարդ հազիւ 10,000 Ֆր. գոյացած է, մինչ ամսուազն 100,000 Ֆր. պէտք էր: Եթէ այսպիսի անվիճելիօքէն յարգելի եւ սրտաշարժ նպատակի մը համար մեր հասարակութիւնը այսքան զանգաղ եւ ժխտ է, չեմ կրնար երեւակայել որ ընկերութիւն մը հիմնելու համար փութայ ճարել այն մեծ գումարները որ հարկաւոր են այդպիսի ընդարձակ ծրագիր մը իրականացնելու համար: Յուսահատ չեմ սակայն այդ ծրագրին յաջողման կարելիութենէն. կը շեշտեմ միայն կարեւոր գումարով մը սկսելու անհրաժեշտութիւնը: Հարուստ մը որ այդ հիմնաքարը ուզէ դնել, կրնայ անմահանալ: Չկայ հայ հարուստ մը որ անմահանալ ուզէ . . .

Բայց համակարծիք չեմ Տր. Գաբրիէլեանին երբ այժմէն իսկ կ'ուզէ այդ կազմուելիք ընկերութեան տալ ոգի մը թշնամի հայ յեղափոխական մարմիններուն: Այդ ոգւով հիմնուած մարմին մը պառակտումի նոր տարր մը կրնայ կազմել, ու բարիքէն աւելի չարիք կրնայ արտադրել: Դերը՝ զոր ըստ իս՝ այդ մարմինը պիտի կատարէ, անշատ է յեղափոխական գործունէւ

ու թեանէն, եւ զայն կը լրացնէ. այդպիսի մարմնոյ մը հիմնարկութեան գաղափարը, հայ յեղափոխութեան սկսելէն շատ առաջ, Ծերենցի օրով յղացուած է արդէն. եթէ շատոնց այդ գաղափարն իրագործուած ըլլար, թերեւս խել մը աղէտքներու առաջքն աճուէր, կամ պէթ շատ մը վէրքեր աւելի փութով եւ խնամով գարմանուէին. այժմ որ տարիներէ ի վեր յեղափոխական մարմիններ գոյութիւն ունին եւ կը գործեն, այդ հին գաղափարը իր անհրաժեշտութիւնը չէ կորսնցուցած. ընդհակառակն: Ամէն նոր դէպք աւելի ուժեղ կը զգացնէ անոր պակասը:

Ընկերութիւնը որ պէտք է հիմնուի ոչ, միայն պէտք չէ թշնամի ըլլայ. յեղափոխական մարմիններուն, այլ պէտք է ջանալ անոնց վրայ բարեբար ազդեցութիւն մը ունենալ, պէտք է զանոնք պառակտող գծաութիւնները ջնջելու, զանոնք մերձեցնելու աշխատի, ճգնի մեղմացնել անոնցմէ ոմանց ծայրայեղ յանդուժութիւնները: Իսկ իր բուն գործունէութիւնը պէտք է ըլլայ քաղաքակիրթ աշխարհին ճանչցնել մեր ազգին պատմութիւնը. քաղաքակիրթութիւնը եւ ցաւերը, եւրոպական եւ ամերիկեան կառավարութեանց ուշադրութիւնը միշտ հրաւիրել մեր գասին վրայ, նպաստել մեր ազգին պահպանման, նիւթական ու մտաւոր զարգացման, օգնել հանրօգուտ մտաւորականներու (օրինակ՝ Նորայր Բիւզանդացիի պէս գիտուններու) արտադրութեանց երեւման, օգնել ազգայ խոտապող ուսանողներու, վաղուան Հայութեան համար «մարդ»եր կազմել, եւն. եւն.

Հոկառակ այս կէտերուն մէջ ստեղծական տարբերութիւններուն որ զիս կը բաժնին Տր. Գաբրիէլեանէն, իր գիրքը, կը կրկնուի, ինծի կը թուի իբրեւ շատ կարեւոր, ցնցիչ ու այժմէական գործ մը: Անոր ծայրայեղութիւններն ու անարդարութիւններն իսկ յառաջ կու գան բուն ազգասիրութենէ մը, Հայութեան սպառնացող ահաւոր վտանգին խռովեցուցիչ զգացման սաստկութենէն: Ազնուութիւնը ձգտումներուն որ մղած են հեղինակը՝ այդ գործը զրնլու, վէճի իսկ չի կրնար ենթարկուի:

Ասոր համար է որ տարօրինապէս անհարկի դուռայ այն եղանակը որով Չայն Հայրենեացի «Տերտունի»ն քննադատած էր այդ գիրքը: Տր. Գաբրիէլեան հայ յեղափոխականները խստիք քննադատած ըլլալով, անշուշտ ինքն իսկ կը սպասէր որ իր գործն ալ քննադատուէր խստօրէն: Բայց քննադատութիւն ընել չէ ելլել ըսելը թէ Տր. Գաբրիէլեան յաճախող չունեցող բժիշկ մըն է, թէ իրեն ըրելամ ընելու համար է որ այդ գիրքը հրատարակած է, եւ թէ « մարդը պարապ տեղը չէ որ Ակնցի է ծնել ! »: «Տերտունի»ին հայրենասիրական հետադարձութեան ժայթքումէն, նոյն իսկ « Չայն Հայրենեաց »ին հիմնարկութեան շատ առաջ, Տր. Գաբրիէլեան ազգասիրական եռանդուն եւ ուշիմ գործունէութիւն մը ունեցած է. եւ յեղափոխական գործունէութեան անցեալին սխալները — անոնք գոր-

վեր. Հնչակեան կուսակցութիւնը ինքն ալ կ'ընդունի, — Տր. Գաբրիէլեան այդ առաջին շրջանին՝ երբ վեր. Հնչակեան կուսակցութիւնը վեռ գոյութիւն չունէր՝ արդէն մասնանիւ ըրած է ողջմտօրէն: « Հայկական Միութիւն » մը, գրեթէ այն ծրագրով զոր այսօր կը բաղձանք իրագործուած տեսնել, արդէն ինք յղացած եւ առաջարկած է տասը տարի առաջ, իր պերճախօս մէկ ատենարանութեան մէջ: Մա'րդ մըն է, որ ինքիւնը, իր միջոցներովը, իր ըմբռնած եղանակովը, բայց ամենայն անձնուիրութեամբ ու եռանդով աշխատած է տարիներէ ի վեր իր ազգին համար: Ներելի չէ ուրանալ ինչ որ կայ արժանիք այդպիսի անձի մը մէջ, եւ անոր քննադատութեան արժէքը կոտորելու կ'ընել անոր անձը ծիծաղելի դարձնել ձգտելով: Իսկ մէկ տողով շահամուռ ու շարլաթան հուշակել բոլոր Ակնցիները, — այսինքն Հայութիւնը կազմող ամենէն արուեստագէտ, ամենէն նուրբ ու ազնուական տարրերէն մին, — անազնիւ թեթեւսօլիկութիւն մըն է, որ զիս չի զարմացներ « Տերտունի »ին կողմէն, բայց շատ կը զարմացնէ երբ զայն կը տեսնեմ վեր. Հնչակեան կուսակցութեան օրկանին մէջ հիւրընկալուած: Եթէ « Տերտունի » կ'ուզէ ըմբռնել տարբերութիւնը ճշմարիտ քննադատութեան եւ իրենին միջեւ, թող կարգայ Ազգս Բեւի մէջ Շ. ստորագրող Հնչակեանին յօդուածները, անոնք ներողամիտ կամ համակրական ըլլալէ հետո եւ Տր. Գաբրիէլեանի համար, բայց բարեկիրթ, փաստերու վրայ հիմնուած, լաւ տրամաբանուած յօդուածներ են (1): Ինչ հակասութիւն՝ ար-

(1) Ըսիլ չեմ ուզեր մէ համաձայն եմ Շ. ի պարզած բոլոր տեսութեանց: Տր. Գաբրիէլեանի յայտնած մէկ բանի ծայրայեղութիւնները կամ անճշտութիւնները քննադատելով, ինքն ալ կ'իյնայ հակընդդէմ ծայրայեղութեան մէջ. կը ձգտի ապացուցանել որ նոյն իսկ եթէ Հայք — Ներսէս Պատրիարք ու յեղափոխականներ — ոչինչ քրած ըլլային, Թուրք կառավարութիւնը արդէն որոշած էր Հայ տարրը բնաջնջ ընել եւ մէ այդ որոշումը պիտի գործադրէր նոյն իսկ եթէ Հայերը անշարժ մնացած ըլլային: Թէ մուրք կառավարութիւնը որոշած էր սեղմել ու տկարացնել Հայութիւնը, այդ ճիշդ է, բայց մէ ան երբեք պիտի չկարենար այն հայաջնջ ծրագրել իրականացնել այն ահաւոր չափով որով իրականացուց, առանց Հայոց տուած պատրուակներուն, ասիկա աւելի ճիշդ է: Եւ եթէ ասիկա ճիշդ ըլլար, ինչու վեր. Հնչակեանները տարիներէ ի վեր կը գատափետէին Դրօշակեանները իբրեւ իրենց արարքներով Հայութեան վրայ աղէտներ հրաւիրող: Չայն Հայրենեացը, Սասունի դէպքերէն յետոյ՝ այլանդակ ծայրայեղութեանց հասնող յօդուածներով մինչեւ իսկ « ազգասպան » կ'անուանէր Դրօշակեանց վարիչ մարմինը: Անուանալի է որ մեր վրայ խուժած դժբաղդութիւններուն մէջ՝ մենք ալ ունեցած ենք պատասխանատուութեան բաժին՝ մեր ռոմանթիկ եւ անբաղաքագէտ խնդրավառութեամբ, մեր հաշուելու անկարողութեամբ. զայդ խոտովանիտ բազումները ունենալու ենք: Թուրք կառավարութիւնը սկիզբէն ի վեր կը բաղձայ եւ որոշած է չնջել Ձէյմունը. ինչու ցարդ չէ կրցած չնջել զայն. որովհետեւ Ձէյմունցիք, այնքան բաղաքագէտ որքան բաշ, իրեք պատրուակ չեն տուած. արիւրաբար ինքզինքին կը պաշտպանեն՝ երբ յարձակում կ'ընեն. անպատեհ պարագաներու մէջ նախաարձակ ըլլալու երբեք չեն հաւանիր, 986ն ի վեր բացարձակապէս խոհեմ դիրք մը կը բռնեն, եւ ատոր համար է որ ազատ մնացին կործանուելու որ իշու Սասունի վրայ: Պոլիս ու Իզմիր Հայութիւնը յարայեական հանգստութիւն մը ունէր, որ երբեք պիտի չվերսփուէր, եթէ Իզմիրի եւ Պոլսոյ մէջ Հայերու ձեռքով կուտակուած ռուսներ չգտնուէին եւ

դէն, սկսիլ ծիծաղելի եւ ապուշ « տիրացուի » մը գործը նկատելով այդ գիրքը, եւ այդ ան- նշան համարուած գրքին նուիրել հազարաւոր տողերով անվերջանալի յօդուածներ, որոնք հաւաքած՝ Տր. Գաբրիէլեանի գրքին չափ բա- ւար հատոր մը կրնան կազմել: Տր. Գաբրիէլեանի գիրքը այնքան քիչ « աննշան » է, որ նոյն ինքն Տերսուլին մղած է իր գաղափարներէն մէկ քա- նին փոխելու: Երբ Տերսուլի կ'ըսէ թէ ինք երբեք հակառակ չէ եղած Տր. Գաբրիէլեանի առաջարկածին պէս ընկերութեան մը հիմնա- կուծին, թէ յեղափոխական միջոցներու հետ կրթական, գրական միջոցներով ալ հայկական գաւառի ծառայելու օգտակարութիւնը երբեք չէ ուրացած, ճշմարտութիւնը չէ որ կ'ըսէ. ընդ- հակառակն, մինչեւ ցարդ, « Տերտունի », թէ իր այդ կեղծանունով հրատարակած յօդուած- ներուն եւ թէ Չ. Լ.ի խմբագրականներուն մէջ, միշտ հակակիր կամ հեզմական ակնարկութիւն- ներով խօսած է այդ ուղղութեամբ գործունէ- ութեան առաջարկներու կամ նոյն իսկ արդէն այդ ճամբով կատարուած փորձերու մասին. եւ ասիկա արդէն ապագայութեամբ կը նկատուի օր- կանին մէջ կուտակութեան մը, որ, իր հիմնա- կան ուղղութեան եւ սկզբունքներուն հետեւան- քով, ինքն իսկ առաջին օրէն պէտք էր ամենէն աւելի ուժ տար յեղափոխական գործունէու- թեան այդ անհրաժեշտ լրացուցիչ եւ ինքնին նոյնքան կարեւոր գործունէութեան կազմա- կերպեալ, կանոնաւոր, հզօր ձեւով մը կա- տարուելուն, ինքն իսկ պէտք էր ամենէն աւելի եռանդով աջակցէր որ այդ բաղձացուած ընկե- րութիւնը հիմնուած ըլլար ցարդ, ու մշտական, բազմաձեւ, ուժեղ հայաստան փրոփակմանի շարժում մը շատոնց ի վեր յաջողած ըլլար անհասնելու կողմէ ահաւոր նեղութիւններով փորձուած փոքրիկ ճիգերուն: Armenia բազ- մօգուտ թերթին հիմնարկութիւնը, զոր ամե- նէն աւելի ուրախութեամբ զնահատողներէն եղայ եւ ընականաբար, շատ աւելի առաջ կըր- նար ու պարտէր կատարուած ըլլալ. ու ատոր պէս զեռ շատ, խիստ շատ ձեռնարկներ կան որ պէտք էր կատարուած ըլլային, ու չեն կա- տարուած զեռ: «Տերտունի» մերթ առաջ գացած է մինչեւ իսկ ազգային-գրական կարգ մը ձեռ- նարկներ բուն յեղափոխական գործին գրեթէ մասակար(!) նկատելու չափ. Պէշիկիթաշեանի քերթուածներուն երկրորդ տպագրութեան առ- թիւ գրուած յօդուածի մը մէջ, չկարենալով հանդերձ գործին ներքին արժէքն ուրանալ, ազ- գային պայքարէն հանրային միտքը չիղեցնող, այժմէական, էական հարցէն հեռացնող արարք մը համարձակած էր նկատել երկրորդ տպագ- րութիւնը Պէշիկիթաշեանի երկերուն (որոնք սակայն հայրենիքի սէրը կը պանծացնեն ու

Չէյթունը կ'երգեն ինչպէս ոչ մէկ հայ բանաս- տեղծ չէ երգած) ու գրեթէ ներողութիւն կը խնդրէր իր ընթերցողներէն՝ այդպիսի գործի մը վրայ խօսելով ազգային հարցէն պահ մը իրենց ուշադրութիւնը հեռացուցած ըլլալուն հա- մար(!): Միեւնոյն ձգտումով, ամենէն վայրագ նախասիրներով քարկոծեց, պարզապէս մաս- նիչ ու դաւաճան հռչակեց Պօղոս փաշան, որովհետեւ առեւտրական ազգային վարժարան մը հիմնելու գաղափարն ունեցած է, գաղափար որ, ինչքան ալ ազգային դատին՝ անմիջական ծառայութիւն մը մատուցանելու կոչուած չըլ- լայ, անվիճելիօրէն եւ բազմաթիւ տեսակէտնե- թով « ազգօգուտ » գործ մ'ն է: Ու հիմակ ալ ծաղրելու ելեր է մեր հին մոռցուած բանաստեղ- ծութեան գոհարները երեւան հանելու ճիգերը, որոնք հայ ազգին ինք իր մտաւոր ուժին վրայ հաւատքը աւելցնելու զլիաւոր նպատակն ու- նին՝ բաց ի գեղեցկագիտական հաճոյքէն, եւ որոնց առթիւ փարիզեան մեծ քննադատի մը կողմէ Քուչակի մը Հախէի հետ բաղբատու- թեան դուրիւր ազգային դասին — այո՛, ազգա- յին դատին — աւելի դրականապէս օգտակար է՝ հակցողին համար՝ քան « Տերտունի » ի բոլոր յօդուածները մէկանց: Եթէ «Տերտունի» Հայաստանի մէկ կողմէն միւսը սուրացող, ամէն վայրկեան կեանքը վտանգի դնող, գործի ու միայն գործի մէջ ապրող գործիչ մը ըլլար եւ սրանեղութեամբ մէկզի նետէր ո եւ է գրչի աշխատութիւն՝ իբր անօգուտ, պիտի հասկնայի — առանց արդարացի նկատելու — այդպիսի պարզ ու կտրուկ հոգիի մը ըմբռնումը եւ մտքն իսկ պիտի չանցընէի վէճի մտնել արիւնի մէջ ապրող եւ ուրիշ բան տեսնել չկրցող մարդուն հետ: Բայց այդ որպէս թէ գիշեր ցորեկ պայքարին ու միայն պայքարին վրայ հեռ ի հեռ մտածող « Տերտունի »ն Ս.մերիկայի ասիերէն զեռ չէ հեռացած, եւ իր ամբողջ գործունէու- թիւնը թղթեղէն է: Հայրենիքը զէնքով չէ միայն որ կը շինուի. Վու զէնքով չէ միայն որ անոր կորսուած անկախութիւնը կը վերստաց- ուի. զէնքը, դիրքը, գպրոցը, արուեստը, աւանդութիւնները, երգերը, այս բոլորը մէ- կանց են որ կը հիմնեն հայրենիքը եւ անոր պահպանումը, կամ անոր ազատութեան վերբա- սացումը կ'ապահովեն: Ասկից զատ, արդէն սխալ է կարծել թէ մտաւորական գործունէու- թիւնը արգելք մըն է զիւցազնական ճիգերու զարգացումին. Աղեքսանդր Մակեդոնացին, որ զիւցազնութեան մասին կ'ենթադրեմ՝ դատ չու- նէր առնելու « Տերտունի »էն, Հոմերոսը հետը կը տանէր իր բոլոր պատերազմներուն մէջ, եւ անոր ընթերցումը զինքը չէր արգելել իր քաջութիւնն ապացուցանելէ. ընդհակառակն: Մացցինի, որ իտալական վերածնութեան յղա- ցողն եղաւ ու անոր հոգի'ն՝ մինչեւ վերջը, իր յեղափոխական փրոփակմանի յօդուածներէն զատ՝ իմաստասիրական, գրական, գեղարուես- տական ահագին գործեր արտադրած է, եւ յա- ճախ ալ այդ բոլորը կը ձգէր՝ կիթար զարնելու

եմէ Արիկ Ունեանի ցաւալի սպանումինը տեղի ունեցած ըլլար: Այս բոլորը բնիկ յետոյ, կը կրկնեմ սակայն որ Ե.ի յօդուածները կը համարիմ « ընտանաւորութիւն » — որքան ալ ըլլան միակողմանի — որովհետեւ իրապէս « մտքի արտադրու- միւններ » են, եւ ոչ թէ շողիքի ժայթքումներ:

համար . կրթարն ու իր զուտ մտաւորական աշխատութիւնները չարգիւեցին զինքը Իտալիոյ վերածնութեան ամենէն մեծ նպաստողն ըլլալէ, ոչ ալ Իտալիան՝ վերականգնելէ : Ու ծիծաղելին այն է որ Պէշիկիթաշեանի գործերուն երկրորդ տպագրութիւնը ոչ-այժմէական հռչակող այդ պարտնը Չ. Հ.ին մէջ հրատարակեց սակայն ամենայարգելի անձնաւորութեան մը դէմ իր նախկին գրադրին կողմէ անձնական անհրամստ ու գձուձ վրէժ մը հանելու նպատակով շարադրուած երգիծական լղրճուկ գրութիւն մը , որ չեմ գիտեր ինչ կապ կրնար ունենալ « աղղային բուն գործին հետ » . . . :

Գարշելի տիպարի մը, զաղիր գործի մը ամենավայրագ խարանու մը անչուշտ անհրաժեշտ բան մըն է , եւ այդ մասին ոչ մէկէն դատ առնելու պէտք չունիմ : Բայց ատել՝ ատելու համար , բանի մը կամ մէկու մը դէմ լորձնել՝ ատոր հաճոյքին համար, գործիչի մը կամ կարճակերպութեան մը քննադատելի կողմը ի վեր հանելու ատեն՝ ուրանալ անոր մէջ գտնուած բացայայտ արժանիքը, զայն մէկ գոյնով՝ մաղձի բանակով մը՝ ներկել ու աշլակերպել , ասիկա տգեղ է , անընդունելի՝ առողջ ու գիտակից մտքի մը , չիտակ ու վեհանձն նկարագրի մը համար, եւ այդ ձգտումն է որ կը գտնեմ « Տերտունի »-ի մէջ շատ յաճախ , եւ որ կ'երեւայ թէ անբուժելիորէն պիտի միշտ ապականէ այդ պարտնին գրական փայլուն կարողութիւնները : Մանկասարեանը Չ. Հ.ի մէջ « Ամերիկայի մտաւորական աստղերէն մին » հռչակելէ յետոյ՝ ելլելի պարզապէս հայկական հարցին նկատմամբ թղթակցի մը անոր վերագրած ու առաւել կամ նուազ ճշդութեամբ թարգմանուած կարծիքէն ցասկոտելով՝ զայն ցոյց տալ իբր ողորմելի միջակութիւն մը, որ արգէն ըսուած բաներ կրկնելէն ուրիշ բան չէ ըրած . . . առ նուազն թեւեւ սուղիկութիւն է , եւ այսպիսի վճիռներ արձակողը ծիծաղելի դարձնելէն ուրիշ բանի չի ծառայեր , որովհետեւ Մանկասարեանի մը արժանիքը վերջապէս բնաւ երբեք պէտք չունի « Տերտունի »-ին գնահատումին՝ իր նուիրագործումը գտնելու համար : Ստուգելէ յետոյ որ Պ. Մանկասարեան իրօք ըսած է՝ ճիշդ նոյն բառերով՝ ինչ որ իրեն վերագրուած է , կարելի էր խստիւ քննադատել իր այդ կարծիքը , առանց իր մտաւորական արժէքին դպչելու : Տեսէք Քլէմանսօն, հոյակապ Քլէմանսօն, Փորէսի հետ իր ասենէ մը ի վեր վարած բուն բանակրու ուին մէջ , անոր գլխուն իր բոլոր ուժով իջեցնելէ յետոյ հարկ եղած հարուածները՝ այն կէտերուն մէջ ուր համաձայն չէ անոր դաղիփարներուն, ոչ մէկ առիթ կը փախցնէ բացէ ի բաց, անվերապահօրէն խոստովանելու իր հակառակորդին ուրիշ տեսակէտով ունեցած արժանիքները :

Աւելին կայ կովկասի Մահմետականներուն եւ Հայերուն միջեւ պայթած բաղխումին առթիւ « Տերտունի »-ի հրատարակած յօդուածները անազնուութեան չափն ու սահմանն անցուցին .

այդ յօդուածները կը ճգնէին , կը քրանէին , կը գալարուէին ապացուցանելու համար՝ եւ գրեթէ տեսակ մը ազտոտ ուրախութեամբ՝ թէ կովկասի Հայութիւնը ոչխարի պէս ջարդուած է . ասիկա՝ պարզապէս հարուածելու համար հակաակորդ կուսակցութիւն մը, զայն ցոյց տալով ապիկար՝ առսահայ հասարակութիւնը թաթարական յարձակմանց դէմ պաշտպանելու . եւ ինչ փաստի վրայ կը հիմնուէր « Տերտունի » այդ վճռով խարանելու համար Հայութեան ամբողջ կէսը եւ ամբողջ կուսակցութիւն մը , — Ծարժուլ ըսուած էականապէս գարշելի թերթի մը մէջ անձնական ու գձուձ հախնելով հրատարակուած թղթակցութեան մը վերայ(1) : Արդ , ամէն ոք գիտէ թէ ո՛րքան անարդար էր այդ վճիռը . ճիշդ է միայն որ Բագուի մէջ թրքական անակնկալ յարձակման առաջին երկու օրերուն , անպարտաստ հասարակութիւնը՝ յանկարծակիի եկած՝ ջարդուեցաւ շատ քիչ ինքնապաշտպանութեամբ : պէտք է

(1) Պէտք է այստեղ ըսեմ թէ աններելի կը գտնեմ այն համակրական դիրքը զոր բռնեցին Վեր. Հնչակեան եւ չեզոք Թերթերը « Վարդօ »-ի Իշխանացուածեան դէմ վերջերս սկսած պայքարին հանդէպ , և զոր մինչև իսկ օտանական , անկեղծ , բաց՝ անականներով նուիրագործելու շափ առաջ գացին : Իրօշակեան կուսակցութիւնը շատ քննադատելի կողմեր ունեցած է և ունի մինչև այսօր , մենք միշտ քննադատած ենք զայն , ու պիտի շարունակենք քննադատել . բայց երբեք պէտք չէ մեր քննադատութեան մէջ գործածենք գէնքեր որ աղտոտ են . արդ . Վարդօի պայքարը ոչ անկեղծ , ոչ առնական է , բանի որ յայտնապէս անձնական ու նիւթական չաղտոտ ու գռնելի շարժառիթներէ մզուած է . այդ ողորմելին , որ այսօր կը յայտարարէ թէ Պոլսոյ Յամանեան Պանթային ցոյցուն՝ սկիզբէն հակախոհ է եղեր, թէ Իրօշակեան կազմակերպութիւնը բացարձակ կեղրոնացումի սխտեմի վրայ հիմնուած է՝ շեփորուած ապակեղրոնացման հակառակ , թէ Սաւունի վերջին ջախջախումը արդիւնքն էր այդ կուսակցութեան անի որհուրդ Թաթիքին , ևն . , այդ պարտնը հինգ վեց տարի ի վեր ամենէն զգուշելի , ամենէն անխիղճ անուանարկու մով հալածած է այն բոլոր ճշմարտապէս անկեղծ անձերը որ ճիշդ այդ բաները կ'ըսէին , և՛ զիստապով Իշխանացութեան կարգ մը արարքներուն սխալութիւնը՝ մինչև երկինք հանած է այդ կուսակցութիւնը , և այսօր այդ կուսակցութիւնը կը քննադատէ՝ պարզապէս անձնական գձուձ հաշիւներու գոհացում տալու համար : ճիշդ է որ Իրօշակեանները միշտ օգտուած են Վեր. Հնչակեան կուսակցութեան վարուած ողորմելիներու վայհոյանումներէն , իրենց իբր մատնիչ դատապարտած Արփիարեանին յարձակումները Վեր. Հնչակեանց դէմ՝ իբր աւետարանական ճշմարտութիւններ ընդունած և գտնուած ուզած են գործածել իբր գէնք Վեր. Հնչակեանց վարկը կտրելու համար . Իրօշակեանները միշտ արդէն ներդաժմիտ, խրախուսական դիրք մը բռնած են անուանարկումի միջոցով հակաակորդ մը փշրելու սխտեմին . Վարդօի Թերթը ամենէն բատնելի գործիքն էր անուանարկումի . ամենէն ճիւղաղային գրապարտութիւնները՝ այնտեղ հրատարակուած են շնակալն անպատկառութեամբ . Արեւմտեան բիւրօսն , զիստապով յաճախ որ այդ հրատարակումները բարոյական զիտակից մարդապաշտութեան փորձեր էին պարզապէս , ան՝ փոթ կը կենար , կը խրախուսէր : Այսօր կեղտի ծորակը իրեն դէմ է որ կը բացուի . Արեւմտեան բիւրօսն պէտք չէ զարմանայ : Բայց եւ իրաւունք ունիմ զարմանալու որ Վեր. Հնչակեանները , որոնց դէմ Վարդօ հրատարակած է ամենէն նողկալի գրապարտութիւնները (զոր այժմ ալ ետ առնել մտքէն իսկ չ'անցընէր) հետեւին Իրօշակեան սխտեմին , օգտուելու ուզեն այդքան Թունաւոր և արհամարհելի տիպարէ մը : Իրօշակեան կուսակցութիւնը քննադատելու համար պէտք չկայ այդ փաստին , որ փաստ չէ :

սակայն ի նկատի ունենալ որ Պաքուի մէջ Հայերը ճշմարիտ փոքրամասնութիւն մըն են մահմեդականներու ջախջախիչ մեծամասնութեան մէջ ընկլուզուած, եւ թէ բաց ի գործաւորներէն՝ Բագուի Հայերը, զիւրս ու վայրամուկ կեանքի մէջ թուլցած մարդիկ են եւ բնական է որ դրժուար պաշտպանէին ինքզինքնին՝ աւազակութեամբ ապրող եւ սպանութեան մէջ վարպետ ճիւղներու դէմ (եթէ Փարիզի բոլոր Ափաշները մէկանց իրիկուն մը յարձակէին մեծ պուլվարին սրճարաններուն մարդոցը վրայ, ասոնք ալ դրիթէ նոյնքան դիւրութեամբ պիտի ջարդուէին)։ Կառավարութիւնը բացարձակապէս արգիւնց Պալախանիի հայ բանւորներուն օգնութեան հասնիլ քաղաքին Հայերուն, եւ բռնի զինաթափ ըրաւ անոնք որ զէնք ունէին, զէնք բաժնեց Թաթարներուն, օգնեց անոնց բացէ ի բաց այս պայմաններուն մէջ՝ ոչ միայն ներելի չէր այդքան կոպիտ կերպով դատապարտել նահատակուող Հայութեան հատուած մը, այլ պէտք էր ընդհակառակն հիանալ որ այդ աննպաստ դրութեան մէջ՝ եւ շատ սակաւաթիւ ըլլալով հանդերձ՝ քաղաքին երիտասարդները կրցան վերջ ի վերջոյ զէնքով դիմադրել Թաթարներու խուռն բազմութեան եւ այդ հրոսները ետ մղել։ Կորովի այդ ապստամբութեամբ կատարուեցաւ չնորհիւ Իաշնակցութեան տարրական պարտականութիւն մըն է գովել գործիչ մը կամ կազմակերպութիւն մը՝ զոր քննադատած ես առաջուց երբ լաւ բան մը կ'ընէ։ «Տերտունի» ոչ միայն գիտակցութիւնը չէր ունեցած այդ տարրական պարտականութեան, այլ «հակառակորդին վրայ զերազանց յատկութիւններ գտնել ուզող պարտններուն մէջ՝ ամենէն սիրուելու, ներուելու! խնայուելու!! ներքին ձգտումներ» կ'երեւակայէր։ արդ, այդ այլանդակ յօդուածէն քանի մը օր յետոյ կը ստանայի Վեր. Հնչակեան պաշտօնական օրկանը, Հնչակը, ուր կ'ըսուէր՝ շատ որոշապէս՝ թէ Բագուի Հայութիւնը՝ թէպէտ ուշ՝ գիտցաւ դիմադրել Թաթար գազաններուն. Հնչակեան կուսակցութեան վարիչներն ալ ուրեմն կ'ուզեն «ամենէն սիրուել, ներուել, խնայուել» . . . : Եւ արդէն նոյն իսկ եթէ միլիոններու քաղաքին բոլոր Հայերը սչխարի պէս ջարդուած ըլլային, ի՞նչ իրաւունք ունի մարդ միմիայն այդ մանրամասնութիւնը տեսնելու այն ամբողջ երկարատեւ դիւցազներգութեան մէջ զոր Կովկասի Հայութիւնը կ'ապրի երկու տարիէ ի վեր եւ որ մեր ազգին պատիւն ու վարկը բարձրացուց. եկեղեցական կալուածներու գրաւումէն ի վեր, Կովկասի Հայութիւնը, — Կաթողիկոս, հարուստներ, բանւորներ, մտաւորականութիւն, եւ մանաւանդ յեղափոխականները, — այնպիսի կորովի դիմադրութիւն մը ցոյց տուաւ, որուն նմանը Ռուսիայէն կեղեքուած ուրիշ ցեղերը քիչ անգամ ցոյց տուած են. ու Թաթարներու յարձակումին՝ առաջին շուարումի վայրկեանը անցնելէ յետոյ՝ անպակեց ամսէ ի վեր արիւարար կը դիմադրէ այդ Հայութիւնը. ամէն այն տեղուանքը ուր թիւի

բացարձակ փոքրամասնութիւն չեն ունեցած, Հայերը ետ մղած են ու կը մղեն դեռ մահմեդականները. ճշմարիտ պաշարներու մէջ՝ ուր երկու կողմէն զինուած մարդիկ իրարու հետ կըրուած են՝ Հայերն են միշտ յաղթական ելած. մահմեդականները ջարդած, կոտորած, աւերած են այն զիւրերը միայն՝ որոնք կղզիացած են՝ մահմեդական հոծ զանգուածներու մէջտեղ։ Շուշիի նորագոյն բաղխումին մէջ, մահմեդականներէն շատ աւելի մարդ մտած է քան Հայերէն։ Ինչո՞ւ «Տերտունի» գէթ պարտաճանաչութիւնը չ'ունենար ետ առնելու իր անազնիւ դատափետումը։ Ոչ միայն չըրաւ ատիկա, այլ ելաւ խրատական մըն ալ ուղղելու Կովկասի Հայերուն, հրաւիրելով զանոնք որ Թաթարներուն օրինակին հետեւելով՝ իրենք ալ այրեն, մորթեն ու պղծեն։ Հայ ժողովրդին գերագոյն պարճանքն է՝ այս վերջին ահաւոր շրջանին մէջ՝ իր զահիճներուն դէմ ազնիւ ու քաղաքակիրթ ազգի պէս վարուած ըլլալը. ուր որ կրցած է, Հայը քաջութեամբ ինքզինքը պաշտպանած է, բայց երբ պատահած է որ ինքն ըլլայ յաղթող, երբ իր ձեռքը ինկած են մահմեդական գերիներ, մարդասիրութեամբ վարուած է անոնց հետ. իսկ կիներուն (ինչպէս Երախաններուն) երբեք չէ դպած. Շուշիի վերջին բաղխումին նկարագրութեանց մէջ զոր Մշակը հրատարակած էր, մեծ գոհութեամբ տեսայ որ՝ մինչ Թաթարները գազանական վայրագութեամբ կը վարուէին հայ կանանց ու տղոց հետ, Հայերը Թաթար վիրաւորները հիւանդանոց կը տանէին ու կը խնամէին։ Սյդ վեհ զգացումներն են դարձեալ որ մղեցին Կովկասի Հայերը՝ Թաթարներուն յարձակմանց ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տալէ յետոյ՝ անոնց խելահաս ու լուրջ (կամ գէթ այդպէս նկատուած) մասին կոչ ուղղելու հայտնութեան, գործուած ապուշ սխալին դարմանման։ Պատմութիւնը օր մը սքանչացմամբ պիտի արձանագրէ Հայոց այդ վարմունքը, ուր կորովը, ազնուութիւնը եւ ուշիմութիւնը միացան. եւ հոտ է բուն վրէժը զոր մեր ժողովուրդը լուծած պիտի ըլլայ այդ անգիտակից ու ստորագաս անասուններու վոհմակէն։ Յաւալի — եւ ապշեցուցիչ — է ինձի համար որ Չայն Հայրենեացին մէջ — ու հոն միայն — արտայայտուած ըլլայ Թաթարներուն նմանելու, անոնց հաւասարելու, անոնց պէս անասնանալու հրաւեր մը . . . :

Ասոնք բնիւր մէջ հաճոյք գտալէ հետու եմ Աւելի գոհ պիտի ըլլայի որ Վեր. Հնչակեան կուսակցութիւնը ինքն իսկ ասոնք զգացուցած ըլլար «Տերտունի»ին։ Կուսակցութիւնը չեմ շփոթեր այդ անհատին հետ, բայց չեմ կրնար ըմբռնել որ կուսակցութիւնը թոյլ տայ անհատի մը՝ արտայայտել կուսակցութեան օրկաններէն մէկուն մէջ զգացումներ ու կարծիքներ որ այդ կուսակցութեան ոգին եւ զայն հիմնողներուն զգացմանց — գէթ ես այդպէս կը կարծեմ, — համաձայն չեն։

Այս բոլորը կ'ըսեմ շատ քիչ հաճոյքով՝ այն ամենապարզ պատճառաւ որ վայրկեանը ուր կը գտնուէինք՝ այնքան կ'ընտոտ, ծանրակշիռ ու անաւոր է մեր ազգին համար, որ բոլոր մը պէտք չէր կորսնցնէինք այսպիսի ճղճիմ հարցերով զբաղելու համար։ Այո՛, վայրկեանը կ'ընտոտ, ծանրակշիռ ու անաւոր է աւելի քան երբեք։ Պոլիս՝ Սուլթանը սպաննելու փորձին, Իզմիրի մէջ երեւան ելած դաւին եւ Ունճեան Աբիկ էֆէնտիի սպանութեան հետեւանքով՝ մեծ հալածանքի օրերը վերսկսած են։ Հայաստանէն ջարդի լուրեր կուգան։ Կովկասի Հայութիւնը արիւններու մէջ կը լողայ։ Սուլթանին դէմ պատրաստուած դաւի մասին՝ չյաջողելուն համար ցաւ եւ զայն պատրաստողներուն համար հիացում յայտնելէն սուրիշ ըսելիք չկայ։ Ամէն կերպով գովելի ընթացք մը ցոյց տուին՝ այս առթիւ՝ Տր. Ապտուլլահ պէյի պէս ազատամիտ թուրքերը՝ որ այդ դաւը հռչակեցին թուրքերու կողմէ սարքուած։ Նոյնը պիտի չըսեմ սակայն Իզմիրի մէջ երեւան ելած դաւին, ինչպէս եւ Աբիկ Ունճեանի սպանութեան համար։ Երկու դէպքերուն մասին ալ՝ հրապարակաւ տրուած տեղեկութիւնները հակասական են, բայց ապացուցուած է որ՝ մասամբ՝ Հայեր են Իզմիրի, եւ Աթէնքի մէջ ուսմբեր կուտակողները՝ ցոյց մը ընելու նպատակաւ, եւ Հայեր են որ Աբիկ Ունճեանը սպաննած են։ Թէ ո՞ր կուսակցութիւններն են որ այդ արարքներուն որոշումը տուած են, զայդ ճշգիւ անպատեհ է, քանի որ ոչ մէկ կուսակցութիւն հրապարակաւ չէ խոստովանած անոնց հայրութիւնը։ Բայց որ կուսակցութիւնն ալ ըլլայ զանոնք որոշողը, սխալ էր որոշումը։ Եթէ իրաւ է՝ նոյն իսկ շատ վերածուած չափով մը՝ թէ հայ գործօն մարմին մը որոշած էր թէ՛ Իզմիրի եւ թէ՛ Տաճկաստանի ուրիշ քանի մը քաղաքներու եւրոպական ու կառավարական գլխաւոր շէնքերը օդը հանել օգոստ։ Յօր օրը, այդպիսի որոշում մը փաստ ուրիշ արգիւնք չէր կրնար տալ մեր ժողովրդին ու մեր դատին։ Միշտ ըսած եմ որ դատապարտելի կը գտնեմ՝ ինքնին՝ եւրոպական հաստատութիւններ օդը հանելու եւ անմեղ մարդիկ այդպէսով սպաննելու արարքը։ այդպիսի արարքներ համաշխարհային հակակրօթիւն կ'արթնցնեն Հայութեան դէմ, եւ ուրիշ ոչինչ։ Ատկէց զատ, թուականը ուր որոշումը տրուած էր այդ ծրագրին, արդէն ամենաանյարմարն էր ու եւ է հայկական ցոյցի համար. ուստօ՛ճափոնական պատերազմը զեռ չէր վերջացած եւ յուսալի չէր որ շուտ վերջանայ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի միջեւ պատերազմի վախը զեռ չէր փարատած, այդպիսի բարդ կացութեան մը մէջ՝ Եւրոպա մասն անգամ չպիտի շարժէր, նոյն իսկ եթէ ամբողջ Իզմիրը օդը ելլէր, Արեւելեան հարցը բանալու համար։ Եւրոպա ուրիշ բան պիտի չընէր բայց եթէ Եւրոպացւոց կրած նիւթական կորուստներուն գումարը պահանջել

թուրք կառավարութեանն, ու թուրք կառավարութեանն ալ վրէժը պիտի լուծէր՝ հազարաւոր Հայեր ջարդելով . . .

Առանց իսկ որ այդ ծրագիրը գործադրուած ըլլայ, ուսմբերու գիւտը Իզմիրի ինչպէս եւ Աթէնքի մէջ, արդէն իր ազեկաւոր հետեւանքն ունեցած է. Յոյները Աթէնքէն վաճառած են Հայերը, Աթէնքի Հայոց եկեղեցին փակած. յոյն լրագիրներ Հայոց դէմ կատաղի յօդուածներ սկսած են հրատարակել. որպէս թէ քիչ թշնամիներ ունենայինք աշխարհիս մէջ, անա Յոյներն ալ որոշապէս մեղի թշնամի դարձած կը գտնենք։ Եւ այդ պատճառով Սուլթանին սպանութեան փորձն ալ, որ թուրքերու կը վերագրուէր մինչեւ այդ պահը, Հայոց կը վերագրուի։ Թուրք ոտականութիւնը Պոլսոյ ամէն խորշերուն մէջ ուսմբեր կը զետեղէ, յետոյ զանոնք գտնելով՝ Հայոց վերագրելու եւ մտաքերը Հայոց դէմ աւելի զրգռելու համար. թուրք թերթերը ջարդի հրաւիրող յօդուածներ կը հրատարակեն Հայոց դէմ, հարիւրաւոր Հայաստանցի Հայեր Պոլսէն կ'արտաքսուին, բազմաթիւ հայ պաշտօնեաներ կը վաճառուին եւրոպական հաստատութիւններէ. Պոլիս, Իզմիր եւ Տաճկաստանի բոլոր հայաքնակ քաղաքներուն մէջ հալածանք կը բերապատկուի։ Ընդհանուր կոտորածի երկիւղը կը տիրէ ամէն կողմ. եւ եթէ կոտորած տեղի ունենայ, այս անգամ. ինչպէս կը գրէ ինքն իսկ Բիյառ Փրօ Արմէնիային մէջ, Պոլսոյ դեսպանները այժմէն իսկ կը թուին շատ աւելի քիչ տրամադիր քան 95-96ին՝ Հայոց ի նպաստ միջամտութիւն ընելու . . .

Որպէս թէ ուսմբերու խնդրոյն յառաջ բերած անաւոր կացութիւնը բնաւական չըլլար, Աբիկ Ունճեանի սպանութիւնն եկաւ կացութիւնը աւելի կ'ընտոտ եւ սպաննազին դարձնելու։ Յեղափոխական գործին դրամ տուած չըլլալուն համար միայն հայ հարուստ մը սպաննելը մարդկային ազատութեան սկզբունքներուն դէմ ամենամանր մեղանշում մըն է, որուն երբեք չեմ կրնար համաձայնիլ։ Իսկ Ունճեանի սպանութիւնը մասնաւորապէս դատապարտելի կը գտնեմ. Ունճեան Հայութեան « օգտակար » անձնաւորութիւն մըն էր. որքան ալ մօտէն ամիրայական ու թրքաբարոյ կողմեր ունենար իր ներքին անձը, որուն համակրելէ հետու եմ, — իբր ազգին անդամ մը՝ միշտ ազգին օգտակար եղած է, եւ մեծապէս. այդ ինքզինքը թրքասէր կեղծող ամիրան՝ ամենաանկեղծ ազգասէր մըն էր. Ներսէս Պատրիարքի ինչպէս իրիմեանի աջակից եղած է ազգային գործին մէջ. Իզմիրլեանի օրով, հայկական խնդրոյ ամենաստաք օրերուն, աջակից եղած է՝ մութի մէջ՝ Իզմիրլեանի քաղաքականութեան. ամէն ոք գիտէ որ Սովետոյ Յանձնաժողովի հողին է է եղած. Արմաշի դարձեալներ իր գործն էր մեծ մասամբ. Կեղը. Վարժարանի հիմնարկութեան օգնած է. երբ վերջերս Սոսյ կաթողիկոսը Պոլիս եկաւ, ինքն է որ հաւաքեց գումար մը՝ Կիլիկիոյ աթոռը զօրացնելու համար։ 96ին, ինք

եղաւ միակ հայ հարուստը որ վեց ամիս բանտ մնաց իբր ազգասէր. ու դատավարութեան միջոցին իր խորխոս ու ազնիւ դիրքը սքանչացում պատճառած էր թէ՛ Թուրքերուն թէ՛ Եւրոպացւոց (ես չեմ մոռցած Թանի թղթակցին այդ դատավարութեան նուիրած հիացական յօդուածը: Յաւալի է որ այդպիսի Հայ մը Հայսու մը ձեռքով մտած ըլլայ . . .)

Կովկասի մէջ, բոլոր ջանքերը որ կատարուեցան Թուրք եւ հայ տարրերը հաշտեցնելու համար՝ ապարդիւն եղան, որովհետեւ ինչպէս այժմ կը յայտնուի, Թուրքերը անկեղծ չէին իրենց հաշտութեան մէջ, եւ այդ դադար գործածեր են նոր յարձակման մը պատրաստուելու: Այդ անբաններուն վայրագութեանը իրենց ապուշութիւնը միայն կը հաւասարի. իսկ այդ ապուշութենէն շատ աւելի վեր է ոռւս կառավարութեան ապուշութիւնը: Բայց Թուրքերուն ընթացքը բացատրելի է վերջապէս իրենց տգիտութեամբը, մտեռանդութեամբը, իրենց աւագակային բարբերովը ու Սուլթանին գաղտնի դրդուումներովը. ինչպէս բացատրել ոռւս կառավարութեան ընթացքը. նոյն իսկ ենթադրելով զայն շնականօրէն ոճրագործ, տրաւարանական ոչինչ կարելի է գտնել անոր մէջ. այդ ընթացքը հակասական է, եւ էականապէս («հակառուս»): քանի մը չարաթ առաջ, Չարը որոչեց հայ դպրոցներու վերաբացումը եւ եկեղեցական կալուածներու դարձը հայ եկեղեցական վարչութեան. կարծեցինք որ ոռւս կառավարութիւնը վերակսած էր ըմբռնել իր իրական շահերը եւ թէ այն անագին սխալը զոր գործած էր այս վերջին շրջանին մէջ՝ իր հակահայ քաղաքականութեամբը պիտի ջանար այժմ լրջօրէն դարմանել. բայց այդ բարի լուրին անմիջապէս յաջորդեց գոյժը Թուրք վստալութեանց որոնք ցարդ կը շարունակուին եւ կը խրախուսուին ոռւս իշխանութեանց կողմէ: Ինչ տրամաբանութիւն կարելի է գտնել ասոր մէջ: Ինչպէս ոռւս կառավարութիւնը չ'ըմբռնեւ այն մեծ վտանգը զոր իր ձեռքերով իրեն դէմ կը պատրաստէ Թուրքերը սանձարձակ թողուլ իրենց աւերումի գործին մէջ: Այդ հակասական ու յիմար քաղաքականութիւնը վերջ պիտի գտնէ սակայն անհրաժեշտօրէն. Թաթարներուն այս վերջին ամէն չափ ու սահման անցնող վայրագութիւնները պիտի բռնադատեն ոռւս կառավարութիւնը արմատական միջոցներ ձեռք առնել «կանանչ վտանգ» չեզոքացնելու համար: Առանց ատոր, Ռուսիա ոչ կարող կ'ըլլայ Կովկասը հանդարտեցնելու, ոչ ալ իրաւունք ու երես կրնայ ունենալ Արեւելեան խնդրոյն միջամտելու իբր քրիստոնէից պաշտպան, — ինչ որ ընելու մտադիր կը թուի եւ ինչ որ միակ բանն է որ այսուհետեւ կրնայ ու պարտի ընել:

Ընդհանուր քաղաքական կաղութիւնը, բարդ ու մրկալից, շատ շահեկան է սակայն այս պահուս: Ռուսո-ճափոնական խաղաղութեան կնքումը եւ անգլո-ճափոնական դաշնագրու-

թեան վերանորոգումը՝ բաւական որոշ կացութիւն մը ստեղծեցին Մայրագոյն Արեւելքի հարցերուն համար. Անգլիա եւ Ճափոն գերիշխան կը տիրապետին Մայրագոյն Արեւելքի մէջ, ու Ռուսը քայլ մը առնելու անկարող է դէպ ի Ասիա: Ռուսը պիտի ընէ հիմայ՝ ստիպմամբ՝ ինչ որ ամէն բանէ առաջ եւ ինքնաբերաբար ընելու էր արդէն, եթէ խելք ունենար. պիտի կեդրոնացնէ իր ուշադրութիւնը մերձաւոր Արեւելքի վրայ. Անգլիա, որ այժմ աւելի ուժեղ է քան երբեք — Ճափոնի դաշնակցութիւնը եւ Յրանսայի, Ամերիկայի, Իտալիոյ, Սպանիոյ համակրութիւնն իրեն հետ ունենալով, — եւ որ այս պահուս իր բուն թշնամին կը նկատէ Գերմանիան եւ ոչ թէ Ռուսիան, թոյլ պիտի տայ որ Ռուսը աւելի ազատ շարժի Մերձաւոր Արեւելքի հարցերուն մէջ. Ամերիկեան մեծ թիրթիր նոյն իսկ հաւաստեցին թէ Անգլո-ճափոնական նոր դաշնագրութիւնը գլխաւոր նպատակ ունի «սթաթու քուս» պահպանել ամբողջ Ասիոյ մէջ, բայց ի Փոֆր Ասիայեւ եւ Արարիայեւ, եւ թէ Անգլիա մինչեւ իսկ թոյլ պիտի տայ Ռուսին յառաջանալ Հայաստանի մէջ ու Պոլիսը գրաւել: Յայտնի է որ Անգլիա այժմ իր բոլոր ջանքերը կը նուիրէ Գերմանիոյ ընդարձակումին, զօրեղացումին առաջին անելու, եւ հաւանական է որ նախընտրէ Ռուսիոյ թողուլ Հայաստանն ու Պոլիսը (ինք ալ Արարիոյ վրայ դնելով ձեռքը) քան Գերմանիան սիրացած տեսնել ամբողջ Թուրքիոյ:

Անգլիան ակներեւ փափաք ունի Ռուսիան իր կողմը քաշելու, Գերմանիոյ գիրկն իյնալէ զայն արգիլելու, եւ անոր հետ համաձայնութեամբ լուծելու Արեւելեան հարցը. Խնդիր է թէ՛ ոռւս կառավարութիւնը պիտի ըմբռնէ՞ որ իր շահը իբօք ոչ թէ ամենախարդախ Գերմանիոյ այլ Անգլիոյ հետ համաձայնելու մէջ կը կայանայ. շատ դժուար է այդ խելացութիւնը յուսալ ոռուսական արդի շուարած, գառամ, անգրտակից կառավարութենէն: Եթէ Գերմանիոյ լարած ծուղակին մէջ իյնայ, Արեւելեան հարցը դեռ երկայն ատեն կը մնայ այժմեան քառասյին վիճակին մէջ, եւ մեր կացութիւնը հետզհետէ աւելի ահաւոր կը դառնայ: Հակառակ պարագային, Արեւելեան հարցին լուծումը կարելի է մօտալուտ համարիլ: Անշուշտ, նոյն իսկ եթէ Ռուսիա մերձենայ Անգլիոյ, Գերմանիա՝ որ Մարտի խնդրոյն մէջ իր բռնած այլանդակ բայց ճարպիկ դերքով՝ Յրանսան ճզմեց ու իր քաղաքական վարկը անհունօրէն՝ եւ աղետաւորաբար՝ բարձրացուց, շատ հեշտութեամբ պիտի չթողու որ զինքը մարդու տեղ չգնելով՝ իր գլխուն վրայէն կարգադրեն հարց մը որուն մէջ ինքը ամենակարեւոր դերը կ'ուզէ խաղալ: Գերմանիան ամենամեծ արգելքն է՝ ոյս միջոցին՝ Արեւելեան խնդրոյն լուծման, բայց Գերմանիան թէպէտ շատ զօրեղ, այս պահուս կը գտնուի ձիչդ այն դրութեան մէջ ուր կը գտնուէր ձուսիա ոռուս-ճափոնական պատե-

րազմին պայթած միջոցին . իր ետամուլ, գոռոզ, խարդախ ու հակաքաղաքակրթական ընթացքով, գերման կառավարութիւնը այժմ բովանդակ մարդկութեան ատելութիւնը իր վրայ հրաւիրած է . նոյն իսկ իր երկու դաշնակիցները, Աւստրիա եւ Իտալիա, ներքնապէս կ'ատեն զինքը եւ շատ աւելի համակիր են Ֆրանսայի եւ Անգլիոյ :

Ամէն բան կախեալ է Ռուսիոյ Անգլիոյ հետ մերձեցումէն : Գերմանիա, որքան ալ զօրեղ ըլլայ, դժուար է որ՝ այդ պարագային կարենայ արգիլել բովանդակ Եւրոպայի (ու Ամերիկայի) բաղձանքին իրազրծումը . տեսանք թէ ինչպէս գլուխ ծոցը կրեալէի հարցին լուծման մէջ, որուն կ'ընդդիմանար բայց որ կատարուեցաւ հակառակ իրեն : Ամէն պարագայի մէջ, ինչ որ անխուսափելի է, մակեդոնական հարցին պայթումն է ի մօտոյ : Մակեդոնական շարժման պարագլուխները, որոնք, շատ աւելի չըջանայեաց ու խոհեմ քան մեր Գաշնակցականները, ամբողջ ուսուս-ճափոնական պատերազմին միջոցին սպասողական զիբք մը բռնեցին, տարակոյս չկայ որ այժմ պիտի վերսկսին գործելու ըրոպէն ա՛յնքան յարմար է իրենց համար . սերպո-թուրք եւ պուլկարո-թուրք յարաբերութիւնները չափազանց ձգտուած են արդէն :

Եւրոպական տէրութիւնները բաց ի Գերմանիայէն՝ կը պահանջեն այս պահուս Բ. Դոնէն որ Մակեդոնիոյ ելեւմտից եւրոպական քոնթրոլի մը տակ առնուելուն հաւանի . Դոնը կը մերժէ . Տէրութիւնները կը սպառնան նաւային ցոյց մ'ընել՝ եթէ Դոնը յամառի իր մերժման մէջ : Ինչպէս պիտի լուծուի այս կնճիռը : Եթէ ցոյցը կատարուի, ոչ ոք կարող է գուշակել թէ ի՞նչ հետեւանքներ կրնան յառաջ գալ . թերեւս քրիստոնէից ջարդ մը կատարած մահմետականներուն կողմէն, մակեդոնական ապստամբութեան վերարժարծում մը, գուցէ նոյն իսկ պատերազմ Թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ, — այսինքն Արեւելեան խնդրոյն վերջնական բացումը : Եթէ Դոնը տեղի տայ, Մակեդոնիոյ մէջ ինքնավար բեժիմի մը հաստատման առաջին եւ էական քայլերէն մին առնուած պիտի ըլլայ, եւ այդ բեժիմին ամբողջական իրականացումը այլ եւս կը յառաջանայ անդիմադրելի բնաշրջումով մը : Այն ատեն, եթէ Տէրութիւնները, զլիաւորապէս Անգլիա, Ռուսիա եւ Ֆրանսա, համաձայն ըլլան, միեւնոյն բեժիմը կրնան հաստատել տաճկական Հայաստանի մէջ : Խաղաղութեան երկրորդ Համաժողովը պիտի գումարուի ի մօտոյ Լա Հէի մէջ . անշուշտ՝ ինչպէս առաջնոյն ատեն՝ Դոնը ամէն ջանք պիտի ընէ որ այդ Համաժողովին օրակարգին մէջ չմտնէ արեւելեան հարցը . բայց զէպքերը կրնան այնպիսի կացութիւն մը ստեղծել որ խաղաղութեան այդ Համաժողովը երկրորդ Պերլինեան Վեհաժողով մը ըլլայ, առաջնոյն պակաս ու տարտամ ձգածը վերջնապէս կարգադրող :

Այս բոլորին մէջ կայ մեզի համար յոյսի

նշոյլ մը : Որոշապէս այժմէն որակել այն շօշափելի ձևը որով այդ յոյսը պիտի իրականանայ, անկարելի է : Կան հաւանականութիւններ, կան տարրեր, որոնք յուսալ կուտան թէ լուծում մը՝ ո եւ է կերպով՝ հեռու չէ Արեւելեան խնդրոյն համար : Եթէ մեր ազգը ունի հեռատեսութիւն, « քաղաքական զգացում », ճարպիկութիւն ու կորով, պէտք է գիտնայ օգտուել ներկայ խառնաշփոթ ու բեղուն կացութիւնէն : Ապագայ պատահականութիւնները տաճկական Հայաստանի համար, երկու ձևով կրնան ներկայանալ, որքան որ կարելի է գուշակել տիրող բարդ ու քառային պայմաններուն մէջէն : Եթէ Մակեդոնիոյ մէջ տէրութեանց պահանջքը ընդունուի Բ. Դոնէն՝ առանց բուն միջոցներու պէտք մնալու, հաւանական է որ Տէրութիւնները պահանջեն Դոնէն՝ միեւնոյն բեժիմը տաճկական Հայաստանի մէջ ալ ներմուծել . եւ կամ՝ եթէ մանաւանդ բուն միջոցներու գործածութեամբ հարցը մեծ բաղիւստներու փուլին մէջ մտնէ, կրնայ ըլլալ որ արեւմտեան պետութիւնները թոյլ տան Ռուսիոյ՝ տաճկական Հայաստանը «խաղաղեցնել» — որ ըսել է իր գերիշխանութիւնը տարածել հոն : Եպիպոսոսի տիրանալէն ի վեր, Անգլիա դադարած է Հայաստանի տալէ այն կարեւորութիւնը՝ իր շահերուն տեսակէտով՝ զոր կուտար ատենօք : Յճի ջարդերու միջոցին, անգլիական մամուլը միահամուռ կը հրաւիրէր Ռուսիան գրաւել Հայաստանը . եթէ Ռուսիա ուզէ այսօր այդ քայլն առնել եւ եթէ Անգլիոյ հետ համաշխարհային քաղաքականութեան էական հարցերուն վրայ հաւանի համաձայնութիւն գոյացնել, Անգլիա չպիտի ընդդիմանայ Ռուսիոյ յառաջխաղացութեան . գալով Ֆրանսային, կասկած իսկ չկայ որ ոչ մէկ արգելք չպիտի յարուցանէ իր դաշնակցին զէմ այդ մասին, ինչ բողոք ալ որ բառնայ ուստատեաց Ֆրանսացիներու զատակարգը : Նոյն ինքն Պերթըլօ, մեծ գիտունը, նախկին նախարարտաքին գործոց, ազատական, ու հեռու ուսասէր ըլլալէ, անցեալ տարի Տր. Լորիս Մելիքովի ուղղած նամակի մը մէջ՝ որոշապէս կ'ըսէր թէ՝ « Տաճկական Հայաստանը խաղաղեցնելու համար ուսական գերիշխանութեան հոն տարածումէն ուրիշ գործնական միջոց չէր կրնար տեսնել, որքան ալ որ այդ լուծումը տեսլականը չըլլար : »

Երկու պարագային ալ, Ռուսիոյ սահմանուած է կատարել էական դերը : Նոյն իսկ եթէ տաճկական Հայաստանի մէջ միջազգային միջամտութիւն մը որոշուի Տէրութեանց կողմէ, Ռուսիան է որ՝ իբր սահմանակից եւ ամենէն մեծ շահերը ունեցող պետութիւն, պիտի կատարէ այդ միջամտութեան մէջ գերակշիռ պաշտօնը, — ինչպէս որ Մակեդոնիոյ հարցին մէջ դարձեալ Ռուսիան է որ՝ Աւստրիոյ հետ՝ կատարեց եւրոպական միջամտութեան պարազուրիսի դերը : Ասիկա « իրողութիւն » մըն է գոր բացազանչութիւններով չենք կրնար ջնջել կ'ը գոր պէտք է ի նկատի ունենանք մեր ազգային քա-

զարգանութեան ուղեգիծը որոշելու համար : Ի նկատի ունենալ այս « իրողութիւնը », « ուս- սասէր ըլլալ ըսել չէ : « Ռուսաստանութիւն » բառը, զոր Արփիարեանը այս պահուս կը ճո- ճեցնէ օգին մէջ՝ իբր իր մէկ արտակարգ գիւտը, անիմաստ բացատրութիւն մըն է, ինչպէս որ նոյնքան անիմաստ էր իր գեռ քանի մը տարի առաջ « Ռուսը երբ տաճկական Հայաստանի մէջ ոտք կոխէ, Հայութեան արեւը այն օրը մարած է » բացարձակ վճիռով արտայայտած ռուսատեցութիւնը : Անցողակի ըսեմ որ նոյն իսկ եթէ Ռուսը տաճկական Հայաստանը գրաւէ, Հայութեան արեւը մարած չիմ համարիր ես, եւ չեմ համարած երբեք. Ռուսիոյ Հայաստանի մէկ կարեւոր հատուածին տիրապետելէն ի վեր, ռուսահպատակ Հայութիւնը — բաց ի ճղճիմ փոքրամասնութիւնէ մը որ ռուսացած է՝ իր ազ- գասիրութեան պակասին պատճառով, նիւթա- պէս, բարոյապէս եւ « ազգայնապէս » շահած է քան կորսնցուցած՝ հակառակ Ռուսիոյ բոլոր « ազգաշինջ » ջանքերուն. մեր ազգային վերա- ծնութեան ճիգերուն մէջ՝ ռուսահայք ունեցած են ամենակարեւոր բաժին մը, աւելի յանդուգն, ձեռներէց, կազմակերպեալ գործունէութիւն մը ցոյց տուած են միշտ՝ որովհետեւ ռուսահայ են, այսինքն ստրկութիւնէ ելած, որքան ալ քաղաքականապէս սեղմուած : Եթէ Թաթար- ներուն դէմ իրենք շատ աւելի լաւ կը պաշա- պանեն ինքզինքնին քան ինչ որ չկրցան տաճ- կահայերն ընել Թուրքերուն դէմ, ատոր ալ պատճառը միեւնոյնն է. տաճկահայը անառնա- կանացած է Թուրք հրէշային, թունաւորիչ, ապականիչ ըմբռնէն. ռուսահայը « մարդու պէս ապրած է » : Բայց ինչպիսիք ատոր վրայ չէ այժմ : Հարցը այն է որ մենք Հայերս ոչ ռու- սասէր, ոչ ռուսատեաց պէտք է ըլլանք, այլ « հայասէր », եւ այդ միայն : Մեր ազգային շահերուն տեսակէտէն պիտի առաջնորդուինք, օտար ազգերու հետ մեր յարաբերութեանց մէջ : Պիտի օգտուինք Ռուսէն կամ Անգլիացիէն կամ Ֆրանսացիէն՝ երբ մեր շահերը՝ զայդ պահան- ջնն. պիտի պայքարինք ռուս կառավարութեան դէմ՝ երբ այդ կառավարութիւնը՝ որոշապէս մեր շահերուն դէմ մարտնչի : Անշուշտ բոլոր օտար ազգերուն մէջէն, ամենէն աւելի ուշագ- րութեամբ եւ մասնաւոր շրջահայեցութեամբ պիտի վարուինք Ռուսին հետ, այն միակ պատ- ճառով որ ան մեր գլխուն վերեւ տնկուած, մեր ճակատագրին վրայ ամենէն աւելի հզորա- պէս եւ մօտանց ազդելու կարողութիւնն ունի. ռուս կառավարութեան հայաստեաց մէկ որոշ արարքին դէմ պայքարած ատեննիս, պիտի չը մոռնանք Ռուսիոյ անցեալին մէջ մեզի մատու- ցած ծառայութիւնները, պիտի չչփոթենք այս ինչ րոպէի ռուս կառավարութիւնը ռուս ազ- գութեան հետ. պիտի չմոռնանք որ ռուսահայք ալ՝ ատենով, ինչպէս այժմ տաճկական Հայաս- տանի Հայերը, « ստրուկ » էին, իրենց կիներն, իրենց ինչքը, իրենց կեանքը պարսիկ ու Թուրք տէրերու քմահաճոյքին կը պատկանէին, եւ

թէ ռուս տիրապետութիւնն է որ ազատեց զի- րենք այդ խայտառակ կացութենէն. պիտի ըմ- բռնենք որ առանց Ռուսը հաշուի դնելու՝ մի- միայն արեւմտեան Եւրոպային միջամտութեամբ տաճկական Հայաստանի բազըր վճռելն անհնար է. պիտի ջանանք — ու պէտք էր վաղուց այդ- պէս վարուած ըլլայինք — մեր հարցը բարձ- րացնել այնպիսի րոպէի մը երբ Ռուսիա գիտա- կից ու յստակատես կառավարութիւն մը ունե- նալով իր գլուխը՝ իր շահերը համաձայն եր- թան թէ՛ մեր շահերուն եւ թէ՛ արեւմտեան Եւրոպայի էական ճգտումներուն հետ : Մեր մէջ, ոմանք, « ռուս » բառը իմացած ատեննին՝ սա- տանան տեսածի պէս կ'ըլլան. Ռուսը իրենց համար Հայութեան կործանումն է, բացարձակ, առանց վերապահումի, մի՛շտ, ամէն պարագայի մէջ. այդ կարգի տեսութիւններով սոցորուած գործիչ մը վերջերս կ'ըսէր ինձի. « Եթէ Ռուսը Հայաստանը գրաւել ուզէ, այս անգամ Հայերը պիտի չօգնեն իրեն. ընդհակառակը պիտի ընդ- դիմանան : » Ինչ տղայական տեսութիւն. Եթէ Ռուսը ուզէ Հայաստանը գրաւել, այժմեան ճղակտոր Հայութիւնը մեծ օգնութիւն մը չի կրնար բերել իրեն, իսկ ընդդիմանալով՝ բնաւ երբեք անոր յառաջխաղացութիւնը արգիչելու չի յաջողիր, միայն կը յաջողի տաճկահայաս- տանի ապագայ տիրողները իրեն որոշապէս ու վերջնապէս թշնամի դարձնելու. եւ արդէն, երեւակայական է այդ տեսութիւնը որքան տղայական. Տաճկահայաստանի հայ ժողովուր- քը, շարժարանքի դժոխքին ամենէն ահաւոր խորքերուն մէջ կօշկոճուած, յուսահատուցե- նէն խելացնոր, ոչ մէկ ուշադրութիւն պիտի չգրաճնէր այդպիսի հրաւէր մը իրեն կարգա- ցողներուն, եւ իբր ազատարար պիտի ողջու- ներ ռուս զինուորները որոնց շնորհիւ պիտի ազատէր գէթ Քիւրտին ու Թուրքին ձեռքը « գերի » ի կեանք մը քաշկրտելէ : Ուրիշներ ալ — ինչպէս Արփիարեան — կը փութան խաղախներուն կոշիկները լզուըտուել, եւ այժ- մէն իսկ տաճկական Հայաստանի համար ռուս կայսերական ընտանիքէն անձ մը — մեծ դուքս մը — կուսակալ խնդրել : Մենք ոչ մէկ ոչ միւս ծայրայեղութեան մէջ իյնալու ենք : Մեր ազ- գին շահերուն տեսակէտէն, Մակեդոնիոյ մէջ հաստատուելու վրայ եղող բեժիմին նման բե- ժիմի մը տաճկահայաստանի մէջ հաստատուելը՝ ռուսական նախաձեռնութեամբ բայց միջազգա- յին վերհսկողութեամբ, լաւագոյն է անշուշտ քան պարզ ռուսական գրաւումը. մեր գործը պէտք է ըլլայ ուրեմն զիմել, միշտ, Պերլինի դաշնագիրն ստորագրող բոլոր պետութեանց, եւ պահանջել որ ինչ որ Մակեդոնիոյ համար ըրին կրկնեն եւ տաճկական Հայաստանի հա- մար. այդ զիմումներուն մէջ ոչ ռուսասէր, ոչ ռուսատեաց երեւալու ենք. Ռուսիոյ՝ իբրեւ առաւելակցիտ շահերն ունեցող Պետութեանն՝ կրնանք մասնաւորաբար չեշտել՝ մեր զիմումին մէջ՝ իր միջամտութեան պարտականութիւնը. Պ. Առաքելեան կ'առաջարկէ Մշակին մէջ որ

Հայք դիմին Չարին, խնդրելով որ իր նախա-
 ձեռնութեամբ գումարուելիք Խաղաղութեան
 Համաժողովին մէջ՝ ինքն իսկ օրակարգի հար-
 ցերուն կարգն անցնէ Հայոց խնդրերը. ոչ մէկ
 անպատեհութիւն չկայ այդ դիմումն ընելու մէջ.
 ուսական գրաւում խնդրել չի նշանակեր ա-
 տիկա, այլ Խաղաղութեան Համաժողովին մէջ
 մեր խնդրոյն նկատի առնուելը կարելի դարձը-
 նելու գործնական միջոց մը ձեռք առնել: Իսկ
 եթէ այդ ձամբով մեր հարցին լուծումը անհնար
 ըլլայ, եւ Ռուսիա՝ արեւմտեան Եւրոպայի հա-
 ւանութեամբ՝ որոշէ գրաւել սաճկական Հա-
 յաստանը, Հայք պէտք է բռնին չեզոք դիրք՝
 որքան կարելի է. արիւն թափել լուծ փոխելու
 համար, որքան ալ նոր լուծը՝ քանի մը տեսա-
 կէաներով նախընտրելի ըլլայ, խելացութիւն
 չէ. ազգ մը իր պերագոյն զոհողութիւններն
 ընելու է՝ ոչ թէ լուծ փոխելու, այլ իրեն «տուն
 մը շինելու համար». բայց եւ ոչ մէկ թշնա-
 մական ընթացք պէտք է ունենանք Թուրքին
 դէմ ելլող Ռուսերուն հանդէպ. ասի արդէն
 անընական եւ անկարելի բան մըն է, զոր իբր
 հաւանականութիւն մը իսկ կարելի չէ նկատել:
 Ռուսիոյ հանդէպ մեր բռնելիք դիրքին վրայ
 խօսուած ատեն, պէտք չէ մոռնանք ամենէն
 էական կէտը, որ է Ռուսիոյ ներքին բարենո-
 րոգման հարցը: Չարական բեժիմը եթէ շարու-
 նակէ տիրապետել, ոչինչ կարելի է գուշակել
 հաստատուն՝ ուսուս-հայ յարաբերութեանց մէջ.
 Չարական Ռուսիան որ ատենով Պարսկին ու
 Թուրքին տակ ստրկացած Հայութեան մէկ մասը
 ազատեց, այսօր ինքն իսկ Թաթարներուն վայ-
 րագութեան կը մատնէ իր հպատակ Հայերը, ու
 ոչինչ կ'ապահովէ որ ապագային մէջ՝ նորանոր
 հանգամանքներու երեւմամբ՝ ձարական Ռու-
 սիան միեւնոյն ընթացքը չբռնէ նորէն Հայոց
 հանդէպ. ձարական Ռուսիան, որ Հայոց դպրոց-
 ները փակելէ, ընկերութիւնները սեղմելէ կամ
 քննելէ, ու մեր եկեղեցիին անկախութիւնը
 փշրել փորձելէ յետոյ՝ երէկ, ճափոնական յաղ-
 թանակներուն ու հայ ժողովրդին յամառ դի-
 մադրութեան հետեւանքով՝ իր այդ սխալը քա-
 լեց նոր ուքաղով մը, շատ լաւ կրնայ՝ ապա-
 զային՝ երբ մանաւանդ Տաճկահայաստանը գը-
 րաւէ՝ միեւնոյն ազգաշինջ քաղաքականութիւնը
 նորէն ձեռք առնել Հայոց դէմ: Սահմանադրա-
 կան Ռուսիա մը, որուն կառավարութեան ղեկը
 ըրջօրէն եւ ամբողջապէս ուսու ազատական
 տարրն իր ձեռքն անցուցած ըլլայ, շատ աւելի
 որոշ ու հաստատուն քաղաքականութիւն մը
 պիտի ունենայ մեզի՝ ինչպէս ուսու Պետութեան
 մաս կազմող կամ շուրջը գտնուող փոքր ազ-
 գութեանց հանդէպ: Ծայրայեղ յոռետեսները
 պիտի կարենան առարկել թէ սահմանադրակա-
 նութիւնը արգելք մը չէ որ մեծ պետութիւն
 մը ջանայ ձուլել իր մէջ գտնուած տարասեռ
 ազգերը, եւ թէ սահմանադրական Ռուսիան
 կրնայ Հայերու ազգայնական զարգացումը խեղ-
 դելու ձգտող միջոցներ ձեռք առնել՝ ինչպէս
 սահմանադրական Գերմանիան կ'ընէ իր Փոլո-

նիացւոց, Ալգաս-Լորենցւոց ու Շլէզվիկ-Հոլշ-
 թայնի Տանիմարքացւոց համար, եւ ինչպէս
 նոյն իսկ սահմանադրական Անգլիան կ'ընէ Իր-
 լանտացւոց համար: Կարելի է սակայն պատաս-
 խանել այդ առարկութեան, ըսելով որ Հայ
 ժողովուրդը եթէ ունենար՝ սահմանադրական
 եւ ազատական ուսու կառավարութեան մը հո-
 վանւոյն տակ՝ այնքան ազատութիւն, իր ազ-
 գութիւնը եւ իր գոյութիւնը պահպանելու այն-
 քան ապահովութիւն, որքան Իրլանտան ունի
 այսօր Անգլիոյ հովանւոյն տակ, շատ երջանիկ
 պիտի ըլլար: Ու ես կը կարծեմ թէ ուսու ազա-
 տական տարրը՝ կառավարութեան գլուխն ան-
 ցած՝ առնուազն այդքան ապահովութիւն եւ
 ազատութիւն պիտի տայ ուսական պետութեան
 մէջ գտնուած ոչ-ուսու ժողովուրդներուն: Չե-
 մտով օնկերու վերջին ժողովին մէջ որ գումար-
 ունեցաւ Մոսկուա, Փոլոնիացիք յարուցին ազ-
 գայնութեան հարցը, եւ անոնք որ վաղուան
 Ռուսիոյ վարիչները պիտի ըլլան, որոշապէս
 ընդունեցան փոլոնիական ինքնավարութեան
 սկզբունքը. այդ սկզբունքը պիտի տարածուի,
 առաւել կամ նուազ մեծ չափով, Հայոց ինչպէս
 միւս ազգութեանց ալ. Ռուս ազատական տարրը
 այնքան ազնիւ է ու վեհանձն որքան ձարական
 ու «պիւրքրաթ» ական Ռուսիան՝ վայրագ.
 ուսու յեղափոխականը, ամենէն անխտան ազա-
 տասիրութեամբ տողորուած եւ ամենէն բացար-
 ձակ անձնուրացութիւնը ցոյց տուող յեղափո-
 խականն է աշխարհիս: Սնկարելի չէ որ վաղ-
 ուան սահմանադրական Ռուսիան՝ բնաշրջմամբ
 հետզհետէ զարգանալով՝ օր մը նոյն իսկ աւելի
 ազատական ըլլայ ինչ ինչ կէտերու մէջ քան
 նոյն ինքն Անգլիան, — ինչպէս նորածին սահ-
 մանադրական ձափոնը աւելի ազատական է
 քանի մը կէտերու մէջ քան Անգլիան: Ինչ ու-
 ուղեգիծ ալ ունենայ վաղուան Ռուսիան, կան
 խել մը էական հարցեր որոնց մէջ իր բռնելիք
 ընթացքը գրեթէ վստահօրէն կարելի է գուշա-
 կել. ազատական Ռուսիան պիտի հաստատէ
 մամուլի, ժողովմանց, դաւանանքի բացարձակ
 ազատութիւն, խորհրդարանական կառավարու-
 թիւն, ապակեղրոնացման բեժիմ՝ առաւել կամ
 նուազ լայն չափով. ասոնք՝ ինքնին՝ արդէն
 նպաստաւոր պայմաններ են փոքրիկ ազգու-
 թեանց պահպանման ու զարգացման համար.
 ազատական Ռուսիան որոշապէս եւ անկեղծօ-
 րէն պիտի մերձենայ Անգլիոյ, Ֆրանսայի եւ
 Իտալիոյ, ու անոնց հետ մէկտեղ՝ պիտի ձգտի
 վերջնապէս սանձել մահմետական բարբարոսու-
 թիւնը՝ աշխարհիս ամէն կողմը, ինչպէս եւ
 խելքի բերել այդ բարբարոսութեան պաշտպան
 պժգալի Գերմանիան. ազատական Ռուսիան
 երբեք թոյլ պիտի չտայ որ Կովկասի Թաթար-
 ները երբ եւ իցէ վերսկսին վայրագութիւնները
 զոր երէկ կրցան կատարել, ու թոյլ պիտի չը-
 տայ որ Տաճկաստանի Հայերը շարունակեն
 մարտիրոսանալ թրքական լուծին տակ. ասոնք,
 աւելորդ է չհետել, դրականօրէն յուսատու պայ-
 մաններ կրնան ըլլալ Հայութեան համար: Ար-

դէն, ժողովուրդը մը որ իր ազգութիւնը պահպանելու համար՝ անկէ բուն արտաքին ուժերէ, զրոնքն որոշուած եւ ապահովուած պայմաններէ կը յուսայ, կարող չէ ապրելու, եւ արժանի չէ ապրելու: Հպատակ ցեղերը ձուլելու բոլոր ճիգերը՝ որ ցարդ կատարուած են Գերմանացոց, Ռուսաց կամ Անգլիացոց կողմէ, ապարդիւն մնացած են, երբ խնդիրը Փոլոնիացոց կամ Իրլանտացոց պէս ցեղերու վրայ եղած է, որոնք իրենք իրենց մեջ ունին իրենց ազգութիւնը պահպանելու համար բաւական ինքնաթիւն, հաւատք ու կորով: Էականը այն է որ տիրող կառավարութիւնը օրէնքի առջեւ ճշմարիտ հաւասարութիւն հաստատէ, տայ մասնուի, հաւաքմանց եւ դաւանանքի ազատութիւն, նամանաւանդ չստրկացնէ ու չջարդէ ժողովուրդը, — երկու՝ ըստ իս՝ անհրաժեշտ եւ անդամանելի չարիքները, որ թուրք բնապետութեան յատուկ են: Արդ, ազատական Ռուսիոյ գերիշխանութեան տարածմամբը Հայութեան վրայ, ստրկացման ու ջարդի վտանգը կ'անհետանան վերջնապէս եւ ապահովապէս, իսկ ազգայնական զարգացման համար՝ եթէ հայ ազգը ունի ներքին ուժ, ինքն իր վրայ սէր ու հաւատք — եւ ես կը կարծեմ թէ ունի, թէ պէտ թուցած՝ զարաւոր սարկութիւնէն — ազատական Ռուսիոյ գերիշխանութիւնը ոչ մէկ վտանգ չի ներկայացներ, — նոյն իսկ եթէ զրականապէս նպաստաւորող պայմաններ չբերէ ազգայնութեան զարգացման: Եթէ այդ ազատական Ռուսիան, յաջողելով ընդհուպ յաջորդել այժմեան ձարականութեան, ինքն իսկ մղէ թուրքիոյ դէմ պայքարը՝ ի նպաստ Արեւելքի զրիստոնեաներուն, այն ատեն Հայոց պարտաքննութիւնը կ'ըլլայ, ոչ թէ չեղոք մնալ՝ ինչպէս եթէ ձարականութիւնն ըլլայ պայքարողը, այլ իր ուժերուն չափովը աջակցել ազատականութեան պայքարին ընդդէմ բռնութեան, որովհետեւ այն ատեն՝ որքան ալ մեզի համար «յատուկ տուն մը չի նկեր» յոյսը գոյութիւն չունենայ, դէթ մեծ, առողջ ու հզօր տան մը մէջ ապահով ու հանգիստ սենեակ մը ունեցած կ'ըլլանք մեր գոյութիւնը պատասխարելու եւ զարգացնելու համար: Ծածկական Հայաստանին մէջ արդէն բոլորովին մերապատկան տուն մը կանգնելն ու պահպանելը՝ անկարելիութիւն է (նոյն իսկ եւրոպական վերհսկողութեամբ բարենորոգմանց ընթացք մը եթէ հաստատուի տաճկահայաստանի մէջ, այդ բարենորոգուած տաճկահայաստանը օր մը՝ իրերու ուժով՝ սանձանուած է միանալ Ռուսիոյ): ատի կարելի կ'ըլլար եթէ թուրքը կամ Ռուսը հաւանէր ատոր. արդ, երկուքէն ոչ մին երբեք չպիտի հաւանի. թէ՛ Ռուսին թէ՛ թուրքին կամքին հակառակ՝ միմիայն Արեւմտեան Եւրոպայի պաշտպանութեան վրայ կրթնելով այդպիսի տուն մը մեզի համար կանգնելու եւ զայն պահպանել կարենալու ծրագիրը՝ ցնորք մը եղած է որուն հետեւանքները ծանր եղան մեզի համար: Ինչ ալ ըլլայ տաճկական Հայաստանին ապագայ բաղդը, ան միշտ պէտք

է կապուի մեծ պետութեան մը, անոր վրայ կրթնի. արդ, թուրքին եւ Ռուսին միջեւ կարելի չէ վարանիլ. եւ արդէն մենք ուզենք կամ ոչ, այդ է անխուսափելին. Ռուսը շարժումն է դէպ ի յառաջ, թուրքը մօրացումը կը մնայ. մենք շարժման հետ պէտք է ըլլանք: Անշուշտ, ազատական Ռուսիոյ Հայաստանի մէջ միջամբտութեան համար ալ՝ ամենէն ցանկալի ձեւը մեզի համար, Ռուսիոյ նախաձեռնութեամբ ու եւրոպական պետութեանց գործակցութեամբ՝ Մակեդոնիոյ մէջ հաստատուելու վրայ եղող ընթացքն պէտք ընթացի մը ներմուծումն է, որ պէս զի հայ ժողովուրդը՝ ռուսական մեծ ամբողջութեան մաս կազմելէ առաջ, տաճկահայաստանի մէջ ունենայ փոխանցման փուլ մը, ուր կարենայ ամփոփուիլ, իր ազգային գոյութիւնը ամրացնել. եւ հաւանական է որ այդ ձեւով սկսի ռուսական յառաջնադարութիւնը Հայաստանի մէջ, անմիջական զբաւումը շատ դժուար ու վտանգալից ըլլալով վերջին պատերազմէն ու ներքին պայքարներէն ուժաբեկ Ռուսիոյ համար: Այս բոլորը ցոյց կուտան թէ ո՛րքան ահագին կարեւորութիւն ունի Հայութեան համար Ռուսիոյ ներքին վերանորոգումը: Մեզ պաշարող աղջամուջին ու թոճուբոյին մէջ, ան է՝ յարաբերաբար՝ ամենէն սմուր ու ամենէն լուսաւոր, ամենէն զրական ու տեսական կուսակց մեզի համար: Եւ այդ վերանորոգումը, բարեբաղդաբար, այլ եւս շատ մօտ է իրականանալու: Զարական ընթացք վերջին պատերազմին մէջ՝ մահացու հարուածն ստացաւ. ռուս ազատական տարրը պիտի յաղթանակէ. եւ Ռուսիա պիտի ունենայ լրջօրէն ազատական կառավարութիւն մը՝ ժողովուրդին գիտակից կամքովն ու ճիգովը կառուցուած: Մեծ ուշադրութեամբ պէտք է հետեւինք ուրեմն Ռուսիոյ ապագան վճռելու կոշուած այդ ներքին պայքարին:

Ինչ որ՝ բոլոր ուժովն՝ եւ հարիւրերորդ անգամն ըլլալով՝ պիտի կրկնեմ, անհրաժեշտութիւնն է մեզի համար՝ մանաւանդ արդի բարդ պայմաններուն մէջ, իմաստութիւնը կորովին միացնելու:

Պէտք է վերջնապէս դադրեցնենք աւելորդ եւ անմասնակ յանդգնութիւններու սխտեմը, որ աղէտքներու տեղի տալէ եւ արդէն իսկ արիւնքամ եղած տաճկահայ ժողովուրդը աւելի եւս տկարացնելէ ուրիշ արդիւնք չի կրնար ունենալ: Պէտք է վերջապէս գիտնանք ամփոփուիլ, դիտել ինչ որ մեր շուրջը կ'անցնի, հաշուել պաղարկելով բոլոր տարրերը որ գոյութիւն ունին մեր շուրջն ու մեր մէջ, ընտրել լաւագոյն տարրերը, նշանակել գործելու նպաստաւորագոյն ուղեգիծը, եւ սպասել ամենապատեհ բոլորին՝ փորձելու համար սեր դառնիլ լուծումը փութացնող գործունէութիւն մը:

Յարմարագոյն բոլորին սպասել գիտնալը՝ լաւ գործել գիտնալուն կէսն է: Լէ՛մարտօ տա վինչիին կը հարցնէին թէ օրուան մէջ որո՞նք էին այն վայրկեանները ուր ամենէն լաւ կ'աշ-

խատեր : « Այն վայրկեանները , պատասխանեց , ուր չեմ արտագրեր , այլ կը գիտեմ ու կը մտածեմ : » Համբերատար նախապատրաստութեամբ մը հասունցած գործ մը , երբ արտայայտման բուն վայրկեանին երեւան գայ , կուտայ այն բոլոր արդիւնքը որուն կը ձգտի :

Մեր ազգը հազարաւոր տարիներու կեանք մը ունի , եւ ճակատագրական ազնիւ գիր մը իրեն վիճակուած է կատարել Արեւելքի մէջ . պէտք չէ որ ջնջուի . ու որովհետեւ տարօրինակէս վայրագ , ու բազմաթիւ , ու բազմաձեւ գազաններով պաշարուած է մեր խեղճ ժողովուրդը , անհրաժեշտ է հազար հաշուել մէկ քայլ առնելէ առաջ , — որպէս զի այդ քայլը ուժեղ ըլլայ եւ նպատակին հասնի : Բացարձակ սոփիստութիւն է այս խօսքերը : Բացարձակ հեմոլոթեան քարոզ մը նկատել . ճշմարտագէտ ըմբռնուած ուժին , գիտակից եւ ճիշդ գործածուած ուժին ներքոյն են ասոնք : Ծափոնացեոց պէս կրակոտ , ամբողջ ցեղով զինուած եւ հաւորապէս ուժեղ ազգ մը , տասը տարի բացարձակ լուծեան մէջ « պատրաստուեցաւ » , ու իր ուժը յայտնեց այն ատեն միայն երբ բուն վայրկեանը եկած նկատեց , ու պատերազմը յայտարարելէ առաջ՝ Միքատօն հարկ տեսաւ ի ժողով գումարել երկրին բոլոր « հին » երբ , բոլոր փորձառու եւ պաղարիւն վաստակաւոր գործիչները , եւ անոնց հաւանութիւնն առնելէ յետոյ՝ նշանը տուաւ մեծ պայքարին : Ասոր հարևար յաջողեցան ծափոնացիք : Պէտք է սպասենք որ գէպքերը՝ մենէ դուրս՝ հասունանան , պայթին , կացութիւնը որոշուի : Սպասելը անշարժ մնալ ըսել չէ : Եստ բան կայ ընելու « սպասողական » ըսուած շրջանին մէջ : Մեր ժողովուրդը շատ քիչ կը ճանչնան , շատ գէշ կը ճանչնան Եւրոպացիք , ու չեն սիրեր զայն : Եւ ասիկա մեր դատին յաջողումն արգիլող մտնէն ծանր պատճառներէն մէկն է : Կա՛մ բնաւ գոյութիւնն իսկ չեն գիտեր մեր ժողովուրդին , եւ կամ Հայը կը ճանչնան իբրեւ վաշխառու , խաբերայ , արծաթամուլ : ԳԿ-ՅԵԻ ահաւոր ջարդերէն յետոյ , Եւրոպայի մամուլը ամենամեծ մասամբ նախատինքներու հեղեղ մը թափեց մարտիրոսացած ժողովուրդին վրայ , եւ միայն Սուլթանին դրամը չէր որ այդ հեղեղին ծուռնը կուտար . մեզի գէ՛մ ժայթքուած հակակրութեան մէջ անկեղծութեան լայն բաժին մը կար : Անոնք իսկ որ ի նպատակ Հայոց ձայն բարձրացուցին , պարզապէս մարդասիրական — գրեթէ նուաստացուցիչ — արգահատանքի զգացումներ կը յայտնէին : Չանքերը որ կատարուեցան այդ տխուր օրերէն ի վեր , քիչ մը բարեփոխեցին՝ գէթ կարգ մը կարեւոր միջավայրերու մէջ՝ հայ ժողովուրդին նկատմամբ Եւրոպացեոց զգացումները . բայց դեռ շատ քիչ է փոփոխութիւնը . ստուար զանգուածին մէջ հակակրութիւնը կը տիրապետէ . ահա շարժանքներ ի վեր , կովկասի մէջ Հայութիւնը կը հալածուի , կը խոշտանգուի , կը կողոպտուի՝ մարդակերպ գազաններէ , ու եւրոպական մամուլը գրեթէ

լուրերը արձանագրելով միայն կը շատանայ , — ու ոմանք ամբողջ չարքիւն պատճառը դարձեալ Հայերը կը նկատեն . . . : Աւելի դժուար է արմատացած սխալ կարծիք մը ջնջել քան նոր գաղափար մը տարածել : Բայց ատիկա անհրաժեշտ , էական գործ մըն է , զոր պէտք էր կատարէր շատոնց ի վեր իր բոլոր ուժովը մեր ամբողջ ազգը՝ հարուստ , եկեղեցական , յեղափոխական , գրագէտ , եւն . , ամենքն իրենց կրքած ու ըմբռնած եղանակով : Ամենալաւ եղանակը՝ ճանչցնելն է Եւրոպացեոց ինչ որ մեր հին ու նոր պատմութիւնն ու մանաւանդ մեր գրականութիւնը եւ արուեստը ունին ճշմարտագէտ գեղեցիկ : Այն բոլոր Ֆրանսացիները , որ կարգացած են այս վերջին տարիներուն մէջ հայ գրականութեան մասին հրատարակուած քանի մը գրքեր կամ ներկայ գտնուած են հայ արուեստի երեկոյթներու , նոյն իսկ այնպիսիներ որ անտարբեր էին կամ հակակիր՝ անկեղծ հայասէրներ դարձած են , — որովհետեւ անկարելի է չսիրել ժողովուրդ մը որ կը ներկայանայ՝ ազւոր քերթուածի մը , ճարտարապետական հրաշակերտի մը , քնքուշ երգի մը , պատմական վեհ գրուագի մը մէջէն : Բայց կատարուած ջանքերը շատ քիչ են , շատ քիչ : Պէտք էր այդպիսի հրատարակութիւններ շատ աւելի բազմաթիւ ըլլային , եւ հազարաւոր օրինակներով տարածուէին եւրոպական եւ ամերիկեան հասարակութեանց մէջ , — եւ մանաւանդ ողւս ազատական աշխարհին մէջ :

Մեր հարուստները անարդարանալի են երբ այսպիսի ոչ մէկ առարկութիւն չվերցնող ծրագիրներու իսկ չեն օգներ : Բացառութիւն կազմող քանի մը սակաւաթիւ մեծերէ զատ , բոլորն ալ կը կարծեն ազգին հանգէպ իրենց պարտքը կատարած ըլլալ՝ քանի մը աղքատի ողորմութիւն տալով կամ ազգային այս կամ այն հաստատութեան խեղճուկրակ գումարներ մերթ ընդ մերթ նուիրելով : Պոսթընի Armenians , որ ամէն կերպով օգտակար եւ կարեւոր հրատարակութիւն մըն է , գեռ ոչ մէկ հայ հարուստէ ամենափոքր աշակցութիւն մ'անգամ չէ գտած : Անդին Փրոֆէսոր Մատի պէս թանկագին պործիչ մը՝ Անիի պեղումները ի գլուխ հանելու համար չի գտներ օգնութիւնը զոր Հայք պէտք էր լիարուստ հասցնէին մեր անցեալ մեծութեան այդ հոյակապ ապացուցման նուիրուած ձեռնարկին : Մինչեւ իսկ ամբողջ Հայութեան պաշտած « Հայրիկ » ին կիսանդրի մը նւերիւրու համար բացուած հանգանակութեան , մեր հարուստները մեծագոյն մասամբ չուղեցին մասնակցել . . . : Թող մեր հարուստները պէթ օրինակ առնեն Փոլոնիացիները . լեհ հարուստները երբեք չեն շատացած իրենց ծայրայեղ յեղափոխականները քննադատելով . ազգային պանքա հիմնած են՝ միլիոններ դնելով իբր գրամագլուխ , սզգային մուսէոն հաստատած են , կազմած են ընկերութիւններ՝ ազգասիրական չափաւոր ծրագրով , եւ իրենց գործունէութեամբ բարեբարօրէն հակակշռած են ծայրայեղներու

յանդգնութիւնները . դեռ վերջերս , միմիայն պարզ գրագէտի մը , Սենքիէվիշի , յորեկեանը տօնելու միջոցին , 500,000 ֆրանք նուիրեցին իրեն եւ նոյնքան արժող գղեակ մը : Մեր հարուստներէն շատերուն՝ այսպիսի նպատակներու համար դրամ չտալու գլխաւոր պատրուակները հետեւեալներն են ընդհանրապէս : « Ի՞նչպէս տանք , թուրք կառավարութիւնը կ'իմանայ . մենք թուրքերոյ մէջ շահեր ունինք : — Տա՛նք , շատ լաւ . բայց որո՞ւ տանք . ո՞ւր է վստահելի մարմին մը . մենք չենք ուզեր որ մեր դրամները ասոր անոր կողորդը անցնին : » Երկու առարկութիւններն ալ հիմնովին ապուշ են : Թող մեր հարուստները անկեղծ տրամագրութիւն ունենան կարեւոր գումարներ ազգային փրկութեան գործին համար նուիրելու , ու ամենադիւրին բան է թէ՛ ընկերութիւն մը հիմնել այսպիսի ձեւով որ դրամներու ապահով պահպանումը եւ կանոնաւոր գործածումը անկասկածելի լըջութեամբ կատարուի , եւ թէ՛ նուիրատուներէն գաղտնի մնալ ուզողներուն անունը ծածուկ պահուի (սքողում որ ժամանակաւոր պիտի ըլլայ անշուշտ , որովհետեւ երբ լաւագոյն պայմաններ գտնւի այդպիսի ազնիւ նուիրատուներու անունները պիտի հռչակուին այն բոլոր գովեստովը որուն արժանացած պիտի ըլլան) : Ատեն է որ մեր հարուստներուն — ու խօսքս մասնաւորապէս Եւրոպայի ու Ամերիկայի տաճկահայ հարուստներուն վրայ է , որովհետեւ ուսանայ հարուստները անհունապէս աւելի պարտաճանաչ են , — այս ամօթալի անդգայութիւնը վերջ գտնէ :

«Ալիսիան Իորայէլիթ»ի նման հայկական մեծ ընկերութեան մը , որուն հիմնարկումը կ'առաջարկէ Տր. Գարրիէլեան , անհրաժեշտ անմիջական պէտքի մը կը համապատասխանէ :

Այդպիսի մարմին մը անհրաժեշտ է , ծայրայեղ տարրերուն գործունէութիւնը հակակշռելու , չափաւորելու եւ լրացնելու համար . չկայ ո եւ է ազգ որ իր ճակատագիրը միմիայն ծայրայեղ տարրերուն ձեռքը ձգէ . ամէն ազգի մէջ , վերանորոգումը արգիւնքն է ծայրայեղներու գործունէութեան որ կը քանդէ ինչ որ հին է , եւ բնաշրջականներուն գործունէութեան որ կը պահէ հինէն ինչ որ առողջ է եւ կենսունակ , եւ կը շինէ ինչ որ պէտք է քանդուածին տեղ դնել : Թուսանայոց՝ իրենց արդի ձգնաժամին մէջ՝ մղած պայքարին յաջող եւ ուժեղ հանգամանքը պէտք է վերադրել այն իրողութեան որ անոնց մէջ ամբողջ հասարակութիւնը գործօն դեր կը կատարէ , թէ՛ ծայրայեղները եւ թէ՛ զանոնք հակակշռող բայց նոյնքան կորովով ու նոյն նպատակին համար գործող չափաւորները : Այդպիսի մարմին մը անհրաժեշտ է . եւ պիտի մնայ անհրաժեշտ՝ նոյն իսկ եթէ կովկասի ճգնաժամը վերջանայ , նոյն իսկ եթէ թրքական Հայաստանի մէջ բարենորոգումները հաստատուին . անոր համար միշտ գեր մը կայ կատարելու՝ թէ՛ ազատագրուած Հայութեան հատուածներուն համար , եւ թէ՛ մանաւանդ «վեց

նահանգներէն» դուրս մնացած բոլոր հայ համայնքներուն համար . կը մնայ ուրեմն մեր հարուստներուն , եւ մեր բոլոր «չէզոք» տարիւրուն՝ ապացուցանել թէ իրօք կը զգան այդ պէտքը եւ զայն լրացնելու համար հարկ եղած պարտականութիւնը ունին :

Ուրիշ պէտք մը — պիտի կրկնեմ հարիւրբարոյ անգամ ըլլալով , ու ծիծաղելի ըլլալն իսկ սիրով աչք աննելով ; — մեր յեղափոխական մարմիններուն համաձայն գործակցութիւնն է : Հայ յեղափոխական կուսակցութեանց Համաժողովի մը գումարումը , զոր առաջարկեցի Հոռիզոնը տիտղոսուած պրոչիւրովս եւ զոր ինձմէքիչ յետոյ Պ. Չերազ ալ առաջարկեց , չիրագործուեցաւ : Ուրիշ թերթեր , ինչպէս Շիրակն ու Լուսաբերը , առաջարկեցին գումարումը ընդհանուր Համաժողովի մը ուր մասնակցին հայ ազգին բոլոր հատուածներու (կղեր , մամուլ , հարուստներ , գործաւորներ , յեղափոխականներ , եւն.) ներկայացուցիչները . ոմանք ալ երկու գաղտնիքներ իրար խառնեցին . ըստ իս , պէտք չէ շփոթել երկու առաջարկները . ընդհանուր համաժողով մը կրնայ շատ օգտակար ըլլալ ազգին ոչ-կուսակցական տարրերը իրենց թրմութիւնէն արթնցնելու համար , եւ նպաստել վերոյիշեալ բաղձացուած «ընկերութեան» շուտափոյթ հիմնարկումին : Յեղ. կուսակցութեանց Համաժողովը տարբեր տեսակէտով կարեւոր արգիւնքներ կրնայ ունենալ : Մեր կուսակցական պատակումները մեր ամենամեծ չարիքներէն մին են . այդպիսի համաժողով մը կրնայ այդ չարիքը բառնալ : Մեծապէս աղետաբեր պիտի ըլլար մեր կուսակցութեանց անհամաձայն գործունէութիւնը՝ այն ծանր պատահականութիւն միջոցին որ վաղը կրնան իրականանալ : Իմ ըրած առաջարկիս՝ Դաշնակցականները պատասխանեցին լուռութեամբ , որ մերժման համարժէք էր : Վեր . Հնչակեան քանի մը կարեւոր գործիչներ ինձի պատասխանեցին թէ իրենց կուսակցութիւնը Միութեան հարցին մէջ ամէն զիջողութիւն յանձն առնելէ յետոյ Դաշնակցականներէն բացարձակ մերժում ընդունելով եւ նախատական ու անուանարկիչ ընթացք մը անսնելով անոնց կողմէ , եւ նոյն իսկ Սասունի վերջին տխուր դէպքերուն մէջ (երբ ա՛լ բաղխումը մօտալուտ էր եւ անխուսափելի) աջակցութեան առաջարկ ըրած եւ մերժողական պատասխան ստացած ըլլալով , այլ եւս անկարելի եւ աններելի կը համարէր նախաձեռնութիւն ստանձնել այսպիսի Համաժողովի մը գումարումը առաջարկելու Դաշնակցականներուն , բայց թէ պատրաստ էր սիրով մասնակցելու այդպիսի Համաժողովի մը՝ եթէ Դաշնակցականները որոշապէս հաւանութիւն յայտնէին : Պատասխանը տրամաբանական է եւ անտարկելի : Դաշնակցականներուն կը մնայ ուրեմն առնել առաջին քայլը : Ատի , ջնջելով ամբողջ տխուր անցեալի մը յիշատակը , մեծապէս պատուաբեր պիտի ըլլար իրենց համար , եւ անհունապէս ուրախառիթ՝ ազգին : Իսկ հին Հնչակեանները , այժմ

բոլորովին ընկերվարական ծրագրի մը յարած ըլլալով . իրենց անտարբերութիւնը կրնայ աստիճան մը բացատրուիլ , քանի որ նպատակը որուն կը ձգտին՝ հիմնովին տարբեր է այլ եւս Վեր. Հնչակեանց եւ Իսահակեաններուն գործունէութեան նպատակէն . Ոչ մէկուն իրաւունք չունինք արգելելու գործել իբր ընկերվարական եթէ իր համակրութիւնները տիրաբար այդ նպատակին կը ձգտին . միայն թէ , այն Հայերը որ այդ նպատակին համար կ'ուզին աշխատիլ , պէտք չէ յանուն Հայութեան գործելու ձեւն առնեն , պէտք չէ հակընդդէմ արարքներով խանգարեն հայ ազգայնական մարմիններու գործունէութիւնը . պէտք է որ գործին իրրեւ միջազգային ընկերվարականութեան զինուորներ :

Գալով ընդհանուր Համաժողովի մը ծրագրին , չեմ գիտեր ինչի՞ կը սպասեն արտասահմանի գաղութները՝ զայն իրագործելու համար : Այդ Համաժողովը շատոնց գումարուած կ'ըլլար եթէ ունենայինք Եւրոպայի Հայոց լուրջ , գործունեայ , ազդեցիկ առաջնորդը , որուն ի գուր կը սպասենք տարիներէ ի վեր . ան պիտի ուզէր հրաւիրազրբը , պիտի որոշէր թուականն ու ակըրը , պիտի « կազմակերպէր » Համաժողովը : Իրաւունքը առաջարկած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսէն խնդրել որ ինքն իսկ ուղղէ այդ հրաւերը . գաղափարը սիրուն է , բայց գործնական չ'երեւիր ինծի : Պատշաճ չեմ գտնիր որ Կաթողիկոսը ինքն իսկ հրաւեր ուղղէ քսան երեսուն հայ խումբերու , մարմիններու , գաղութներու . իրմէ կրնանք խնդրել որ կոնզակ մը ուղղէ այս կամ այն խումբին կամ անձնաւորութեան (1) , պաշտօն յանձնելով անոր՝ կազմակերպել Համաժողովը , կոնզակ մը որուն մէջ յայտնէ նաեւ իր զգացումն ու կարծիքը՝ ընդհանուր խորհրդակցութեան մը եւ ազգային քաղաքականութիւն մը որոշելու պէտքին մասին : Կ'առաջարկեմ որ բոլոր այն թերթները որ ազգային Համաժողովի մը գումարման պէտքն յայտնեցին , այս լուսատու խնդրագիր մը ուղղեն « Հայրիկին » : Սպասելով կոնզակին հասնելուն , անձնիւր գաղութի մէջ լաւ կ'ըլլար որ տեղական ժողովներ կազմուէին , նախապատրաստական խորհրդակցութիւններ կատարուէին , ընդհանուր Համաժողովին պատգամաւորներն ընտրուէին , « Հայկական Միութեան » հիմնարկութիւնը գիւրացնելու համար միջոցներ գտնելու մասին ջանքեր կատարուէին , — որով կոնզակին հասնելէն ամիս մը կամ ամիսուկէս յետոյ ամէն բան ձրատրաստ կ'ըլլար՝ առանց մասնակի կորուստի՝ Ընդհ. Համաժողովը գումարելու :

Ազգային Համաժողովի մը գումարման , « Հայկական Միութեան » մը հիմնարկութեան եւ Վեր. Հնչակեանց ու Իրօչակեանց միջեւ համաձայնութեան մը անհրաժեշտութիւնը ամէն

(1) Ամենայնարմար անձնաւորութիւնը՝ Պ. Մինաս Զբարգն է , որ արդէն ներքէն Վարժապետեանի եւ Իրիմեան Հայրիկի որոշմամբ քանիցս հայ ազգը ներկայացուցած է եւրոպական տերութեանց մօտ :

վէճէ վեր է . Ա՛լ ոճիր պիտի ըլլար ասին կորսնցնել : Պէտք է փութանք այդ պէտքերուն անմիջական ու լիակատար գոհացում տալ :

Փարիզ, Հոկտ. 1905 Ա. ՉՊԱՆԵԱՆ

Յ. Գ. Ռուս յեղափոխական շարժման յանկարծական եւ հոյակապօրէն ընդարձակագոր վերարձարժուածը , որուն լուրերը կը ստանանք վերջին պահուն , կը հաստատեն ինչ որ գրած էի յօդուածիս մէջ Ռուսիոյ վերանորոգման մասին : Այդ վերանորոգումը կատարուած իրողութիւն մըն է այս րոպէիս :

Չարը , տեղի տալով ռուս ժողովրդեան տիրական պահանջքին , ընդունած է ռուս ազատականներու ծրագրերը ամբողջապէս : « Բարենորոգումը , կը հեռագրէ Տէյլի Թեյեկիրաֆի Փեթերսպուրիի թղթակիցը , որ առաջինը եղաւ Սահմանադրութեան շնորհումի լուրն աշխարհիս աւետող , ամբողջական է եւ իրական . անձի եւ ընտկարանի անձեռնմխելիութիւն , ազատութիւն մամուլի , խզծի , ընկերակցութեան , ջրնջում բնաբարիչ միջոցներու , ստեղծում ճշմարիտ երեսփոխանական ժողովի մը՝ ազատ քուէարկութեան հիման վրայ : Բոլոր բարենորոգումները որ կը բղխին այս սկզբունքներէն , որոշապէս , հանդիսաւորապէս , անզանալիապէս շնորհուած են : Չարական ընթիւնը , այնպէս ինչպէս զայն ճանչցան ներկայ սերունդն ու նախորդ սերունդները , մնաած է այլ եւս , ու լուրովին նոր յատակագծի մը վրայ՝ ռուս ժողովուրդը նոր Տէրութիւն մը պիտի կառուցանէ : »

Նոյն լրագրի Վիեննայի թղթակիցը կը հեռագրէ հետեւեալ յաւելումովական ու մեզ համար մասնաւորապէս շահեկան տեղեկութիւնը : « Լաւատեղեակ շրջանակներու մէջ՝ այստեղ , այն կարծիքն ունին թէ ներկայ շնորհումներուն վրայ պիտի աւելնայ հաստատումը գաւառական մասնաւոր խորհրդարաններու , որոնք կարելի պիտի դարձնեն , կառավարութեան միջամտութեան բոլորովին անկախ , գաւառական ինքնավարութիւն մը՝ այլեւայլ ազգութեանց պահանջումներուն գոհացում տուող : »

Ապրի՛ ռուս ժողովուրդը : Այդ ժողովուրդը պիտի գիտնայ կենսունակ դարձնելու եւ մինչեւ իր գերագոյն զարգացումը հասցնել նորաստաց սահմանադրութիւնը , որ մեկնակէտ մըն է , բայց ամուր ու որոշ մեկնակէտ մը :

Հայութեան համար , այս մեծ դէպքը նոր թուականի մը բացումն է . մեր ազգային քաղաքականութիւնը վերջնական որոշութեամբ մը գծուած է այլ եւս :



Le Gérant : FRÉDÉRIC MAÇLER
Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱԹԵՐԹԻ,

որ լոյս է տեսնելու օգոստոս ամսի վերջերից՝ ռուսաց Ռուսիայի Վեստոկոսի օրաթերթի մեծութեամբ (սարեկան բաժանորդագիրը 7 ռ.):

« Արշալոյսի » նպատակն է լինելու ընթերցանութեան թարմ եւ օգտակար նիւթ մատակարարել հայ ընթերցողներին արծարծելով առաջադիմական լուսամիտ գաղափարներ, բացատրելով ընթացիկ կեանքի երեւոյթները, հասարակական պէս-պէս հոսանքներն ու հրատապ հարցերը եւ այդ բոլորի միջոցով նպաստել հայ ազգի զարգացմանն ու քաղաքակրթութեանը: Այլատակցելու հրաւիրուած են յայտնի հեղինակներ ու մասնագէտներ: Բացի դրանից խմբագրութիւնը լայն ասպարէզ է բանալու հայ երիտասարդութեան առջ, աստիճնապէս սեղ տալ թարմ եւ օգտակար ոյժերին:

« Արշալոյսի » ռենկնալու է հետեւեալ բաժինները .

1. Կառավարչական կարգադրութիւններ . 2. Առաջնորդողներ . 3. Հեւագիրներ — (Գործակալութեան եւ սեպհական) . 4. I. Ներքին տեսութիւն . — ա. Ներքին լուրեր եւ բ. Փոքրիկ յօդուածներ ընթացիկ հարցերի մասին : II. Արտաքին տեսութիւն . — ա. Յօդուածներ արտասահմանեան խոշոր դէպքերի մասին . բ. Թղթակցութիւններ արտասահմանից . գ. Քաղաքական լուրեր . դ. Հայկական կեանքի օր ըր . — Տեղեկութիւններ արտասահմանեան հայկական կեանքից, քաղուածքներ արտասահմանեան հայ թերթերից, հարկաւոր դէպքերում խմբագրական բացատրութիւններով ու նկատողութիւններով: III. Կովկասեան երանիլոն . — ա. Յօդուածներ զուտ գաւառական կեանքի սնտեսական, կրթական եւ այլ ընթացիկ կարիքների մասին. թղթակցութիւններ եւ լուրեր . բ. Թատրոն եւ Նրաճուրիլ . — Ամիտի տեսութիւններ թէ՛ տեղական (հայ եւ օտար) եւ թէ՛ գաւառական ներկայացումների, համերգների ու հանդէսների մասին: 5. Տեղական կեանք . — Լուրեր, տեղեկութիւններ ու յօդուածներ Թիֆլիզի կեանքից: 6. Ընկերութիւններ եւ Հիմնադրութիւններ . — ա. Հաշիւներ ու տեղեկութիւններ գիտական, դատաստանական, առեւտրական-արդիւնաբերական եւ հասարակական հիմնարկութիւնների մասին . բ. Գիտական նորութիւններ . — Ինքնուրոյն տեղեկութիւններ եւ թարգմանական քաղուածքներ օտար մամուլից: 7. Մամուլի տեսութիւն եւ Բնագրատիւն . — ա. Քաղուածքներ հայ եւ օտար մամուլից խմբագրական բացատրութիւններով ու նկատողութիւններով . բ. Գնահատական յօդուածներ . 8. Թղթակցութիւններ: 9. Մասնախօսութիւն . — ա. Բեցէնդիաներ հայերէն լեզուով լոյս տեսած գրքերի մասին . բ. Ամիտի տեղեկութիւններ օտար լեզուներով լոյս տեսած գրքերի մասին, մանաւանդ Հայերին, նրանց դրայիներին եւ մերձաւոր Արեւելքին վերաբերեալ . գ. Խմբագրատանն ստացուած գրքերի ցուցակը: 10—11. Բանասիրական . — ա. Ինքնուրոյն եւ թարգմանական վէպեր, մանրավէպեր, բանաստեղծութիւններ ու պատկերներ: Սօցիալական-սնտեսագիտական ամիտի յօդուածներ ու տեսութիւններ. գ. Գրական եւ դիտական տեսութիւններ. գ. Բժշկական եւ առողջապահական յօդուածներ . ե. Նրդիծարանական գրուածներ: Արդիւնագործութիւն եւ Վաճառականութիւն . — Տեսութիւններ եւ տեղեկութիւններ արդիւնագործութեան եւ վաճառականութեան մասին: Այլատաւոր դասակարգի կեանքն ու կարիքները: 12. Տեղեկատու . — ա. Մուրհակներ եւ բօրսա . բ. Օրացոյց . գ. Այսօր (տեղեկութիւններ ժողովների, հանդէսների եւ ներկայացումների մասին) . դ. Ճանապարհորդութիւն (տեղեկ. երկաթուղիների եւ նաւերի մասին): Խորհրդատու . — Սորհուրդներ եւ պատասխաններ ընթերցողների առաջարկած իրաւարանական-բժշկական հարցերին: Նամակներ խմբագրութեան . Պոստակ: 13. Յայտարարութիւններ: 14. Պատկերներ:

Բաժանորդագրութեան պայմանները

Թիֆլիզի եւ Ռուսաստանի համար

Արսասահմանի համար

4 ամիսը (սեպ.—յուն.)	2 ռ. 50 կոպ.
3 »	2 »
2 »	1 » 50 »
1 »	75 »



4 ամիսը	4 ռ.	9 մարկ	11 ֆրանկ
9 չլինոզ 2 դոլլար:			

Խմբագիր-Հրատարակիչ՝ Գ. Մելիք-Կարապետեան

Բաժանորդ գրուել կարելի է խմբագրատանը (Թիֆլիզ, Գանովսկայա փող. Նօ. 11) . օտար քաղաքներից պէտք է դիմել . Tiflis, Rédaction du Journal « Archalouis » .

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

Անանիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագրինն է տարեկան 10 ֆրանք (ձրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ, 2 տողար (Ամերիկա), 5 բուլլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (ձրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տողար (Ամերիկա), 3 բուլլ. (Ռուսիա) :

Յօգուած եւ բաժանորդագրին զրկել հետեւեալ հասցէին .

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

Բազու

Տիկին Մարի Սունգուկեանց

Ռուսձուղ

Պարոն Գառնիկ Մազմանեան

Գահիրէ

» Միհրան Աբգարեան

Ֆիլիպէ

» Թագուր Հինդլեան

Թեհրան

» Լեւոն Բարայեանց

(Տեսուչ Թեհրանի Հայոց երկսեռ դպրոցներուն)

Նիւ-Եօրք

» Տ. Մտաճեան

Ուօքսկրն

» Գարրիէլ Մուչէզեան

Իսթ Բէմպրիճ

» Կ. Մալսասեան

Իսթ Ուօթրրթաուն

» Նշան Մինասեան

Սէնթրըլ Ֆօլս

» Ս. Մուրատեան

Չիքսկօ

» Յ. Արոզեան

Նեչուէ

» Մինաս Գարրիէլեան

Ուսթրր

» Գ. Նալպանտեան

Ֆրէզնօ

» Մ. Չարաֆեան

Դաւրէժ

» Մամաջանեան

Պաթուժ

» Ս. Սաչաքլեան

Նիւ Պրիթէյն

» Աւագ Կարապետեան

Փրովիտէնս

» Սեդրակ Կիրակոսեան

Թիֆլիս (եւ շրջակայք)

(Վանքի պերիուլով, տուն Յակոբջան-սանի, N. 15)